



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

491.99-80

8 - 37

9394

2010

ՀԱՅԹԵՐՑԱՐԱՆ

Կ Պ Ե Տ Ո Ա Խ Ո Ո Ւ Մ Ե Ա Ր Ո Վ Ո Յ Ո Զ Ո Ջ Ի Բ Ո

Յօրինեցած

Ա. Տէր Յ Ա Կ Ո Բ Ե Ա Ն

Մ Ա Մ Ա Խ Ո Ջ Ի Բ Ո

Հ Ա Տ Ը Ն Ե Ա Ն Ե Վ Ե Ա Բ Ե Վ

Տ Փ Խ Ե Ս Ո

1876

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԿՈՎ.ԿԱՍԵԱՆ ԳՐԱՎ.ԱՃԱՌԱՆՈՑԻ (Զ. ԳՐԻԳՈՐՅԱՆ Եւ ընկ.)

1	Տէր Կետնդեանց Մայրենի լեզու մասն առաջին դ. տիպ.	—	35
2	— — — մասն երկրորդ թ. տիպ.	—	35
3	Տէր Յակորեանց Ընթերցարան մասն ա. թ. տիպ.	—	25
4	— — Դասագիրք Ռուսաց լեզուի դ. տիպ.	—	60
5	— — Ազօթագիրք ծխական դպրոցների համար թ. տ.	—	7
6	— — Գործնական Թուարանութիւն.	—	20
7	Ազայեանց ուսումն մայր. լեզ. (Դասագիրք եւ մնտողիւայ) Խրաբ.	—	20
8	Կուկասեանց Ընթերցարան	—	45
9	Պարասանեան Գործնական ըերականութիւն մ. ա. թ. տիպ.	1	—
10	— — — — — մասն. թ.	—	60
11	Մայրենի լեզուի ըերականութիւնը (աշխարհաբառ)	—	50
12	Տէտէեան Քերականութիւն Հայերէն լեզուի	—	75
13	— Ընթերցարան պատկերագրդ	—	55
14	Սիմօնեանց Պ. Սրբագան պատմ. հին և նոր կտակ. խրաբանցիրը.	—	60
15	— Մ. Եւսուչեւակի Թուարանական ինալիքներ մ. ա. թ. տ.	—	40
16	— — — — — մ. թ. թ. տ.	—	50
17	Օրբելի Խախաչաւիդ կրօնագիտութեան մ. ա. թ. տիպ.	—	30
18	— — — — — մասն թ.	—	50
19	— Համառուս պատմ. հին և նոր կտակարանի թ. տիպ.	—	30
20	Մակր Հոսառապատմ	—	25
21	— Մանր Աւանդն Սրբագան պատմութեան Աւետարանի . .	—	40
22	— Մանր Աւանդն Ազգային եկեղեցական պատմութեան . .	—	25
23	— Հրաննազ Քրիստոնեական հասառոյ	—	75
24	— Քրիստոնապատմ	—	50
25	Արվենանց Գ. Հայոց պատմութիւն	—	75
26	Տէր Սարգսեան Գծագրութիւն	—	60
27	Պարասանեան Ֆրանկութեան այրբենարան	—	30
28	Եղիշէ (Ա. Պ. տիպ)	—	60
29	— (Մօսկվայի տիպ)	—	90
30	Ազօթագիրք ընդարձակ և պատկերագրդ, կազմած	—	50
31	Հօֆֆման բարեկամութեան զո՞ներ	—	60
32	Ֆրանկին Հարատանալու միջոց	—	10
33	Բորգեր Համառուս աշխարհագրութիւն Խարդ. Սաքր.	—	25
34	Բարիուգարեանց Ալինէմ Թէլ	—	1
35	Միանարեանց Քնար Հայկական	—	1 30
36	Տէտէեան Աւմբք գրասիրութեան	—	60
37	Վ.իզթօր Հիւկո Բշտունիւ 10 հասոր	—	12
38	— — Նոյեր-Տամ Փարփի 3 հասոր	—	3 30
39	Վ.օթր-Արօթ Խամոնէ 3 հասոր	—	2 50
40	Վ.լոյց Հայկական նամականի	—	1 20
41	Ֆէյշ Ալլարտ Արքասաարդի մը վեպը	—	80
42	Եմիտ Ազնէս կամ փորբիկ վանահայր աղջիկը	—	40
43	— Վէօրդ Աւաշինզմն	—	50
44	Հազար և մէկ զիշերներ 6. հասոր	—	6 50
45	Լարտի. Սարգսն յԱմերիկայ	—	1
46	Ժիլ-Վ.լըն Աշխարհի շրջանը ութանու օրուայ մէջ	—	1 20

Գերացիկ պարբեր թիվներում վաճառվում են մի մրցայի Գրիգորեանի և մի սահմանում, որ կարող են դիմել դատավոներից խափանաց հասկով:

Казанскія книжныя торговыя въ Тифлісѣ.

491.99-8

CD-3

ՀՆԹԵՐՑԱՐԱՆ

498

259-55

25 ՚Ի ՊԵՏՍ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱՑ ԱԶԳԻՆ

Sophia

Ն. ՏԵՐ ՅԱԿՈԲԵԱՆ



ՀԱՏԵԿԱՆ ԿԵՐՊ

ՏՊՒԽՎ

2002

Ի ՏՊ. ԳԼԽԱԽՈՐ ԿԱՌԵՎԱՐՈՒԹԵԱՆ ՓՈԽԱՐՔԱՑԻՆ ԿՈՎ ԿԱՌՈՒ

1876

11748

ԱՐԴԱՎՈՐՅԱ

ՀՀ-ՀՀ

Дозволено цензурою. Тифлисъ, 29 Января 1876 г.

ՆՈՐԻՆ ԳԵՐԱՊԱՏՈՒԽԵԱՆ

ԱՌԱԿԱՆԻՐ ԸՆԸՆԹԱՐԴԻՆ ՄՐՑԱՈՅ

ՏԵՍՈՒ ԱԾՐԳԱՒ

ՄՐԲ.ԶԵՆ ԸՐՎ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԶԱԼԱՅԵՎ

՚ի ՑԻՇԱՏԱԿ ՀՈԳԻՈՑ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՄՆՈՂԱՑ ՆՈՐԱ

ՅՈՎՃԵՆԵՍԻ ԵՒ ՀՈՒՓՈՒՄԵՒ

ՆՈՒԻՐԵ ՅՈՐԻՆ 0 7. 6

ՅԵՒԿ ՆԻՒԹՈՒՑ (*)

ՄԱՍՆ Ա. Ա. ԶԻՒՆ

ԸՆՏԸՆԵԿԵՆ ԿԵԸՆՔ:

Թէ ինչ են անում ուսումնարանումը	1
Տանը	2
* Որբ մանուկ	3
Ուսումն ամենիս հարկաւոր է	—
Աղօթք մանկանց	5
Մեր դասատունը	—
* Վարդ եւ մանուշակ	7
Թուղթ եւ գիրք	8
Խնդիր սրամիտ տղայոց համար	9
* Կիրակամուտ	—
Սեղան եւ գիրք (համեմատութիւն)	10
Չու թռչնոց	11
* Ծիծեռնակ (երգ պանդուխտ պատանեկի):—Գ. Դողոխեանց .	12
Մեր տոռնը	14
* Առաւօտեան երգ	15
Մեր ընտանիքը	16
* Օրօրք մանկան:—Ա. Գնոնի	17
Խմ մանկութեան օրերը	19
* Երգ տղայութեան:—Խ. Արովեանց	20
Մեր կերակուրք, ըմպելիքը եւ հաղուստը	21
* Երգ աշխատասիրի	23
Չմեռն (մայրական խրատ)	24
* Աստուած մեր Հայրն է	—
Ծնունդն ու Չրօհնէքը (մամկական կեանիք)	25

(*) Առաջեն աստղանիշ ունեցողներն ուսանաւորներ են, քաղեալ զանազան հեղինակութիւններից տեղ տեղ փոքր ինչ փոփոխութեամբ յարմարութեան եւ դիւրութեան համար, որոյ մասին կը յուսամք որ հեղինակներն ներողամիտ լինին:

Առաւտեան աղօթք	26
* Երազ. Ես լսեցի մի անուշ ծայր:—Ս. Շահապիգեանց	27
Մեծ պահքն ու Զատիկը (մանկական կեանքից)	28
* Տարաբախտ Հայ մանուկը:—Խաչատուր Քեշիշեանց	30
Ժամասէր երեխայ.	—
Երեկոյեան աղօթք.	32
Եկեղեցի (Եկեղեցւոյ եւ հասարակ տան զանազանութիւնը).	33
* Երգ բրիստոնեայ մանկանց	—
Համբարձումն ու վիճակ (մանկական կեանքից).	34
* Վիճակի երգեր (ջան գիւղում).	35
* Պսակիներ (մանկական խաղ):—Թարգ. Ս. Պալասանեան	36
Քաղաք եւ զիւղ (համեմատութիւն)	38
* Առաւտեան երգ շինականաց:—Ո. Պատկանեան	40
Խստափրտ տղայ.	—
Բարեսիրտ երեխայ	42
Նամակ փոքրիկ Արամի վերայ իւր հօրաքոյրից.	44
* Առ մայրն Հայատուն:—Օրիորդ Շողակաթ Տէր-Աւետիսեան	—
Կամապաշտութիւն.	45
Պատրաստակամ եւ եխայ	46
Ստախօս տղայ.	47
* Նախանձոտ քոյր. Վեզնից շատ առաջ կար մի թագաւոր:—Ո. Պատկանեան.	—
Շրջագայութիւն մօր իւր փոքրիկ դստեր հետ.	49
* Ունան (առալ):—Խոփով. Թարգ. Գարրիէլ եպիսկոպոս Այլագեան	54
Մեծ սեղան (Աստուծոյ խնամքը արարածոց համար).	56
Աստուծոյ մեծութիւնը իւր գործքերիցն է երեւում	58
Ամառուայ շող (անտեղի տրտունջ).	59
* Որդեկորոյս ծնող:—Ն. Բուղազեանց	60
Արեւն ու անձրեւ (երեխայական դատողութիւն).	—
Ինչպէս է դոյանում անձրեւը.	61
Արեգակն ու լրասին (սխալ դատողութիւն տղայոց).	63
Լուսին պատկեր մարդկային կենաց	64
* Վայր ընկող աստղեր:—Թարգ. Մ. Նալբանեան	65
Ներկայ եւ ապադայ (խրատ ծերունի հօր)	69
* Ինձ համար չէ (զինուորի երգ):—Թարգ. Ք. Պատկանեան	70

Պատիւ տուր ծնողացգ եւ սիրէ նոցա	71
Սիրէ քո հայրենիքդ եւ քո աղզդ	72
* Հայրենիք սրբազան (երգ). Գերի Յոյն բանտումը	73
* Իմ հայրենիք թշուառ, անտէր. Խտալացի աղջկայ երգ 4859 Թուականից:—Մ. Նալբանդեան.	74
Ուսիր առաջ քո մայրենի լեզուդ	77
* Մայրենի լեզու, մայրենի բարբառ:—Թարգ. Ս. Նալբանեան	—
Աշխատափրութիւն	78
* Երգ զարթուցանելոյ (օրօրոցի երգ):—Յովհաննէս Մուշեղեանց Ժուժկալութիւն.	80
Գթութիւն եւ ողորմածութիւն.	81
Աղքատ:—Թարգ. Մ. Նալբանդեան	82
Աղօթք մանկանց	83
* Երգ մեռանող հայրենասիրի:—Ս. Շահապիգեանց.	86
Սուրբ Գիրքն ու Եկեղեցի.	87

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԸՆՏԵԿԵԿ ԿԵԸՆՔ

ԹԷ ԻՆՉ ԵՆ ԱՆՈՒՄ ՈԽՍՈՒՄՆԱԲԱՆՈՒՄԸ

Արամը գնաց ուսումնարան, իսկ նորա քոյր Մարիամը
մնաց տանը: Երբոր եղբայրը վերադարձաւ տուն, քոյրը
հարցրեց նորան՝ «զուք ի՞նչ էք անում ուսումնարանումը»
Եղբայրն էլ պատմեց ինչ որ տեսել էր ու գիտեր:
«Ծակերտները ժողովւում են ասաց ուսումնարան, նըս-
տում են իւրեանց տեղերը. յետոյ դալիս է վարժապետը,
հարցնում է նոցա դասը, նոքա էլ պատասխանում են:
Երբոր վարժապետը սկսում է պատմել նոր դասը՝ նոքա
ուշադրութեամբ լսում են»:

«Ծակերտաց առաջին կան երկայն գրասեղաններ,
որոց վերայ նոքա գնելով իւրեանց գրքերն ու տետրակ-
ները կարդում են կամ գրում են: Երբոր դասը վերջա-
նում է, նոքա դուրս են գնում ու խաղում ուսումնարանի
սրահումը կամ բակումը»:

Ու՞ր գնաց Արամը: Նորա քոյրն էլ գնաց ուսումնարան թէ ոչ:
ի՞նչ էր նորա քրոջ անունը: Երբոր Մարիամը վերադարձաւ ուսումնարա-
նից, քոյրն ինչ հարցրեց նորան: Իսկ նա ինչ պատասխանեց: Ի՞նչ է

անում վարժապետը ուսումնաբանումը: Խսկ աշակերտները: — Կրկնեցէք ձեր բառերով այս պատմութիւնն ու զրեցէք:

Ասցէք, ինչպէս են շնուած այս բառերը՝ դրասեղան, ուշադրութիւն: Ի՞նչ է «սրահ» եւ ինչ է «բակը»: Ամենայն տուն էլ սրահ կամ բակ ունենում է, թէ ոչ:

Տ Ա. Ն Է

Վեղ համար ո՞րտեղ է լաւ, հարցրեց միանդամ հայրն իւր փոքրիկ Ծրամին, «տանը թէ ուսումնաբանումը»:

— «Ուսումնաբանումը լաւ է», պատասխանեց Ծրամը, «բայց տանն աւելի լաւ է: Տանն ես ունիմ հայր՝ մայր ու քոյր. նոքա ինձ միշտ սիրում են ու փաղաքշում: Տանն ինձ ամենայն բան ծանօթ է, թէ սենեակները՝ թէ պահարանները և թէ մառանը, որտեղ մայրս պահպանում է քաղցրաւենիք ու անոյշ մրգերս:

«Տանն ես ազատ ու արձակ խաղում եմ՝ թէ սենեակներումը, թէ բակումը և թէ պարտէզումը, ուր գեղեցիկ ծաղիկներ կան ու սիրուն թիթեռնեկներ, որոց հետ ուրախ ու անհոգ ժամեր եմ անցուցանում: Տանն ինձ պատիժ չկայ՝ հայրս ու մայրս ինձ շատ են սիրում, խսկ տատս՝ էլ խօսք չկայ, ինձ այնքան է սիրում, որ ամենայն ուղածս խկոյն կատարում է, վատ օրերին չէ թողում, որ ուսումնաբան գնամ, և եթէ տանը շատ եմ կարդում, միշտ ասում է ինձ՝ շատ մի՛ կարդար, ո՛րդիս, գլուխդ կցաւի»

Ի՞նչ հարցրեց հայրն իւր փոքրիկ որդուն: Ի՞նչ էր նորա անունը: Ի՞նչ պատասխանեց որդին: Խնջու Սրամի համար տանը լաւ է, քան թէ ուսումնաբանումը: Խսկ թեղ համար որտեղ է լաւ: Ովկէր Սրամին ամենից աւելի սիրում: Ի՞նչ էր ասում նորան տատը, երբոր նա տանը շատ էր կարդում: Քո տատն էլ կամ մայրդ ինդ այդպէս է ասում, թէ ոչ: — Կրկնեցէք բոլոր պատմութիւնն ու զրեցէք:

Ասցէք այս բառերի նշանակութիւնը՝ փաղաքել, սենեակ, մառան, քաղցրաւենիք, պարտէզ, անհոգ ժամեր, թիթեռնիկ, միշտ, խկոյն, պահարան, միրդ:

Ի՞նչ կնշանակէ «վատ օրեր» կամ թէ «վատ եղանակներ»: Խսկ «սեւ օրեր» ինչ կնշանակէ: Ի՞նչ կնշանակէ այս առածը, «բարեկամը սեւ օրի համար է»:

ՈՐԲ ՄԱՆՈՒԿ

Պայծառ արեւը	Ամէն երեխայ
Արդէն մայր մտաւ,	Մօր գիրկը մտաւ:
Լուսինն էլ շուտով	Միայն խեղճ որբը
Գնաց թաք կացաւ,	Չունի հայր ու մայր,
Փայլուն աստղերը	Չունի բարեկամ,
Լմկով ծածկուեցան.	Ու քոյր ու եղբայր.
Եւ ցուրտ ու խաւար	Հնտէր մնացած
Գիշեր էր աշնան:	Հստուծոյ կամքին՝
Ամէն մարդ գնաց	Խեղճը քնած է
Խւր տունը հասաւ,	Փողոցի միջնի:

Ում ենք ասում «որբ»: Ի՞նչ վիճակի մէջ է լինում որբ մանուկը: Համեմատեցէք ձեր վիճակը նորա վիճակի հետ եւ ասացէք՝ ինչ զնազանութիւն ունի:

Ի՞նչ կնշանակէ «պայծառ արեւ»: Արեւ բառը ուրիշ էլ ինչ կնշանակէ: (Կեանը): Ուրեմն ինչ կնշանակեն այս խօսքերս՝ «արեւս վկայ, արեւդ ապրի, քեզ արեւշատութիւն լինի»:

ՈՒՍՈՒՄՆ ԱՄԵՆԻՍ ՀԱՐԿԱԿՈՐ Է

Խմ հասակակիցները տղայ (երեխայ) են կոչւում, ուրեմն ես էլ տղայ եմ: Տղայքը շատ բան չեն իմանում, ուստի պէտք է սովորին, կրթուին ու դաստիարակուին, որ խելացի ու սիրելի լինին և մարդու կարդ անցկենան: Ինձ ուսում են տալիս ուսումնաբանումը, և քանի որ ուսում եմ առնում՝ ես աշակերտ եմ: Ուսումնաբանումն

ինձ ուսում են տալիս ու դաստիարակում վարժապետ-ները. ուրեմն պարտական եմ՝ ողա հնագանդ ու երախտա-գէտ լինել:

Լաւ աշակերտն ուշադրութեամբ պէտք է լսէ վարժա-պետի ասածները, և իւր բոլոր ուշքն ու միտքը պէտք է կարդալու և ուսման վերայ դարձնէ: Լաւ աշակերտը պէտք է սիրով գնայ ուսումնարան, աշխատասէր լինի՝ կարգին՝ մաքուր՝ հանդարտ՝ խելօք և ամենայն ճշգու-թեամբ կատարէ իւր պարտքը, լաւ իմանալով՝ որ բոլորն ինչ որ անում է, իւր օգտի համար է և ոչ թէ ուրիշի: Ինչ աշակերտ որ ուսումից փախչում է, ծուլութիւն է անում, անհնագանդ է ու ինքնակամ, նա կմնայ տղէտ ու անխելք՝ ինչպէս տանու անսառնները, որ մտաց զարգացումն ու յառաջադրդիմութիւն չունին:

Ուսման սկիզբը թէ և փոքր ինչ դժուար է, ինչպէս և ամէն բանի սկիզբը, բայց զիտեմ որ համբերութեամբ ու աշխատութեամբ ամենայն նեղութեանց ու դժուարու-թեանց կյաղթեմ, և յետոյ ամենայն բան ինձ համար հեշտ ու թեթև կլինի: Մարդս աշխատութիւնից չպէտք է վախի. մենք աշխատելու համար ենք ծնուել, չաշխատողն ու ծոյլն արժանի չէ՝ որ ապրի:

Տղային ինչն համար են ուսումնարան գնում: Ուսումնարանումն ով է նոցա ուսուցանում ու դաստիարակում: Ամենայն տղայի համար էլ ուսումը հարկանք է, թէ ոչ: Ուսումից ինչ օգուտ են ստանում տղայը: Ընդով են զանազանում լաւ ու վատ աշակերտ-ները: Ուսման սկիզբը դժուար է թէ հեշտ: Ընդով կարելի է յաղ-թել այդ դժուարութեանը:—կրկնեցէր մեր խօսքերով բոլոր պատ-մութիւնը:

Ասացէք այս բառերի նշանակութիւնը—կրթութիւն, դաստիարա-կութիւն, ճշղութիւն, զարգացումն: Ի՞նչպէս են կազմուել հասա-կալից, երախտազէտ եւ յառաջադրիմութիւն բառերն եւ ինչ կնշա-նակն: Ի՞նչ զանազանութիւն ունին «մանուկ», երեխայ եւ տղայ՝ բառերը:

Ա. Դ. Օ Թ. Ք Մ Ա. Ն Կ Ա. Ն Ց

Ամէն տեղ ներկայ ես դու, Աստուած իմ: ամէն տեղ գտնւում ես՝ լուսոյ, խաւարի ու բոլոր աշխարհիս մէջ: Մի և նոյն ժամանակը, որ իմ խոնարհ աղօթքս լսում ես, լսում ես նաև հրեշտակաց քաղցրաձայն երգերն ու փառարանութիւնները: Դու, ուրեմն, որ Աստուած ես հրեշտակաց և իմ, որ մեր ձայնը լսում ես, ինչպէս նաև թռչնոց երգն ու ծաղկանց վերայ թռչուտող մեղսների բզզանքը, ընդունէ նաև իմ աղօթքս ու պաղատանքս, չնորհք տուր ինձ, որ ուսմանս աշխատեմ, տղիտութեան խաւարից հեռանամ, քեզ՝ ի բոլոր սրտէ սիրեմ և քո կամքդ կատարեմ: միտք տուր ինձ, որ երբէք չմոռա-նամ՝ որ ամենատես աչքի ինձ վերայ միշտ նայում է, և ամէն ժամանակ առաջեկ եղածի պէս շարժիմ ու աշխա-տեմ բարի խորհել ու բարի գործել:

Ամէն ժամանակ զուր Աստուծոյ աղօթք անում էք թէ ոչ: Ոյք չեն աղօթք անում Աստուծոյ, չար մարդիկ թէ բարի: Երբ եւ ինչ տեղ կարելի է աղօթք անել Աստուծոյն:

Ասացէք այս բառերի միտքը—ներկայ, մեղու, բզզանք, պաղա-տանք, տղիտութիւն, նայել, խորհել:

Սովորեցէք բերան այս աղօթքը:

ՄԵՐ ԴԱՍԱՑՈՒԻՆԸ

Մեր դասատունը մի մեծ սենեակ է: Այս սենեակն ունի առաստաղ՝ յատակ՝ չորս անկիւն ու չորս պատ, որոց երկուսն երկայն են ու երկուաը կարճ: Երկայն պատերը միմեանց հանդէապ են ու իրար հաւասար. կարճ պատերը նոյնպէս միմեանց հանդէապն են ու հաւասար: Մեր դասատան առաստաղը ներկած է սպիտակ, յատակը

տախտակամած է ու ներկած գեղին, իսկ պատերը սուաղած են կրով ու կանաչ ներկած:

Պատերումը շինած են պատուհաններ ու դռներ:
Պատուհանները լուսոյ համար են, իսկ դռները՝ դուրս ու ներս անելու համար: **Մեր դասատանը չորս պատուհան կայ ու երկու դռուր:** **Իոլոր պատուհանները միմեանց հաւասար են. դռներն էլ նոյնպէս հաւասար են միմեանց:**

Դասատան մէջ տեղը դրած են աշակերտաց համար նստարաններ ու զրասեղաններ: **Պրասեղանների առաջին դրած է մէկ փոքրիկ սեղան և մէկ աթոռ վարժապետի համար:** **Իոլոր զրասեղաններն ու նստարաններն շինած են փայտից ու ներկած գեղին, բայց կան մի քանի հին զրասեղաններ, որ ներկած են սև:** **Պրասեղանների միջին շինած են արկեղներ՝ զրեանքն ու թղթերը պահելու համար:**

Դասատան մէկ անկիւնումը դրած է զրատախտակը և նորա մօտ կաւիճն ու սպունզը: **Կաւիճը կակուլ ու սպիտակ քար է, որով գրումեն զրատախտակի վերայ.** **Իսկ սպունզը տախտակի վերայ գրածը ջնջելու կամ սրբելու համար է:**

Նկարագրեցք սոյնպէս մեր դասատոնը եւ ասացէք, մեծ սենակ է թէ; փոքր, քանի դուռն ոնի եւ քանի պատուհան: Ընչից են շինած դռներն ու պատուհանները, եւ ընչի համար ենն որա: Ի՞նչ դոյն են ներկած պատերը, առաստաղը եւ յատակը: Քանի զրասեղան կայ աշակերտաց համար մեր դասատանը, եւ ինչ դոյն են նորա ներկած: Զեր դասատան էլ զրատախտակ կայ թէ:— Գրեցէք, ինչպէս որ պատմեցիր կամ նկարագրեցիր մեր դասատոնը:

Ասացէք այս բառերի նշանակութիւնը — առաստաղ, յատակ, անկիւն, հանդէպ, տախտակամած, սուաղած, կիր, ապակի, արկղ, սպունզ, կաւիճ:

Ի՞նչպէս են շինուած այս բառերը — դասատոն, զրատախտակ, պատուհան, տախտակամած: Պատուհան բառի տեղ մենք ուրիշ էլ ինչ բառ ենք դորձ ածում: (Լուսամուտ): Ի՞նչպէս է շինուած այդ բառը:

Վ. Ա. Բ. Դ. Ե. Խ. Մ. Ա. Ն. Ո. Խ. Շ. Ա. Կ.

Պարնան սկզբին վարդը գեղեցիկ բացուել էր դաշտում, և բարձր թփի վերայ ծածանում էր օդի մէջ: **Այս չորս կողմն ու տեսաւ խեղձ մանուշակին թփերի տակին ծածկուած:**

— «**Խնչո՞ւ ես այդպէս թաք կենում, ասայ նորան պարձենալով վարդը, «գուրս արի ծաղկիր այս բաց տեղը, որ քեզ էլ տեսնեն մարդիկ ու զուարձանանան»:**

— «**Ճամեստութիւնն է պահանջում պատասխանեց խոնարհութեամբ մանուշակը, «ցանկացողք կարող են ինձ այս տեղ էլ գտնել:»**

Մանուշակ

Եղնիւ՝ սիրուն մանուշակ, Տուր մեղ ծաղկիկ գեղեցիկ,
Ճամեստութեան օրինակ, Քո քնքոյշ հոտ անուշեկ:

Վարդ

Վանաչ դաշտերում **Իայց չէ ոչ մինը**
Եւ այդիներում **Վարդի նմանը.**
Օպղիկներ կան շատ. **Կա է բնութեան զարդ:**

Ի՞նչ կնշանակէ «ծածանիլ». իսկ «զուարձանալ» ինչ կնշանակէ: Ի՞նչ զանազանութիւն ունին «Թուլին» ու «ծառը»: Համեմատեցէք վարդը մանուշակի հետ եւ ասացէք, ինչ նմանութիւն ունին նորա եւ ինչ զանազանութիւն: (Վարդը նման է մանուշակին, որովհետեւ երկուսն էլ ծաղիկ են, երկուսն էլ լաւ հոտ ունին ու լաւ գոյն, երկուսն էլ գուրս են զալիս ու սնունդ են առնում գետնիցը, եւ չեն կարող մնալ զալիս առանց ջրի: Երկուսն էլ ունին արարամատ, ցողուն (բուն, ծեղ) ու տերեւ: Երկուսն էլ ծրամ են, ծաղկում ու փոքր ժամանակից յետոյ թառամում, եւ ապին: Բայց վարդը զանազանում է մանուշակից իւր հոտովը, մեծութեամբն ու ծեւովք: Վարդը ըստ մեծի մասին լինումէ բաց կարմիր, իսկ մանուշակը ծիրանի: Վարդը փուշ ունի, իսկ մանուշակն ոչ, եւ այն:

Թ Ա Խ Դ Թ Ե Խ Գ Ի Ւ Ք

Ուր տետրակիները կարած են թղթից: **Ա**յս թուղթը՝
որ ես ունիմ, սպիտակ է. բայց կան և զանազան գունի
թղթեր՝ կարմիր, դեղին, կանաչ, կապոյտ, սև և այլն:
Թուղթը շնուռմ են կտաւի հին ու անպէտք կտորտանքից,
որ հաւաքում ածում են պղնձի մէջ ու եփում այնքան,
մինչեւ որ շփոթի է գառնում. և յետոյ բարակ սփռում են,
մամուլով ճնշում ու չորացնում: **Ե**թէ կամենում են որ
թուղթը գունաւոր լինի, օրինակ՝ կարմիր կամ դեղին,
շփոթի մէջն ածում են կարմիր կամ դեղին ներկ: **Ո**ւր
կողմերը թուղթ չեն շնուռմ; այլ բերում են ուրիշ տեղերից:

Թուղթը մեզ հարկաւոր է զրելու՝ տպելու և կամ
բան փաթաթելու համար. **Թ**ողթի վերայ դրում են մա-
տիտով կամ զրչով ու թանաքով: Հին ժամանակը թուղթ
չկար, այլ թղթի տեղ գործ էին ածում մագաղաթ, որ
շատ թանգ էր ու գժուար շնելու: **Մ**ագաղաթը շնուռմ
են ոչսարի, այծի կամ իշխ կաշուց: **Մ**ագաղաթը
թղթից հաստ է լինում. բայց կայ և այնպիսի մագա-
ղաթ, որ ամենանուրբ թղթի պէս բարակ է ու աղնիւ:

Գիրքը տպում են տպարանումք: Յառաջ զիրք շնողը
կամ հեղինակը գրում է թղթի վերայ, յետոյ տալիս է
տպելու: **Տ**պելուց յետոյ այն մէկ օրինակը կամ զիրքը
դառնում է հազարաւոր գրքեր: **Տ**պած թերթերը կազմա-
րարը կարում է միասին և կազմում է, որ չցրուին: **Գ**իրքը
կարդալու համար է: **Գ**րքի մէջ շատ թերթեր կան. ամե-
նայն թերթ ունի երկու երես: **Ա**յն երեսին շատ շարքեր
կամ տողեր կան, և ամէն տողի մէջ շատ տառեր կամ
գրեր: **Գ**րերը լինումեն սովորաբար երկու տեսակ՝ դլա-
գիր և մանրագիր:

Ընցից ենք կարում մեր տետրակիները: Թուղթն ինչ դունի է
լինում: Թուղթն ընցից են շնուռմ եւ բնչպէս: Թուղթը մեզ ընցի-

համար է հարկաւոր: Թղթի վերայ ընջով ենք դրում: Հին ժամա-
նակն ինչ էին զործ ածում թղթի տեղ: Մագաղաթն ընչից են
շնուռմ: Գիրքն որտեղ են տպում եւ բնչպէս: Ո՞ւմ ենք ասում
հեղինակ: Գիրքն ընչից համար են կարում ու կազմում: Ո՞վ է
կազմում: Քո զրքի մէջ քանի տեսակ զրեր կամ տառեր կան:—
Կրկնէ: բոլոր պատմութիւնն ու զրէ:

Ասացէք այս բառերի միտքը—մնշել, մամուլ, նկարած, մա-
տիտ, մագաղաթ, տող, հեղինակ:

ԽՆԴԻՐ ՍՐԱՄԻՏ ՏՂԱՅՈՅ ՀԱՄԱՐ:

Տիգրան ու **Վ**րշակ հովիւները մէկ երեկոյ, երբ իւ-
րեանց փոքրիկ հօտերը առած վերադառնում էին տուն,
միմեանց պատահեցան: **Տ**իգրանը **Վ**րշակի ոչխարների
վերայ նայելով ասաց. «Պիտես, **Վ**րշակ եղքայր, քեզ
ի՞նչ պէտք է առաջարկեմ: քո ոչխարներից մէկն ինձ
տուր, այն ժամանակ իմ ոչխարներա քո ոչխարներիցդ
երկու անգամ աւելի կլինին»: **Վ**րշակը **Տ**իգրանի ոչխար-
ների վերայ նայելուց ու փոքր ինչ մտածելուց յետոյ՝
ասաց. «**Ա**յդպէս չէ, **Տ**իգրան եղքայր, ես քեզ աւելի
լաւ ու արդար առաջարկութիւն կանեմ: տուր ինձ քո
ոչխարներիցդ մէկը, այն ժամանակ երկուսիս հօտերը
հաւասար կլինին»: **Տ**մացէք, թէ իւրաքանչեւր հովիւ-
քանի՛ ոչխար ունէր:

Կ Ի Բ Ա Կ Ա Մ Ո Ւ Տ

Լրիկնաժամին գանգակը տուին,
Խարեպաշտ մարդկանց ժամ հրաւիրեցին.
Ա աղը կիւրակէ—**Վ**ստուծոյ օրն է,
Ա երջացրէք գործերդ, հանգստեան ժամ է»

Լսեց գիւղացին դաշտումն այս ձայնը,
Դէպի տուն քշեց եղն ու դութանը:
Գիւղական փօքրիկ պարզ եկեղեցին
Ծարդիկը լցուած աղօժում էին.
Երդար վաստակով զընած մոմերը
Եստեղց պէս պայծառ փայլփայլում էին:

Ի՞նչպէս են շինուել «իրիկնաժամ» եւ «կիրակամուտ» բառերը:
Ի՞նչ կնշանակէ «ժամ»: Ուրեմն ինչ կնշանակեն եւ ինչպէս են
շինուած «ժամապիրք» եւ «ժամացոյց» բառերը:

Ի՞նչ կնշանակէ «գիւղական պարզ եկեղեցի»: Խսկ եթէ ասենք
«պարզ երկինք» կամ «պարզ ջուր»: Մնան ինչ կ'նշանակէ: Ի՞նչ
կ'նշանակէ «արդար վաստակ»: Խսկ «արևան քրտինքով վաստակած»
ինչ կ'նշանակէ: Ո՞րն է անարդար վաստակը: Ո՞ւմ ենք ասում
բարեպաշտ: Ինչն համար է կիրակէն կոչում «Աստուծոյ օր»:

ՍԵՂԱՆ ԵՒ ԳԻՐՔ

(Համեմատութիւն)

«Եմանութիւն: Աեղանը ունի քառանկիւնի ձեւ, զիրքը
նոյնպէս ունի քառանկիւնի ձեւ, Աեղանն ու գիրքը՝ երկուսն
էլ ունին ծանրութիւն: Թէ սեղանը և թէ զիրքը ունին
երկայնութիւն՝ լայնութիւն ու հաստութիւն: Թէ սեղանը
և թէ զիրքը երկայնութեամբ աւելի են, քան թէ լայնու-
թեամբ: Թէ սեղանի և թէ զրքի հակագիր կողմերը
միմեանց հաւասար են: Թէ սեղանը և թէ զիրքը հար-
կաւոր են մարդկանց: Երկուսն էլ մարդկանց ձեռքով
են շինած: Մեր դաստանը երկուսն էլ գտնուում են:
Երկուսն էլ յաւիտենական չեն, մաշւում են՝ փչանում
ու կեղտոտում: Երկուսն էլ կրակիցն ահ ունին. և այն:

«Օստանանութիւն: Աեղանը շինած է փայտից, խսկ
զիրքը թղթից: Աեղանն աւելի ամուր ու ծանր է զըր-
քից. զիրքն աւելի հեշտ կարելի է պատառել ու փչաց-

նել, քան թէ սեղանը: Աեղանը վրէն գիր զրելու կամ
հաց ուտելու համար է, խսկ զիրքը՝ ոչ: Գիրքը կազմ
ունի ամրութեան համար, խսկ սեղանը՝ ոչ: Գիրքը
փոքր է, քան թէ սեղանը: Գիրքը կարելի է զրպանը
դնել խսկ սեղանը՝ ոչ: Գիրքը կիշանայ ջրի մէջ, խսկ
սեղանը՝ ոչ: Աեղանն ունի իւր մէջ պահարան կամ
արկդ, խսկ զիրքը՝ ոչ. և այն:

Համեմատեցէր սոյնպէս սեղանը զրատախտակի հետ, դուռը
պատուհանի հետ, սեղանը՝ աթոռի հետ, զիրքը՝ տետրապի հետ,
զրիքը՝ մատիափի հետ, թանաքը՝ ջրի հետ, եւ ասացէր ինչ նմա-
նութիւն ունին նորա եւ ինչ զանազանութիւն:—Գրեցէր տանն
այս առարկաների համեմատութիւնը եւ ցոյց տուէր ինն:

Զ Ո Ւ Թ Ո Չ Ն Ո Ց

«Մայր իմ, ինչո՞ւ ծիծեռնակները ձմեռը չեն երեսում,»
Հարցրեց միանդամ Գարեգինն իւր մօրը:—Որովհետեւ
նոքա ձմեռը գնում են ուրիշ տեղ, որդեակ, պատասխա-
նեց մայրը:—Ուր են զնում, մայրիկ:—Եթէ կամենում
ես իմանալ լսէ և ես կպատմեմ քեզ:

«Աեպտեմբեր ամսի վերջերին, երբոր ծառերի տերեւ-
ները սկսում են թափուել, ոչ միայն ծիծեռնակները, այլ
և մեր պարտէզների՝ դաշտերի ու անտառների մէջ անոյշ-
անոյշ երգող թռչնոց շտաբը պատրաստում են մեզ թող-
նել ու երթալ: Կոքա զնումեն մեզանից շատ հեռու
երկիրներ, ուր ձմեռ չէ լինում և պատրաստ էլ կերա-
կուր կայ նոցա համար:»

«Ե հարկէ կզարմանաս Գարեգինս», ասաց մայրն որ-
դուն, «թէ ի՞նչպէս այնպիսի հեռաւոր ճանապարհորդու-
թիւններ են անում այն խեղճ թռչնունները, այն ինչ
մենք՝ որ նոցանից աւելի խելօք ու գործունեայ ենք,
չենք կարողանում այդպիսի երկար ճանապարհորդու-

Թիւններ անել, մինչև որ չենք գիտենում ճանապարհը,
կամ քաջ առաջնորդ չենք ունենում։»

«Իրաւունք ունիս զարմանալու, որգեակի, շարունակեց
մայրը, ասակայն գիտացի՛ր, հոգիս, որ Աստուած է նոցա
առաջնորդը։ Աստուած, որ արեք՝ լուսինն ու աստղերը
ծագել է տալիս երկնքումը, և երկիրս զարդարում զա-
նազան ծաղիկներով ու բոյսերով։ ինքն Աստուած այն
թռչնոց իւրաքանչիւրին ցոյց է տալիս երթալու երկիրն
ու բնակելու տեղը։»

«Աստուած է, ուրեմն, որ աշնանը նոցա առաջնորդում է
տաք երկիրներ, իսկ գարնանը առնում է նոցա ու դարձ-
նում մեր կողմերը՝ անտառներին ու պարտէզներին կեն-
դանութիւն տալու համար։ Տեսնումես այս ծիծեռնակը,
որ պատուհանիդ առաջին բոյն է շինել անդադար եր-
գում է և իւր անխոնջ աշխատութեամբը քեզ բարի օրի-
նակ է լինում։ Այս ծիծեռնակը աշնանը հազարաւոր
միջն ճանապարհորդութիւն է արել և գարնանը կրկին
վերադառել գտել է մեր տունը, և իւր հին բոյնը
նորոգելով՝ այժմ պատրաստումէ ձագեր հանել։ Աս
օտար ծիծեռնակ չէ, այլ մեր անցեալ տարուայ հիւրն է,
որ այս տարի ևս եկել է վայելելոյ մեր հիւրասիրութիւնը։»

Ո՞ր թոշուններն են ճիշուը զնում տաք երկիրներ, եւ որո՞նք են
մնում մեզ մօտ։ Նորա ընչո՞ն են զնում։ Ո՞վ է նոցա առաջնորդողն
եւ կերակրողը։—Կրկնեցէք ծեր խօսքերով այս պատմութիւնը։

Ե Խ Ս Ե Ռ Ն Ա Կ

(Երգ պանդուստ պատանեկի):

«Ծիծեռնակ՝ ծիծեռնակ,
Իու գարնան սիրուն թռչնակ,
Դէպի ուր, ինձ ասա՛,
Թռչում ես այդպէս արագ։

Ա՛խ, թըռիր, ծիծեռնակ,
Օնած տեղը Աշտարակ,
Ենդ շինի՛ր քո բունը
Հայրենի կտուրի տակ։

Անդ հեռու ալեոր
Հայր ունիմ սդաւոր,
Որ միակ իւր որդուն
Սպասում է օրէ ցօր։

Երբ տեսնես դու նորա՝
Ինձնից շատ բարեւ արա՛,
Ասա՛, թող նըստի լսյ
Իւր անբաղդ որդու վերայ։

Դու պատմէ, թէ ինչպէս
Աստ անտէր ու խեղճ եմ ես,
Միշտ լալով՝ ողբալով
Կեանքս մաշուել՝ եղել է կէս։

Ինձ համար ցերեկը
Մութ է շրջում արեգը,
Գիշերը թաց աչքիս
Քունը մօտ չե գալիս։

Ասի՛ր, որ չե բացուած
Թառամեցայ միացած,
Ես ծաղիկ գեղեցիկ՝
Հայրենի հողեց զրկած։

Դե՛հ, սիրուն ծիծեռնակ,
Հեռացի՛ր թռիր արագ,
Դէպի Հայոց աշխարհը,
Օնած տեղը Աշտարակ։

Այս ով է խօսում ծիծեռնակի հետ։ Միթէ կարևի է թռչնոց
կամ առհասարակ անասնոց հետ խօսել։ Ինչու համար է նա

ծիծեւնակին «զարնան թոշնակ» կոչում: Ի՞նչ է հարցնում նա ծիծեւնակին, եւ ինչ է նորանից խնդրում: Նա ընջու համար է իւր հօրը «սպաւոր» ասում: Նա իրանց տանն է, թէ օտար երկրում: Առաջ է, թէ տիկար:—Պատմեցէք ձեր բառերով այս երգի միտքը:

Սովորեցէք անպիր այս երգը: Սորա երգելու եղանակը կամ ճայնը դիտէք, թէ ոչ:

ՄԵՐ ՏՈՒՆԸ

ՄԵՐ ունինք մէկ փոքրիկ տուն, որ հինգ սենեակ ունի՝ դահլիճ, ընդունարան, սեղանատուն, ննջարան և առաջնասենեակ: Դահլիճն ամենից մեծ սենեակն է, իսկ առաջնասենեակն ամենից փոքրը: Ընդունարանը մեծութեամբ երկրորդն է դահլիճից: Ընդունարանը հիւրերի համար է և աւելի է զարդարած՝ քան թէ միւս սենեակները. սեղանատունը ճաշելու համար է, իսկ ննջարանը հանգստանալու:

Ես և իմ փոքր եղբայրս մէկ սենեակում ենք կենում և ուսանում: «Սա բաւականին մեծ սենեակ է, երկու դուռն ունի և չորս պատուհան: Պատուհաններն մեծ մեծ են, այս պատճառաւ էլ մեր սենեակը լաւ լոյս է: ՄԵՐ սենեակի մէկ անկիւնումը հնոցն է, իսկ միւսումն մեր զրեանց ու թղթերի պահարանը: Մենեակի մէջ տեղը մեր զրասեղանն է, որոյ վերայ զրում ենք ու պատրաստում մեր դասերը: Մեղանի շուրջը շարած են աթոռներ նստելու համար: ՄԵՐ սենեակի պատերը ներկած են կանաչ: Պատերի վերայ կախած են զանաղան պատկերներ, որոց մէջ կայ հօրս՝ մօրս՝ պապիս ու տատիս պատկերները:

ՄԵՐ տան մօտ առանձին երկու սենեակ ես կան՝ խոհակերոց ու մառան: Խոհակերոցումը կերակուր են

եփում, իսկ մառանումը պաշարեղէն են պահում: **ՄԵՐ** կերակուրը եփում է խոհարարը:

Նկարադրեցէք սոյնպէս եւ ձեր տունը: Ասացէք, ձեր սեփական տանն էք կենում, թէ վարձում էք: Զեր կեցած տունը մեծ տուն է թէ փոքր, քարէ տուն է, թէ փայտէ: Քանի յարկ ունի եւ քանի սենեակ: Ասա սենեակների անունները: Նկարադրեցէք ձեր սենեակը, որի մէջ դուք կենումէք: Խոհանոց ու մառան էլ ունիր թէ ոչ: Խոկ խոհարարը: Ընջով է ծածկած ձեր տան կտուրը:—Գրեցէք, ինչպէս որ պատմեցիր կամ նկարադրեցիք ձեր տունը:

Ա. Ռ. Ա. Կ Օ Տ Ե Ա. Ն Ե Բ Գ

Առաւոտն որ զարթնեցար,
Խոկոյն վեր կաց, մի՛ ծուլանար,
Գնա՛ մաքուր լուացուի՛ր,
Գլուխդ մի լաւ սանդրի՛ր:

Ով որ գլուխը չէ սանդրած
Կամ երեսը լուացած,
Ըմենուն է զզուելի,
Մաքրութիւնն է սիրելի:

Չեռքերդ լաւ լուա՛,
Շորերդ հագի՛ր, շուտ արա՛,
Շոյս ամէն բանից յետոյ
Շղօթք արա՛ Շստուծոյ:

Շատ պառկելուց ի՞նչ օգուտ.
ՄԵՐ առ զասդ՝ սերտէ՛ շուտ.
Ո՛ր զասդ որ լաւ չզիտես,
Գանա՛, որ շուտ պատրաստես:

Ով է ամենի համար զզուելի, եւ ինչն է ամենեցուն սիրելի:

Մեր ընտանիքը շատ չեն. հայրս է՝ մայրս՝ երկու եղբայրս ու քոյրս: Իմ եղբայրներս ու քոյրս մեծ են ինձանից. Մենք մի պապ էլ ունեինք, բայց նա մեռաւ: Խսկ տատս, ասումեն, շատ ժամանակ է՝ որ մեռել է. ես նորան չեմ էլ տեսել:

Մայրս ինձ շատ սիրում է, մեզ համար կերակուր է պատրաստում, շրբեր է կարում և ազատ ժամերին մեզ կարդալ ու գրել է ուսուցանում: Խսկ հայրս անդադար աշխատում է, որ մեր տունը կառավարէ, մեզ կերակրէ ու հագցնէ. նա ոչ մի բռպէ հանգստութիւն չունի, և այս բոլոր աշխատութիւնը մեզ համար է: Զգիտեմ մենք ի՞նչ պէտք է անէինք առանց մեր ծնողացը. ո՞վ պէտք է մեզ կերակրէ՝ հազարներ ու պահպանէր: Տէ՛ր Աստուած, երկայն կեանք տուր իմ ծնողացս, որ մենք որբ ու անտէր չմնանք:

Մեծ եղբօրս անունը Արշակ է, իսկ նորանից փոքրինը Վաղարշակ: Երկուսն էլ կարդում են ուսումնարանումք: Հայրս ասաց՝ որ ինձ էլ պէտք է տայ շուտով ուսումնարան: Քոյրս տան ու մէկ տարեկան է. նա ուսանում է օրիորդաց ուսումնարանումք:

Ես մի մեծ քոյր էլ ունեի, բայց նա վախճանեցաւ: Մայրս միշտ լալիս է նորա համար ու ասում «ափսոս, շատ խելօք աղջիկ էր»: Հայրս մի անգամ տարաւ ինձ գերեզմանատուն ու ցոյց տուաւ քրոջս գերեզմանը: Պապիս ու տատիս գերեզմաններն էլ այն տեղ նորա մօտ են: Խնչպէս ծածկուել է պապիս ու տատիս գերեզմանները կանաչ խոտով. իսկ քրոջս գերեզմանի վերայ ծաղկիներ էլ են դուրս եկել: Այսո՛, քոյրս ծաղկի շատ էր սիրում:

Աստուած մօրս միմիթարելու համար՝ մեռած քրոջս փոխանակ մի որդի տուաւ նորան: «Սա գեռ շատ փոքր է, չգիտեմ՝ չորս ամսական է, թէ հինգ. նորա անունը Վարդանիկ է: Մայրս նորան անչափ սիրում է, միշտ ծիծ է տալիս ու որորում է: Ես էլ երբեմն մօրս օգնում եմ՝ որորելով եղբօրս օրօրոցը: Մայրս՝ եղբօրս որորելիս ու քնացնելիս, միշտ օ՛ր օ՛ր է երգում: Ո՛հ, ի՞նչ գեղեցիկ ու քաղցր երգ է մօրս երգածը. ես միշտ լսում եմ ու համարեա՛ թէ բերան գիտեմ բոլորը: Մօրս երգած օրօրը այսպէս է սկսում: «Խնջէ՛, ո՛վ իմ սիրուն մանկիկ, ննջէ՛, տեսնեմ, դու գառնիկ». Բայց ձայնով ես չեմ կարում այնպէս լաւ երգել, ինչպէս մայրս է երգում:

Նկարագրեցէք սոյնպէս եւ ծեր ընտանիքն ու դրեցէք:
Ասայքք, ում ենք ասաւմ տատ, պապ, թոռն, քեռի, խնամի,
սան, կնքահայր, աներ, զգանչ, տաղը, սկեսուր, որբ, այրի:
Ի՞նչպէս է շինուած «գերեզմանատուն» բառը: Ի՞նչ զանազանութիւն կայ «գերեզման եւ գերեզմանատուն» բառերի մէջ «գերեզմանաբար» ինչ կնշանակէ եւ ինչպէս է շինուել այդ բառը:

ՕՐՈՐՔ ՄԱՆԿԱՆ

«Խնջէ՛ ո՛վ իմ սիրուն մանկիկ,
«Խնջէ՛ տեսնեմ, դու գառնիկ,
Անոյշ անոյշ ննջէ՛ հանգարտ,
Հանգստացիր մի քիչ արդ:

Օր օր ասեմ քեզ որդեկիս,
Շատ օր տեսնես, շատ ապրիս,
Օր օր ասեմ սիրուն տղուս,
Օրեր մաղթեմ սիրելոյս,
Օր օր ասեմ մատաղ մանկանս,
Որ ունենայ երկար կեանս:



ԱՅ, ե՞րբ ես քեզ պիտի տեսնեմ
Օերդ մէկ տղայ գեղադէմ,
Գնալ՝ վաղել ու վաղվեղել,
Ճասակակցացդ հետ խօսել:

Օր օր օր իմ տատրակիս,
Օր օր ասեմ զաւակիս.
Օր օր օր իմ գեղեցկիդ,
Քեզ՝ իմ հոգւոյս հատորիդ,
Օրեր մաղթեմ քեզ յԱստուծոյ,
Քեզ՝ իմ որդւոյդ միայնոյ:

Եւ երբ լինիս հսկայ կարիճ,
Լինելու չես խարդախիչ
Ճայոց աղքին, մեր հայրենեաց,
Ու հայերու բարեկամաց:

Օրեր՝ օրեր քեզ շատ մաղթեմ,
Որ ճայրենիք մեր վսեմ,
Գեղածիծաղ ժպիտներովն
Եւ իւր օրհնեալ անունով
Արծարծէ յիս բարի յոյսեր,
Ու 'ի քեզ էլ լաւ զգացումներ:

Միթէ այն օրն տեսնեմ պիտի,
Որ ծերութիւնս քեւ սփոփի,
Եւ երբ խիստ շատ ես ծերանամ,
Շղթել նեցուկ ունենամ:

Օր օր ասեմ, օր օր օր
Որ շնորհէ ճայրն երկնաւոր.
Օրեր մաղթեմ, որ շատնայ օրդ,
Յետոյ նեցուկ լինիս մօրդ,
Որ այն օլեր շատ շատ օր օր
Մաղթեմ քեզ բոլոր օր:

Սաացէք այս բառերի նշանակութիւնը—արդ, մաղթեմ, մասաղ, զերդ, զեղադէմ, տատրակ, սփոփի, նեցուկ, արծարծել, ժպիտ, զսեմ, հսկայ, շնորհի: Ի՞նչպէս են շնուռած «զեղադէմ, զեղադիծաղ» եւ հսասկակից» բառերը:

Ի՞նչ կ'նշանակէ: «հոգւոյս հատոր»: իսկ «զառնիկ կամ զառնուկ» ինչ կնշանակէ: Ուրիշ այսպիսի սիրոյ կամ փալարշական բառեր էլ զիտնես: (Այս մենք ասումենք միմեանց. «աջիս լոյս, հողիս, արեւս, արեւիդ մեռնիմ, քեզ մատաղ (զո՞հ) լինիմ, զիխովդ պատյան զամ, քո ցաւը տանեմ. եւ այն):

Ի՞նչ կ'նշանակէ: «շատ օր տեսնես»: Այսպիսի ուրիշ օրհնանք էլ զիտնես: (Այս. «ծերանաս, ծիս, ծաղկիս, զօրանաս, շատ ապրիս, իմ տարիս հասնես, կարմիրդ կապենք, քեզ արեւշատութիւն, քեզ արքայութիւն, ապրի արեւել եւ այն»):

Սովորեցէք բերան այս օրորոցի երդը:

Ի Մ ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՕՐԵՐԸ

Թէ ե՞րբ ինձ ճանաչեցի, թէ ե՞րբ սկսայ խօսել, ինձ չայտնի: Միայն այսքանն է մտքիս, որ երբ աչքս բաց արի, ինչ որ տեսայ՝ կարծում էի թէ Աստուած ինձ համար է ստեղծել: Աէկ կողմն իմ օրորոցն էր, իսկ միւս կողմն՝ իմ խաղալու բաները, աչքս նոցա առնելիս՝ այնպէս էի իմանում, թէ ինձանից աւելի աշխարհում բախտաւոր չկայ. և այնպէս էի կարծում՝ թէ աշխարհիս թագաւորն ես եմ:

Ով ասնս՝ ինձ էր սիրում ու գրկում: Խմ մէկ դատարկ խօսքն էլ ամենին հաւանական էր: Խմ մէկ յիմար ծիծաղս էլ ամենի սիրու ուրախացնում էր ու միսիթարում: Խմն էր ծնողացս գիրկը. հայրս էր նեղանում՝ մօրս էր տալիս, մայրս էր նեղանում՝ հօրս էր տալիս: Ա արգի պէս հոտ էին առնում, ինձորի պէս խաղացնում: Աէկ տեղս ցաւելիս հազար մաղամ գրկում ու համբուրում էին ինձ, որ սիրոս առնուն և ուրախացնեն:

Արեր տան իշխանն ես էի. ասած ասած էր, ուզած ուզած, արած արած: Առաւօտը լուսանում էր՝ թէ իրիկունը մթնում; իմն էր խաղալը՝ կռուիլը՝ գէս ու դէն վաղելը՝ շրերս պատռելը: Փայտէ ձիս իմ հոգիս էր. բոլը օրը նորա վերայ փողոցները չափում էի, էլ ո՛չ հաց՝ ո՛չ ջուր բնաւ միտքս չէին գալիս: Այնպէս իմանում էի թէ երկնքի այն գեղեցիկ աստղերը, այն պայծառ արեգակն ու լուսինը, դաշտերի այն գոյնզգոյն ծաղիկները ինձ վերայ են այնպէս խնդում ու ծիծաղը: Այնպէս էի կարծում, թէ միշտ այս ուրախութիւնը կունենամ, այս սիրուն օրերը կբաշմէ:

Բայց ա՛և, փոքր ինչ մեծացայ թէ չէ, կորցրի այս ոսկէ ժամերը, թռան գնացին ինձանից այս քաղցր ու անհոդ օրերը: Ինձ տուին ուսումնարան, իսկ ուսումնարանումը հազար ու մէկ պահանջմունք կայ. պէտք է, ասում են, խելօք կենաս, չարութիւն ու ծուլութիւն չանես, քիչ խաղաս ու շատ կարգաս, դասերդ առվարիս, քո մեծին հնազանդ լինիս և ընկերներիդ հետ սիրով կենաս, էլ ո՛ր մէկն տաեմ ես, ու ո՛ր մէկն անեմ: Ա՛և, իմ անմեղ ու անհոդ մանկութիւն, քո քաղցր յիշատակն ես չեմ մոռանալ երբէք:

Դուք էլ այսպէս էք անցկացրել ծեր մանկութեան օրերը, թէ ոչ: Կրկնեցք այս պատմութիւնն ու զբեցք:

Ի՞նչ կ'նշանակեն «ասած ասած էր, ուզած արած արած, իմն էր ծնողաց զիրկը. իմն էր խաղ ու պարը, աչք նոյց տուաւ, նոյց աչքը ինծ տուաւ. սիրոս առնում էին, ես նորա սիրու առայ»: Ի՞նչ կ'նշանակէ «ուսկէ ժամեր, ոսկի դար, ուսկերեան: Ուրեմն ինչպէս պէտք է հասկանանք այս խօսքերը. մանկութեան ոսկի ժամերն անցել են անդառնալի»:

ԵՐԳ ՏՂԱՅՈՒԹԵԱՆ

Ո՞ւր դուք, մանկութեան գեղեցիկ օրեր, Ո՞ւր հեռացաք դուք, երջանիկ ժամեր,

Էլ ո՛չ սար՝ ո՛չ ձոր՝ ո՛չ ջուր՝ ո՛չ դաշտեր
Ո՞ւր չեն միիթարում վարդ՝ մանուշակներ:

Ո՞ւր բաց արի ինչպէս երագում,
Եմէն բան ինձի քաղցր էր երեսում.

Բայց ինչքան մեր չափը հասնում ենք՝ առնում,
Այնքան օրէ ցօր տիրում ենք՝ տրտմում:

Ո՞ւր մեր այն սրտի ուրախութիւնքը
Գնացին՝ հեռացան այս աշխարհքումը.

Էլ ո՛վ մեզ կտայ այն աղատութիւնը,
Էլ ո՛վ մեզ կտայ այն երջանկութիւնը:

Պատմեցէք այս երպի միտքը մեր խօսքերով:

ՄԵՐ ԿԵՐԱԿՈՒՐԸ, ԸՄՊԵԼԻՔՆ ՈՒ ՀԱԿՈՒՍՏԸ,

ԱՐԵՐ ամենահարկաւոր կերակուրը հացն է, իսկ ըմպելիքը՝ ջուրը. առանց հացի ու ջրի մենք չենք կարող ապրիլ: Հացը թխում են խմորից, իսկ խմորն ունցում են ալեւրից ու ջրից: Վլեւրն ու ջուրը շաղախելիս ձգում են նոցա մէջ աղ ու տիտմոր Վլեւրն աղում են ջրաղացումը ցորենից կամ հաճարից: Յորենն ու հաճարը բուսնում են դաշտում: Դաշտը հերկում ու սերմանում է երկրագործը: Առանց հերկելու և սերմանելու դաշտը մեզ հաց կամ պտուղ չէ տալիս, հարկաւոր է աշխատութիւն:

Առանց անձրեի կամ ջրի դաշտումն ոչինչ չէ բուսնում: Ջուրը հարկաւոր է ամենի համար, թէ բոյսերի՝ թէ անասունների և թէ մարդկանց: Ջուրը բղխում է գետնի տակիցը. առաջ փոքր աղբիւր է լինում, յետոյ միանալով ուրիշ աղբիւրների հետ՝ մեծանում ու գետ է դառնում: Գետերը գնում են թափուում ծովերի մէջ:

Օռովի ջուրը չեն խմում, որովհետեւ դառն է լինում
ու աղի, ամենից համեղ ու առողջարար ջուրն աղբիւրի
կամ գետի ջուրն է: Եթէ գետինը խոր փորում ենք՝
ջուր է դուրս գալի. այդպիսի ջուրը կոչում է ջրհորի
ջուր, իսկ փորած գետինը՝ ջրհոր: Շատ տեղ ջրհորի
ջուր են խմում:

Մեր հազուստը կարում են մահուղից՝ կտաւից՝ ջթից՝
ապրշումէ գործուածքից, քաթանից, մորթուց ու կա-
շուց:

Մահուղը գործում են թելից: Մահուղի թելը մա-
նում են բրդից, իսկ բուրդը խուզում են ոչխարից կամ
ուրիշ անասուններից:

Կտաւն ու չիթը գործում են նոյնպէս թելից. կտաւի
թելը մանում են բամբակից, իսկ բամբակը բուսնումէ
տաք դաշտերումը մանր թփերի վերայ:

Վարշումէ գործուածները շինում են ապրշումի թելից,
իսկ ապրշումը շինում է շերամը (ապրշումի որդը):

Քաթանը շինում են վէճ թելից. վուշը բուսնում է
դաշտումը:

Վաշին շինում են կովի, եղան, ձիու, ոչխարի, այծի
մորթուց: Վաշուցը կարում են կօշիկ, մաշիկ, տրեխ և
այլն. Մուշտակը (քուրքը) կարում են ոչխարի, արջի,
գայլի, աղուէսի կամ ուրիշ գաղանների մորթուց, իսկ
գդակը կարում են գառան մորթուց:

Մեր շորերը կարում է մեր մայրը կամ դերձակը, Կա
յառաջ վեր է առնում մեր չափսը, այսինքն մեր բարձրու-
թիւնը, հաստութիւնը, ձեռների ու ոտների երկայնու-
թիւնը և այլն. յետոյ մահուղից՝ ջթից կամ մի ուրիշ
բանից ձեռմ է ու կտրատում առանձին շորի ամէն մի
մասը, զորօրինակ՝ փեշերը, թեքերը, մէջքը և այլն, և
այս կտորները իրար հետ կարում է:

Ո՞րն է մեր գլխաւոր կերպակուրն ու ըմպելիքը: Հացը ընցից
են շինում եւ ինչպէս: Չուրն ինչ աթոյից է զախս եւ հրն է լաւ
ջուրը: Մեր հազուստն ընցից ենք կարում: Մահուղը, կտաւը,
ջիթն ու բաթանն ընցից են զործում: Խոկ ապրշումէ գործուած-
ները: Կաշին ընցից են շինում: Կահուց ու մորթուց ինչ հազուստ-
ներ ենք կարում: Մեր շորերն ով է կարում եւ ինչպէս:— Կըր-
կնեցք բոլոր պատմութիւնն ու գրեցէր:

Ասացէք այս բառերի նշանակութիւնը—«ըմպելիք, շարախն,

համար, հերկել, երկրպարծ, բղիել, շերամ, կօշիկ, մուշտակ:»
Ի՞նչպէս են շինուել այս բառերը—«ջրհոր, ջրաղաց, երկրա-
գործ, առողջարար»: Ի՞նչ զանազանութիւն կայ «մորթի» ու
«կաշի» բառերի մէջ:

Ե Բ Գ Ա Շ Խ Ս Ա Ս Ի Բ Ի

Լոյ, բարեկամք, շուտ արէք,

Պայծառ արե ծագեցաւ.

Միրով գործի ձեռք տուէք,

Մինչ ժամանակը շանցաւ:

Մզօթք արա, աշխատէ,

Օռութիւնը հեռու քշէ.

Անկարօտ կեանք կանցնես,

Եւ լաւ հունձ կը ժողովես:

Թաէ բարիք տեսնել կուզես,

Պէտք է ջանաս անդադար,

Ամէն բան ինքդ անես,

Եւ զութիւն այլոց մի՛ տար:

Ավսէր ունի գործելոյ,

Ես բնաւ չունի հոգ՝ վընաս.

Եսրա տանից Աստուծոյ

Օրհնութիւնն է անպակաս:

Ո՞վ ցունի ամենեւին հոգս ու վնաս, եւ ում տանիցն է
Աստուծոյ օրհնութիւնը անպակաս:

Պատաճէ՛, ո՞րդեսակի, ասաց մայրն իւր փոքրիկ Երու-
անդին, երբոր ձմեռն եկաւ, «մտածէ՛, թէ ո՞չչափ խեղճ
կլինէիր, եթէ այս խոր ձմերուան մէջ քեզ տաքացնելու
համար ոչ հագուստ ունենայիր, ոչ փայտ, ոչ ածուխ և
ոչ անկողին»: Յերեկը տաքանալու համար ամեն հար-
կաւոր բան ունիս. դիշերն ևս պատուական անկողին ու
վերմանկներ (Ճածկոց): Ո՞րչափ պարտական ևս Աստուծոյ
գոհութիւն մատուցանելու, երբոր մտածես որ հազա-
րաւոր՝ բիւրաւոր խեղճէր ոչ կրակ ունին տաքանալու,
ոչ անկողին պառկելու. նոյցա հագուստներն ևս, եթէ
տեսնես, մաշուած պատուած են, որով չկարողանալով
պաշտպանուիլ ցրտից՝ սաստիկ միսում են ու գողգողում:
Ո՞րչափ երջանիկ կլինէին նոքա, թէ որ քո հագուստ-
ներիդ կէսը՝ քառորդն ունենային, քո կերած կերակուր-
ներից մէկն ուտէին: Ուրեմն մի՛ դադարիր, ո՞րդեսակի,
գոհութիւն մատուցանելու Աստուծոյ, որ մեր հայրն է
և այսպէս ողորմած քեզ վերայ:

Կ՞նչ ասաց մայրն իւր փոքրիկ երուանդին, եղբօր ծմեռն եկաւ: Դուք էլ զգումէք ծեր բարեբաղդ վիճակը Թէ ոչ:—Կրկնեցէք բոլոր պատմութիւնն ու դրեցէք:

Ասացէք այս բառերի նշանակութիւնը — ածուխ, անկողին, վերմակ, բիւրառ, պաշտպանութիւն բառորդ:

ԱՍՏՈՒԱԾ ՄԵՐ ՀԱՅՐՆ Է

Ո՞ւ Տեր Աստուած, կը զիջանի՞ս,
Եւ իբրև ։ այր զիս կընդունի՞ս
Քեզի որդեակ աղկար՝ աղքէտ,
Դու, որ մեծ ես ւամինագէտ:

Երբեք իմ հայրս կարե՞ս լսել,
Ու աղօթքիս պատասխանել.
Քանզի չնշին տղայ մի ե՛մ,
Ու ամէն օր կը մեղանչեմ:

Դու հայրս ես, ինձ միշտ օգնէ,
Ու հեղանարհ մի սիրտ շնորհէ՛,
Որ միշտ ջանամ պարտքս անել,
Խօսքով՝ գործով քեզ ծառայել:

Պատմեցք այս աղօթքի միտքը ծեր խօսերով:
Ասացէք այս բառերի նշանակութիւնը — զիջանիլ ընդունիլ,
ամենաղէտ, չնին, մեղանչել, ջանալ:

ԾՆՈՒՆԴՆ ՈՒ ԶՐՈՌՀՆԵՔԸ
(Մանկական կեանքից):

Ես փոքր երեխայ էի, միշտ հօրս կամ մօրս հետ
գնում էի եկեղեցի, և նոքա ամէն բան հասկացնում էին
ինձ: «Այսօր բարեկենդան է», ասաց մի երեկոյ հայրս,
«էգուց ծննդեան պահքն է»: Որքան ուրախացայ ես,
երբ իմացայ՝ որ ծնունդը մօտացել է: Բողոք շաբաթն
ես ուրախութեամբ պահք պահքեցի, և երբ եկաւ ծնըն-
դեան զիշերը՝ հազայ նոր շորերս ու գնացի հօրս հետ
եկեղեցի, որ լաւ լուսաւորած էր այն երեկոյ ու այն-
քան էլ մարդիկ կային, որ տեղ չկար կանգնելու. եթէ
վերելիցն ասեղ վայր ձգէիր՝ գետինը չէր ընկնիլ: Կատ
գրքեր կարդացին ու շատ աղօթքներ, յետոյ ինձ պէս
մի փոքր երեխայ բարձրացաւ սեղանի վերայ ու կարդաց
բարձր ձայնով մէկ երկար զիրք: Հայրս ասաց, «այս
Դանիէլ գիրքն է»: Կհնչքան ցանկանում էի ե՛ս էլ
նորա պէս կարդալ իմանալ:

Ժամից յետոյ եկանք տուն, փոքր ժամանակից յետոյ եկան տիրացուքը ժամաշապիկներով ու մոմերով մեր տունն ու երգեցին: Հայրս ասաց, «այս Քրիստոսի ծննդեան երգն է, որ կոչում է Խորհուրդ մեծ»:

Միւս օրը վաղ վեր կացանք ու գնացինք ժամ. ժամից յետոյ մեծ հանդէսով՝ խաչով՝ խաշվառով ու մոմերով գնացինք գետը ջուրն օրհնելու: Գետի վերայ շնած էր քահանայից համար կանգնելու և խաչը ջուրը ձգելու տեղ. նոքա շատ աղօթքներ կարդացին ու շատ երգեցին: Պուրն օրհնելուց յետոյ բոլոր բազմութիւնը վրայ ընկաւ խմելու և ամաններով տուն տանելու: Ես էլ մի փոքր ամանով օրհնած ջրիցը բերի առն մեր ընտանեաց համար: Հայրս ինձ պատմեց՝ թէ ջրօրհնեքը Քրիստոսի մկրտութեան օրինակն է: Մի փոքր ժամանակից յետոյ քահանայն էլ եկաւ ու մեր տունն օրհնեց: Այն օրն ես բոլոր ժամանակս ուրախութեամբ անցկացրի:

Պատմեցէք, տեսնեմ դուք էլ այսպիսէք անցկացրել Ծնունդն ու ջրօրհնեքը, թէ ոչ Ծնունդն ու ջրօրհնեքը ամառն է լինում, թէ ձմեռը: Ո՞ւ ամսին եւ ամսի քանիսին է լինում միշտ:— Կրկնեցէք այս բոլոր պատմութիւնն ու դրեցէք:

Ի՞նչպէս են շինուել այս բառերս—ջրօրհնեք, ժամաշապիկ, բարեկինդան կամ բարեկինդանութիւն, էզուց (այզուց):

Ա. Ա. Ա. 0 Տ Ե Ա. Ն Ա. 0 Թ Ք

Ամենասուրբ Երրորդութիւն, մի Աստուած յերիս անձինս, հաւատում եմ որ այստեղ ներկայ ես. ամենայն խոնարհութեամբ պաշտում եմ քեզ, բոլոր սրտով փառաւորում եմ ու բիւր շնորհակալութիւն եմ մատուցանում քեզ, որ այս գիշերս անվտանգ ու խաղաղութեամբ անցացրի և արժանացայ տեսնելու այս օրս:

Ողորմած և մարդասէր Տէր իմ Յիսուս, չնաշխարհիկ օրինակ կատարելութեան. ամենայն կերպ ջանք պիտի անեմ, որ կարողանամ լինիլ քեզ պէս քաղջր՝ խոնարհ՝ հլու՝ հնազանդ՝ առաքինի՝ աշխատասէր՝ բարի՝ ողորմած ու գթած, և մանաւանդ պիտի ջանամ մեղք չգործել ու պակասութիւններս ուղղել:

Տուր ինձ ուրեմն, քո սուրբ շնորհդ, Աստուած իմ Յիսուս, և զօրացրու ինձ ընդդէմ ամենայն փորձութեանց շարին, որ շխարուիմ նորանից, մեղք չգործեմ ու քեզ չբարկացնեմ, և ամենայն սրբութեամբ ու երկիւղածութեամբ անց կացնեմ այս օրս՝ բարի օրինակ լինելով եղբարցս ու ընկերացս, հնազանդելով ծնողացս ու վարժապետացս:

Սովորեցէք այս աղօթքը բերան եւ ամենայն առաւօտ ասացէք աղօթք անելիս: Ասացէք այս բառերիս նշանակութիւնը: անվտանգ, նաշխարհիկ, հլու, առաքինի, զթած, երկիւղածութիւն:

Ե Բ Ա. Զ

Ես լսեցի մի անուշ ձայն,—

Իմ ծերացած մօր մօտ էր.

Փայլեց նշոյլ ուրախութեան,

Բայց ափսո՞ս, որ երազ էր:

Կարկաչահոս աղբիւր այն տեղ

Թաւալում էր մարդարիտ.

Ես յստակ էր որպէս բիւրեղ.

Այն երազ էր ցնորհամիտ:

Եւ տիրագին երգն մայրենի

Յիշեց մանկութեանս օրեր.

Մօրս համբոյլն ես զգացի,—

Ա՛և ավտո՞ս, որ երազ էր: Ճնշոյիլ
համբա զան Առուծքին սեղմեց կարօտագին, որ խանչից
Հայրես սրբեց՝ շատ թաց էր, —
Բայց արտասուր դնում էին.
Ե՛ւս, այդ ինչո՞ւ երազ էր:
ՄԵԾ ՊՈՀՔՆ ՈՐ ԶԱՏԻԿԸ
(Մանկական կենարից:)

Բողոք մեծ պահքը պահեցի ես ու համարեցի, որ
ընդամենն եօթն շաբաթ է: Լուսաւորչի շաբաթին
հաղորդուեցայ հօրս հետ միասին, և այն օրը տօն
պահեցինք: Հայրս ինձ պատմեց մեր Գրիգոր Լուսա-
ւորչի կեանքն ու չարչարանքը: Խնչպէս վատ ու ան-
աստուած մարդիկ են եղել առաջուայ թագաւորները,
որ քրիստոնէական հաւատի համար այնպիսի սարսափելի
տանջանքներ են տուել մարդկանց:

Լուսաւորչի շաբաթից յետոյ ծաղկազարդի կիրակին
էր. շատ երեխայք կային այն օրը ժամում՝ մոմելն ու
ուռի ծառի ճիւղերը ձեւներին բռնած, որ տէրտէրն
օրհնել էր ու բաժանել նոցա: Ես իմ ուռին բերի տուն,
դրի պատկերի առաջին, որ մինչև ցայժմ էլ այնտեղ է՝
չորացած: Հայրս ինձ պատմեց՝ թէ այս տօնը Քրիս-
տոսի Երուսաղէմ մանելու օրինակն է, և կուլում է
ծաղկազարդ այն պատճառաւ, որ Քրիստոսի Երուսաղէմ
մանելու ժամանակին հետը գնացող ժողովուրդը՝ ծա-
ռերի ճիւղերը կարատելով, տարածում էին նորա ծա-
նապարհի վերայ՝ ի պատիւ:

Ա՛երջի շաբաթին հայրս ամէն օր ինձ ժամ էր տանում
ու ասում էր՝ թէ այս շաբաթը Քրիստոսի չարչարանաց
շաբաթն է: Լուսագ հինգ շաբաթի օրը շատ երկար

ժամ էր ու շատ մարդիկ հաղորդուեցան. իսկ յերեկոյին
ոտնալուայի կարգը կատարեցին ու ժողովրդեանն օրհնած
իւղ բաժանեցին: Լոյս ուրբաթ Քրիստոսի սուզն էր,
բայց հայրս ինձ չտարաւ ժամ, ասելով՝ թէ փոքր ես,
չես կարող երկար մնալ անքուն ու կանգնիլ ժամումը:

Կ աբաթ օրը մայրս կարմիր ձու ներկեց, և յերեկոյին
ժամ զնալիս մէկն ինձ տուեց. զրի զրպանս՝ հագայ
նոր շղմերս ու հօրս հետ գնացի ժամ:

Լոյս երեկոյ էլ եկեղեցին նոյնպէս լաւ լուսաւորած
էր, որպէս և ծննդեան գիշերը, և նոյնպէս շատ մար-
դիկ կային ժամումը: Ժամից յետոյ կճպեցի զրպանիս
ձուն ու կերայ: Երբոր եկանք տուն՝ միմեանց շնորհա-
ւորեցինք Քրիստոսի յարութիւնն ու նսաւեցինք իրիկնա-
հացի: Լոյս երեկոյ էլ ինչպէս և ծննդեան յերեկոյին,
մենք միս չկերանք, որովհետեւ նաւակատիք էր: Հայրս
ինձ ասաց՝ որ մենք տարին ունինք հինգ նաւակատիք, որք
լինում են ծննդեանք՝ զատկին՝ վարդավառին՝ Լուսուա-
ծածնայ տօնին ու սուրբ խաչին:

Միւս օրը վաղ վեր կացանք, և փոքր եղբօրս էլ՝ որ
երկու տարեկան էր, տարանք ժամ: պատարագից յետոյ
տէրտէրը հաղորդեց նորան, և եկանք տուն: Լոյս օրն
ամենեքեան՝ թէ մեծ և թէ փոքր, թէ հարուստ և թէ աղ-
քատ՝ ուրախ էին ու լաւ հագնուած: Միւս օրն, որ
երկուշաբթի էր հայրս տարաւ ինձ գերեզմանատուն ու
ասաց. «այսօր մեռելոց է, պէտք է քո պապի՝ տատի ու
քրոջ գերեզմաններն օրհնել տանք»: Քահանայն եկաւ
և օրհնեց: Խնչպէս հնացել էր նոցա գերեզմանները.
բոլորը ծածկուել էր կանաչ խոտով ու ծաղիկներով:

Դուք էլ այսպէս անցկացրի մեր մեծ պահն ու զատիկը,
թէ ոչ, Զատիկը Երբ է մնում, զարմանը թէ աշնանը: — Կրկնեցիք
այս պատմութիւնն ու զրեցէք:
Ի՞նչպէս են շինուած այս բառերս — «ծաղկազարդ, ոտնալուայ:»

ՏԱՐԱԲՈԽՏ ՀԱՅ ՄԱՆՈՒԿԸ

Ենօթի՝ ծարաւ, գլուխը քաշ ձգած,
Իւր ծնողներից վաղուց որբացած,
Հօր տանից տեղից արդէն հեռացած,
Շրջում էր մանուկն մոքով մոլորուած:

Շրջում էր բոկոտն՝ շորերը պատըռտած,
Եղե արցունքով աչքերը լցուած.
Ինչպէս անզգայ սիրտ պէտք է լինէր,
Որ այս թշուառին տեսնէր՝ չցաւէր:

Իւր բնիկ երկրից՝ ծնողներից զըկուած,
Օտար աշխարհում գերի մատնուած,
Ենգութ մարդկանցից հալածուած՝ տանջուած,
Խեղճ մանկան այս էր ծակատին զրուած:

Շատ տեղ ման եկաւ, շատերին խնդրեց,
Իւր սրտի ցաւերը շատերին պատմեց.
Շայց նորա խնդիրն ՚ի զուր անց կացաւ:
Սրտի զգացմունքն ոչ ոք չիմացաւ:

Ասացէր այս բառերիս միտքը — «քոլոտն, արցունք, անզգայ, թշուառ, բնիկ, անգութ, զդացմունք»: — Ի՞նչ կնշանակէ ասդի արցունք: Իսկ զդառն արտասունք: Ի՞նչ կնշանակէ «բնիկ երկիր»: Ո՞րն է ծեր բնիկ երկիրը կամ հայրենիքը:

ԺԱՄԱՍՏՐ ԵՐԵԽԱՅ

Որդին: Հայր իմ, ինչպէս սիրում եմ ես քեզ հետ
միշտ եկեղեցի գնալ, մոմ վառել և ծունր դնել. բայց,
սիրելի հայր, ասա՛ ինձ աղաւեմ, այս որ մարդիկ եկե-
ղեցի են գնում և ծունր են գնում, ի՞նչ է նոցա միտքը:

Հայրը: Որդեակ իմ, ես կամ մայրդ երբոր քեզ մէկ
բան ենք բաշխում, կամ քեզ համար նոր շոր ենք կարում,
քո մէջը դու մէկ ուրախութիւն չե՞ս զգում, քո մէջը
չէ՞ զարթնում մէկ սէր, մէկ երախտագիտութիւն առ քո
ծնողս, ու չե՞ս զալի քո սրտի ուրախութիւնը մեզ
յայսնում:

Որդին: Այսո՛, հայր, այդ ժամանակը սիրոս մի ու-
րախութիւն է զգում և ինձ գրդում է, թէ գնա՛ հօրդ
ձեռքը համբուրէ, շնորհակալութիւն արա նորան, որ նա
քեզ համար այսպէս հոգս է անում, քեզ այսպէս սիրում է:

Հայրը: Այնպէս էլ և մենք, որդեակ, և բոլոր մար-
դիկը զգում ենք այն բարերարութիւնները, որ մեր ամենիս
Հայրը՝ մեր ստեղծողը անխնայ առատ ձեռքով մեզ
վերայ սփռել է և սփռում է: Տեսնո՞ւմ ես ինչպէս գե-
ղեցիկ է արեգական լոյսը, ո՛րքան քաղցր են ծառերի
պտուղները, ինչպէս գեղեցիկ են և անուշահոս ծաղիկ-
ները: Այս բոլորը մեզ համար է ստեղծել մեր բարի
Հայրը՝ մեր Աստուածը, և մենք ենք վայելում այս
Ապա ուրեմն մենք չպէ՞տք է սիրենք մեզ կերա-
բոլորը: Ապա ուրեմն մենք չպէ՞տք է սիրենք մեզ կերա-
կրողին և մեզ պահպանողին, չպէ՞տք է շնորհակալու-
թիւն անենք նորան, որ մեզ վերայ այսչափ խնամք, սէր
և ողորմութիւն ունի:

Եւ ահա այս է պատճառը, որդեակ, որ մենք գնում
ենք մեր Հօր Աստուածայ տունը՝ եկեղեցին, որ նորան
շնորհակալութիւն և գոհութիւն մատուցանենք, և ինդ-
րենք որ իւր շնորհը և խնամքը մեզանից անպակաս
անէ, մեր սիրար մաքուր պահէ ամենայն չարութիւնից,
որ միայն բարի մատճենք, և բարի գոլով արժանանանք
մեր ամենաբարի Հօր Աստուած որդի կոչել և նորա
արքայութեան ժառանգ:

Օռոնքը դնելով կամենում ենք ցոյց տալ, որ մենք մեր
Արարչի ոտի հողն ենք, նորա ծառայքն ենք. ինչպէս
նորա սուրբ կամքն է, պատրաստ ենք այնպէս կատարելու.
նորա ոտքն ենք ընկնում, որ մեր պակասութեան, սխա-
լանաց և յանցանաց համար մեզ վերայ չքարկանայ, ներէ
և ողորմած լինի մեզ:

Եւ որովհետեւ շատ մարդիկ ոչ կարդալ գիտեն և ոչ
աղօթքներ, որ բերան ասեն, վասն որոյ քահանայքը և միւս
հողեղորականները նոցա բերանից և նոցա փոխանակ Աստ-
ծուն փառաբանութիւն են տալիս: Իայց լաւ կլինէր, որ
մենք ամէնքս էլ հասկանայինք, ինչ որ նոքա ասում են. այն
ժամանակը մենք աւելի ջերմեռանդ սրատվ կազօթէինք:

Ինչ է պատճառը, որ մենք եկեղեցի ենք զնում, ծունք ենք
զնում և աղօթք ենք անում Աստղըուն:

ԵՐԵԿՈՅԵԱՆ Ա. Դ. Թ. Ք.

Երկիրպագութիւն եմ տալիս քեզ Աստուած իմ և
Տէր, և բիւր շնորհակալութիւն մասուցանում, որ ինձ
ողջ առողջ հասուցիր այս երեկոյս: Ով Աստուած իմ,
այսօր և բոլոր կենացս մէջ արած մեղքերիս համար մեղայ
գոչելով թողութիւն եմ իմնդրում: Ներէ՛ ինձ իմ մեղքերս,
և իմ պահապան հրեշտակը ուղարկէ, որ թէ՛ այս գիշեր,
և թէ՛ բոլոր կենացս մէջ ինձ մօտ մնալով զգուշացնէ և
հեռացնէ ինձ այն ամէն բաներից, որ անհաջոյ են քեզ.
որովհետեւ իմ միակ ջանքս ու բաղաձանքս է և միշտ
պիտի լինի այն, որ ես ամենայն ժամ քո սուրբ կամքդ
ու հաճոյքդ կատարեմ:

Ասացէք այս բառերի նշանակութիւնը—բիւր, գոչել, անհաջոյ,
բաղաձանք, հաճոյք:

Սովորեցէք այս աղօթքը բերան եւ ամենայն երեկոյ աղօթք
անելիս ասացէք:

ԵԿԵՂԵՑԻ

Երբոր մանում ես մէկ քաղաք կամ մէկ գիւղ, ամէն
բանից առաջ ի՞նչ ես տեսնում:—Եկեղեցին:—Եկեղեցին
ամէն տներից բարձր է շինած, այնպէս որ նորա զանգակա-
տունը շատ հեռուից կարող ես տեսնել: Եկեղեցին միւս
տներիցը մեծ է ու նոցանից էլ հեռու է շինած. նա միւս
տների նման չէ: Ոչ մէկ տուն չէ մանում զիւղի բոլոր
ժողովուրդը, բայց եկեղեցումն ամէն մարդ էլ տեղ ունի՝
թէ մեծ և թէ փոքր, թէ հարուստ և թէ աղքատ, թէ
հիւանդ և թէ առողջ: Իոլորն էլ հաւասար են Աստու-
ծոյ առաջին:

Քեզ երեխայ ժամանակիդ եկեղեցումն են մկրաել
եկեղեցումն էլ կասակեն քեզ, երբոր կմեծանաս: Երբոր
կմեռանիս՝ դարձեալ եկեղեցին կտանեն քեզ ու եկեղեցու
մօտ կթաղեն: Եկեղեցու մօտ են թաղած նմանապէս
քո հայրդ, մայրդ ու պապերդ:

Ուրեմն եկեղեցին ու հասարակ աներն մի և նոյնը չեն:
Ճասարակ տանը զու կարող ես բարեկամ էլ ունենալ
թշնամի էլ: Իայց եկեղեցում՝ Աստուծոյ տանը, թշնա-
միքդ էլ հանում են իւրեանց սրախ ոխն ու ատելութիւնը,
մոռանում են չարութիւնը և բարեկամանում են քեզ հետ:

Եկեղեցին ընծալ է գանաղանում միւս տներից: Ասացէք որն է
եկեղեցւոյ բնիմ, խաչալը, աւագանը, խորանը, գմբէթը: Կրկնեցէք
բոլոր պատմութիւնն ու գրեցէք:

ԵՐԳ ԳՐԻՍՏՈՆԵԱՅ ՄԱԿԱՆՑ

Աստուած իմ, Տէր իմ, մատաղ օրերս

Քեզ կը վայելէ՝ որ մատուցանեմ.

Փառաբանութեամբ ըսկըսեմ կեանքս,

Փառաբանութեամբ զայն վերջացընեմ:

Աւ խոստովանիմ՝ քո մեծ շնորհքդ է,
Որ քրիստոնէից մէջը ծընել եմ:

Ուր ողորմութեան գետը կը բղխէ, անոն պարագայի
Ենչուն փրկութեան ձայնը կը լսեմ:

Ո՞րշափ կը խղճամ կըռապաշտները,
Որ տղիտութեան խաւարի մէջ են.

Ոչ արքայութեան ցանկալի փառքը
Եւ ոչ գժոխքի տանջանքը գիտեն:

Քոյին փառաւոր խոստմունքներդ, Տէր,
Յոյսըս ու սէրս սաստիկ կը վառեն.

Կո Սուրբ Գրքերուդ երկնային խօսքեր
Եռ քեզ մերձենալ զիս կը յորդորեն:

Ասացէք այս բառերի նշանակութիւնը — ոխ, մատաղ, անհուն,
բղխել, մերձենալ
Ի նշախս են շնուռած այս բառեր — կուպաշտ, փառաբանու-
թիւն, բարեկամ:

ՀԱՐԲԱՐՉՈՒՄՆ ՈՒ ՎԵՃՈՒ

(Վանկական կեանքից:)

Համբարձմանը բոլոր ծառերը կանաչել էին ու դաշ-
տելն էլ ծաղիկներով լքուել: Ըստշանն ծաղիկել էր ու
վարդն բացուել: Գառները թռչոտում էին ծաղիկների
վերայ, իսկ թռչուններն էլ ծառերի ու թփերի մէջ
քաղցր երգում: Կանաչ արտերը բաւականին բարձրացել
էին, ու նոցա մէջ արտուտիկը անոյշ երգում էր: Օգը
գեղեցիկ էր բուրում ու արեգակն էլ պայծառ ծագել էր
պարզ երկնքումը: Հայրս ասաց՝ որ համբարձումն միշտ
հինգաբթի օրն է լինում ու զարնանը, և այս տօնս
Քրիստոսի երկնքն վերանալոյ կամ համբառնալոյ
յիշատակն է:

Եռաւոտեան գնացինք ժամ, պատարագից յետոյ քոյլս
տարաւ ինձ վիճակ հանելու դաշտը, ուր հաւաքուել էին
շատ հարսներ ու աղջկունք: Մի շաբաթ էր արդէն, որ
նոքա պատրաստւում էին վիճակ ձգելու: Սարերիցն ու
դաշտերիցը շատ ծաղիկներ էին քաղել, ու ամէն մար-
դից մի մի բան առել վիճակ ձգելու: մէկիցն՝ մատանի,
միւսիցն՝ ականջի օղ, երրորդիցն՝ ոսկէ կոճակ և այլն:
Եյս ամէնն ածել էին մի մեծ ու ջրով լիքն ամանի մէջ՝
վրէն շատ ծաղիկներ էին ցանել ու բերանը նուրբ քօղով
ծածկելով՝ դրել էին այն գիշերը վարդի թփի տակ:
Կոցա միջի փոքրն ես էի. ուստի նստացրին ինձ ամանի
մօտն, որ վիճակը հանեմ: Ըմեն մի վիճակ հանելիս մի մի
երդ էին ասում: Ըստ երգեր ասացին, բայց բոլորը միտս
չէ, միայն մի քանին է մնացել մտքիս և ահա սոքա են:
Կմախապէրս ծառի տակին, ջան գիւլում՝ ջան ջան,
Սաղմոսը կուան տակին, ջան ծաղիկ՝ ջան ջան.
Սաղմոսը անգիր է արել ջան գիւլում՝ ջան ջան,
Լեզուն բիւլըիւլ է դառել, ջան ծաղիկ՝ ջան ջան:

Մեր զրանը ուռի ծառ, ջան գիւլում և այլն.
Ոսկէ կաքաւ վըրէն թառ.

Երթայր ու գայր օրօր տայր,
Ելւան ծաղիկ տանիլ տայր:

Ենձրե եկաւ շաղալէն,
Ուռու տերե գողալէն.

Հրէս եկաւ իմ ախապէրն,
Ել ձին տակին խաղալէն:

Մեր զրան առաջին մի գարան,
Եղջկերքն եկան նի՛ դառան.

Ըստ խաղացին ու շարուեցան,
Ըստ արած մարգարիտ դառան:

Այ օրօն, օրօն ծաղիկ, բայր համառաւ []
 Կամիր ու տորոն ծաղիկ, ինչի նման
 Հարսն ու աղջիկ մեծրել եմ, ու վեսպանը տաց
 Որ գան ու քաղեն ծաղիկ: առասպանը ազգությունը
 Սարի խոտը ծեղուէ ծեղ, առաջ պատճենացար
 Եխապէր երթանք միատեղ.
 Որ թշնամին վրայ տայ, առաջ մասն անդամությունը
 Գլուխս տամ գլխիդ տեղ:
 Ճալէն ՚ի վեր ծներակ,
 Շաղակօլու արեգակ.
 Երեգակին թեր ախպէր
 Շաքար կոտրեմ՝ կեր ախպէր:

 Ահճակը հանելուց յետոյ նստեցանք գաշտումը ծաղիկ-
 ների վերայ ու ճաշ կերանք: Ճաշեց յետոյ հարսներն
 ու աղջիկունքը շատ խաղացին ու իրիկունը եկանք տուն:
 Ոչ, ի՞նչպէս գեղեցիկ էր այն օրը, և թէ ի՞նչպէս ուրախ
 ժամանակ անցկացրի՝ երբէք չեմ մոռանալ ես: որ թէ

 Երբ է լինում համբարձումը, օմենը թէ գարնանը: Բնութիւնը,
 այսինքն գաշտերը, ծառերը, թւշտւներն ինչ դրութեան մէջ են
 լինում համբարձմանը: Պատմէ տեսնեմ ինչպէս են վիճակ հանում
 հարսներն ու աղջկունքը համբարձմանը կամ վարդապոխն: Ասա, ինչ
 երգեր վիտես վիճակ հանելու: Նոցա երգելու եղանակն էլ զիտես թէ ոչ:

 Ասացէք այս բառերի նշանակութիւնը, արտուտիկ կամ արտոյտ,
 շուշան, բուրել, թառ, շաղ, տորոն, ծեղ, ծներեկ: Ինչ կնշանակէ
 «մեծրել»: Այս բառը որ բառիցն է շինուել: («Մեծարել», որ
 կնշանակէ պատուել:)

Պ Ս Ա Կ Ն Ե Բ
(Մանկական խաղ):

Ակ սիրա լինինք
 Եւ մէկ հոգի,
 Օչի միութիւնն

Գեղեցիկ զարդ է կեանքի:
 Լա, լա, լա, (4 անգամ:)
 Վարդէ պակ:

Աշրդ ծաղկին լինինք նման
 Եւ օրինակ հեղութեան.
 Թաղ՝ վարդը հանգստանայ
 Մեր մատաղ սրտի վերայ:
 Լա, լա, լա, և այլն:
 Մանուշակէ պակ:

Աղնիւ, սիրուն մանուշակ,
 Համեստութեան օրինակ,
 Տուր մեղ ծաղկի գեղեցիկ
 Քո քնքոյշ հոտ անուշիկ,
 Լա, լա, լա, և այլն,

Օրինակ անմեղութեան,
 Դաշտի սիրուն դու շուշան,
 Եկ զարդ եղիր մեր պարին
 Եկ միացիր մեր երգին:
 Լա, լա, լա և այլն:

Անաշ խոտը գաշտերի
 Մեր սրտին է սիրելի: առ ու առարկա
 Թաղ՝ ծիւզը կաղնի ծառին ու վայրին
 Պասկ լինի մեր գլխին:
 Լա, լա, և այլն:

Բաղրամ միասին

Ոիրուն՝ կանաչ պսակին,
Թաղ միանանք, բարեկամք,
Եւ յոյսերը անբաժան
Ման մեզնից յաւիտեան:

Երեխայրը խումբ խաժանվում են չօրս տեղ պսակների թուով, եւ նոցանից իւրաբանցիւրն մի պսակ է ներկայացնում առանձնապէս, կարգաւ երգելով իւրեան յարմարացրած երգը եւ միեւնոյն ժամանակ էլ շրջանակ կազմելով իւր դրութեամբ: Վերջին տանը հասնելով բոլոր խմբերը միանում են, եւ մի ամբողջ շրջանակ կաղմելով պտոյտ են զալիյ միմեանց ծեռք բռնած ու երգում: «Սիրուն կանաչ պսակին եւ այլն:

Ք. Ա. Պ. Ա. Ք. Ե. Կ. Գ. Ի. Կ.

Քաղաքի տները մեծ են ու դեղեցիկ, և մեծի մասին քարաշէն, երկու երեք կարգ սենեակներով, մէկ ուղեղ գծի վերայ կանգնած ու իրար կպած: Տների մէջ տեղերիցն փողոցներ են անց կենում, սովորաբար ուղղագիծ՝ հարթհաւասար՝ քարայատակ ու մաքուր: Փողոցների մէջ շատ անց ու դարձ անողներ են երեւում, և մեծի մասին վաճառականներ՝ արհեստալորներ ու տէրութեան պաշտօնեայք: Համարեա թէ ամէն փողոցի վերայ խանութներ ու շաեմարաններ կան, որոց մէջ զանազան տեսակ ապրանքներ են ծախւում: տեղ տեղ էլ զանազան գործարաններ կան: Քաղաքի մէջ անտառ, դաշտ, արօտ չկան. միայն մի քանի տների մօտ պարտէվներ են գտնուում: Քաղաքի մէջ կան հրապարակներ, ուր զիւղացիքը բերում են դաստում իւրեանց վաճառելեքը: Քաղաքում շատ քարաշէն ու գմբէթաւոր եկեղեցիք կան: Քաղաքի բնակիչքը աւելի հարուստ են, լուսաւորեալ ու մաքուր հագնուած: Քաղաքի մէջ ուստումնարաններ կան, դատարաններ, զինուորք ու շատ պաշտօնեայք տէրութեան:

Քաղաքի մէջ ամառն սակաւ կտեսնես կանաչ ու ծաղիկ. և այդ պատճառաւ շատ քաղաքաց բնակիչների մեծ մասը ամառը ցրուում գնուում է ամարանոցներ ու գեղեր: Քաղաքից դուրս ո՛ր կողմն որ աչքի դարձնում ես, ամէն տեղ տեսնում ես գաշտ, արօտ, ծառատունկներ ու անսառներ: Ը ատ քաղաքների մօտ ամարանոցներ կան, այսինքն մօտիկ տներ՝ ուր քաղաքացիք անց են կացնում ամառը, որովհետեւ այնտեղ օդը աւելի մաքուր է լինում ու առողջարար: Բայց քաղաքիցն եթէ աւելի հետանաս՝ առաջդ դուրս կդան գեղեր ու ազարակներ: Գիւղի տներն քաղաքի տների նման չեն, այլ փոքր, ցած, գետնի մէջը ու շատ անդամ ծառերով կամ ցանկով պատած. նոցա պատուհանները փոքր են ու շատ անդամ տանեաց վերայ բացած, իսկ տանիքը կամ կտուրը տափարակ են ու և մեծի մասին հողով կամ ծղնօտով ծածկած:

Ամէն զիւղացու խրճիթի մօտ բանջարանոց կայ, և խրճիթիցն էլ փոքր ինչ հեռու՝ կալ, համբար, մարագ կամ ուրիշ մի շինուած: Անդանեաց գոմը սովորաբար խրճիթի յետեկ կողմն է լինում կամ կողքին: Գիւղացւոց տների մէջը և իւրեանց վերայ կտեսնես անմաքրութիւն, խեղճութիւն ու աղքատութիւն: Առքա և մեծի մասին ուսումնարան չունին, ուստի նոցա որդիքը մնում են տղէտ, անկիրթ ու անուսում իւրեանց ծնողաց պէս:

Համենաստեցէք զիւղը բաղնիք ինտ ու տասովէք ինչ տարբերութիւն ունին, եւ ինչ նմանութիւն. ինչ մասնաւոր բան կայ զիւղի մէջ, որ քաղաքումը չկայ, եւ ընդհակառակն ինչ կայ քաղաքումը, որ զիւղումը չկայ:

Կրկնեցէք այս պատմութիւնը ծեր խօսքերով ու գրեցէք:

Ասացէք այս բառերի նշանակութիւնը. տարբերութիւն, զիծ, ուղղագիծ, հարթ, քարայտակ, խանութ, շտեմարան, գործարան, արօտ, հրապարակ, զմբէթ, դատարան, զինուոր, պաշտօնեայ, ամարանոց, աղարակ, տանիք, մարտա:

Առ շամաց ս ԱՌԱԽՈՏԵՍՆ ԵՐԳ ՇԽԱԿԱՆԱՅՆ պարագայութեան
կամաց առաջաւուած առաջաւուած առաջաւուած առաջաւուած
ԵՇ մարդ, այսօր շատ քընեցար նընջեցիր,
Առաւոտեան հով ժամանակին անցուցիր.
Երեգակը սարի ծայրէն ծագեցաւ,
Չերմութիւնը ձորն ու դաշտը սփռեցաւ:
Ընկերներդդ վաղ արտերը գընացին,
Յորին գարին երգ երգելով հընձեցին,
Խուրձ կապեցին, բարդ բարդեցին դաշտումը,
Նըստան հանգչել կաղնիների հովումը:
ԵՇ մարդ, վերկաց՝ սառը ջրով լուացուիր,
Գատիդ կապէ, գերանդիդ առ դաշտ հասիրաց
Քանի հովէ՝ հունձըդ արա՛ արտումըդ, ինչ
Հունձըդ հընձէ, մի ծուլանար գործումըդ:
Հունձըդ կապէ՝ բարդըդ բարդէ՛, տուն արի,
Հանգըստացիր, երբ քո հունձըդ կատարի,
Տնե՛ր գերանդիդ կախէ՛ պատին քո տանը,
Ես իրիկուան կըստարաստեմ սեղանը:
ԵՇ մարդ, հերիք ի՞նչ որ այսօր քընեցար,
Եչքըդ մէկ բա՛ց, տե՛ս թէ ո՞շչափ ուշացար.
Ո՞շչ աշխարհն ոտի վերայ բանումէ,
Զմեռուայ պաշար նա իւր համար հոգումէ:
Ի՞նչ ես պառկել ի՞նչ ես քնել, սիրական,
Երեգական շողը հասաւ մեր գըրան,
Մի՛ ծուլանար, ժամանակըդ խընայէ՛,
Եյն պիտի մեզ բոլոր ձմեռը կերակըէ:

ԽՍՍՍԻՐՑ ՏՂԱՅ

Գարեգինը: «Ո՞այր իմ, մայր, ասաց Գարեգինը
տուն վագելով, տես ի՞նչ սիրուն թուչուն եմ բոնել: ո՞հ

ի՞նչ գեղեցիկ թևեր ունի և ի՞նչ սիրուն փետուրներ,
տես, մայր իմ, այնպէս չէ՛, որ շատ սիրուն է»:

Ո՞այր: «Ո՞վ տուաւ քեզ այդ թուչունը, սիրելի որ-
դեակ, ասա ինձ, դո՞ւ ես բոնել թէ ուրիշը:»

Գարեգինը: Այս, մայր իմ, ես բոնեցի. մեր պարտէզի
պատումը այսօր մի բոյն գտայ ու այնքան սպասեցի,
մինչեւ որ թուչունն եկաւ մտաւ բոյնը. իսկոյն վագեցի
ու բոնեցի:

Ո՞այր: Եւ ի՞նչ կար բոյնի մէջը:

Գարեգինը: «Եորա ձագերն էին, սիրելի մայր իմ. ա՛ւ
ի՞նչպէս փոքր թուչնակներ էին, դեռ ես փետուր ու թևեր
չունէին:»

Ո՞այր: Այժմ ի՞նչ ես կամենում անել այդ թուչունը:

Գարեգինը: Կդնեմ վանդակի մէջ և մեր պատուհա-
նումը կը կախեմ, որ երգէ ու մեզ ուրախացնէ:

Ո՞այր: Այս, մեզ կուրախացնէ, բայց դորա ձագերն էլ
կուրախանա՞ն արգեօք: Եթէ քո մօրդ տանէին գնէին
բանտի մէջ, և քեզ էլ կերակող՝ հազցնող ու պահող
չլինէր, քեզ համար ուրախութիւն կլինէր, թէ սուրգ:

Գարեգինը: «Ի հարկէ սուգ կլինէր, մայր իմ, Աստուած
մի՛ արացէ, որ այդպիսի բան պատահի, ես առանց քեզ
իսկոյն կմեռանիմ ու մի օր չեմ կարող ապրիլ:

Ո՞այր: Ուրեմն՝ ինչ որ չես կամենում քեզ համար,
այն մի ցանկանար և ուրիշներին, մանաւանդ այն խեղճ
ու տկար թուչնակներին, որք այժմ անտեր՝ անօթի են
մնացել ու անհանդիստ են լինում իւրեանց մօր ուշա-
նալու համար. և զուցէ այն ողորմելիքն՝ եթէ փոքր
ի՞նչ էլ ուշացնես ու մնաս այդպէս անդութ, մի փորձան-
քի պատահին կամ անօթութիւնից սատակին:

Գարեգինը: Ո՞չ ո՞չ սիրելի մայր իմ, էլ չեմ ուշաց-
նել, ահա թողնում եմ թուչունը, թո՞ղ երթայ շուտով

ազատէ մահից իւր ձագերը: «Եերեցէք ինձ մայր, որ
ես անդժաբար վարուեցայ այն խղճալի անասնոց հետ.
ես չմտածեցի ամենեին, երբէք էլ չեմ անել այսպիսի
անգժութիւնը:

Ո՞յցին: Այդպէս, որդեակա, շատ ապրիս. մի՛ մոռա-
նար՝ որ անասուններն էլ ինչպէս և մարդս, Աստուծոյ
ստեղծած են, և նոքա էլ մեզ պէս զգում են ցաւու-
նեղութիւն:

Ի՞նչ էր կարծում, Գարեգնի արածը լաւ բան էր: Ի՞նչ պատ-
ճառաւ էր վատ: Մայրն ի՞նչ ասաց նորան այդ բանի համար:
Դուք էլ մետեւիր էր Գարեգնի օրինակին, թէ ոչ: Ի՞նչ ինչանա-
կեն—վանդակ, փետուր, անգում, անօթի, բանտ: Ի՞նչիս են
շինուած այս բառերս—անգում, տկար, տղէտ, անմիտ, անասուն:

ԲԱՐԵՍԻՐԸ ԵՐԵ Խ. 3

Համբարձման օրը, Ճաշի ժամանակին, մէկ հարուստ
մարդոյ որդի՝ անունը Լեռն, դուրսը խաղում էր իւ-
րեանց հարեւանի որդւոյ հետ: «Սոցա հարեւանը շատ
աղքատ ու խեղճ մարդ էր, մինչև անգամ օրական հացի
կարօտ: Ո՞ի փոքր ժամանակից յետոյ ծառայն դուրս
եկաւ ու Լեռնին Ճաշի կանչեց:

— Դարձեալ եկ, ասաց Լեռնին իւր աղքատ ընկերը.
Ես այստեղ կըսպասեմ քեզ, որ գաս ու խաղանք:
— Ճապա դու Ճաշ ուտելու չե՞ս գնալ, հարցրեց նո-
րան Լեռնը:

— Ե՞ս, ոչ, պատասխանեց միւսը հառաչելով, մենք
մեր տանը ուտելու ոչինչ չունինք:

Լեռնը գնաց տուն, փաթաթուեցաւ հօրն ու ասաց.
սիրելի հայր, ինդրեմ ասացէք ինձ, ո՞քան արժէ այն
շորերը, որ էգուց տօնիս պատճառաւաւ կամենում էք ինձ
համար գնել:

— Քանի մանէթ, պատասխանեց հայրը. բայց ընչել
համար ես հարցնում:

— Սիրելի հայր, ես խնդրում եմ, եթէ միայն կա-
րելի է, շորերիս փոխանակ այն քսան մանէթը տաք ինձ,
որովհետեւ խիստ շատ հարկաւոր է. իսկ շորեր ես շատ
ունիմ:

— Ծնչելի է հարկաւոր, որդեակ, հարցրեց հայրը:

— Ո՞ւր հարեւանի որդին, որի հետ ես երբեմն խա-
ղում եմ, ոչ թէ շոր, այլ հաց անգամ չունի ուտելու,
ես կամենում եմ նորան բաշխել այդ փողը:

— Այլը՝ տեսնելով որդւոյ այս բարեւարտութիւնը, համա-
ձայնեցաւ ուրախութեամբ: Լեռնը փողն ստացաւ թէ
չէ, դեռ ևս Ճաշ չկերած դուրս վազեց ուրախ ուրախ ու
տարաւ այն փողը իւր խեղճ ընկերոջ ծնողացը տուեց:

Ով կասէ, որ Լեռնի արածը վատ է: Իսկ եթէ ձեզ պատահէր,
կանէիք այդպէս: Ամենան մարդ էլ պարտական է Լեռնի օրի-
նակին նետեւել, այն է սիրել ու օդնել իւր լնկերին, թէ ոչ: —
Կրինեցէր այս պատմութիւնն ու գրեցէր:

Ի՞նչ կնշանակէ ուրախ ուրտիս: Խսկ եթէ ասէի ուրախս միւսւ-
նինը կնշանակէր, թէ ոչ: Արևմոն, ի՞նչ կնշանակէ տիսուր տիսուր,
մեծ մեծ, մանր մանր, շատ շատ, վատ վատ, լաւ լաւ, սիրուն
սիրուն: Ասացէք մի մի օրինակ այս բառերի վերալ (Ո՞ւր ան-
տառումը մեծ մեծ ծառեր կան ու սիրուն սիրուն ծաղկներ
եւ այլն):

Խ. 3. Ա. Ա. Կ.

Սիրելի Արամ:

Խմանալով քո բարի համբաւն ուսմանդ ու վարուցդ
մասին՝ շատ և շատ ուրախացայ. վասն որց ՚ի նշան առ
քեզ սիրոյս և հաճութեանս ուղարկում եմ աշա քեզ
համար մի լաւ արկղեկ, որ՝ յուսով եմ, կընդունես սիրով:
Այս փոքրիկ արկղի միջին կայ Ճաշատանի աշխարհա-

ցցցը, կտոր կտոր տախտակների վրայ կպցրած։ Դու
գիտես, որ այդ երկրի անունը, ուր կենում ես, և այսա-
տան է։ Ես կարծում եմ, որ քեզ համար ախորժ ու
զուարձալի խաղ կը լինի փոքրիկ կտորուանքն ՚ի միասին
միաւորելն, եթք որ ձմերային զիշերներն մօրաքեռդ կարի
սեղանի մօտ նստած կը լինիս. այս եղանակով դու կը
սովորես և այսատանի զանազան նահանգների և քաղաք-
ների դրութիւնն ու տեղերը, և երբոր քո փոքրիկ աշ-
խարհացցցիդ վերայ կդտնես Մասիս սարը, Ղմբաւիր,
Ընի, Շրտաշատ ու Աղարշապատ քաղաքների տե-
ղերը, չմոռանաս մտածել նոցա վերայ։

የኢትዮጵያ የሰጠውን ንግድ

ԱՌ ՄԱՅՐՆ ՀԱՅԱՍՏԱՆ:

Ինչո՞ւ ես տիրած, մայր իմ՝ այսաստան,
Դմ սիրուն աշխարհ՝ Հայոց քննակարան.
Թափիր քեզանից տիրութեան փոշին,
Կորոդ պՃնուիր զարդով թանկադին:
Երբ քո ցաւերդ աչերս տեսնում է,
Դառը կակիծով սիրտս այրւում է.
Քեզ եմ աղաջում, մայր իմ ծերացած,
Շարձի՛ր քեզանից ամպեր սեամած:

Արբազան հողդ քաղցր է ինձ համար,
Պառաւեալ մայր իմ, Հայաստան աշխարհ,
Երբեմն օտարաց կոխան է եղած,
Բայց էլի Հայոց քաղցր է անկասկած:

Աչքս բաց անեմ, Մասիսին նայեմ,
Ե՛ս, իմ կարօտս քեզանից կառնեմ.
Կարօտ սիրավառ՝ կարօտ մայրական,
Որ որդւոց սրտից կըդիսէ աննման:

Եմսուրբ Հայաստան, քեզ շատ եմ սիրում,
Եւ ոչ մի ըսպէ քեզ չեմ մռաւանում.
Երբոր տեղեցս ես վեր եմ կենում;
Քեզ համար յԱստուած աղօթք եմ անում:

Տիգրանն ու Տրդատը միմեանց հարևան էին ու ընկեր:
Առքա միշտ՝ ի միասին էին գնում ուսումնաբան ու գալիս.
բայց նոցա բնաւորութիւնն իրարից շատ տարբեր էր:
Տիգրանը շատ կամարար ու բարի երեխայ էր, միշտ
աշխատում էր ամենայն մարդց իւր խօնարհ ծառայութիւնը ցոյց տալ. իսկ Տրդատը ընդհակակառակն կամապաշտ ու խոռվասէր տղայ էր ու չէր կամենում բարութիւն անել և ոչ ոքի:

ՍԵԿԻ օր, ուսումնաբանումը, Տիղրանը խնդրեց Տրդա-
տին, որ մէկ զրիչ փոխ տայ, որովհէետեւ իրանը տանն էր
մոռացել: «Խմ զրիչները ինձ են հարկաւոր, ասուը պա-
տասխանեց Տրդատը, «Պնա՛քեղ համար զրիչ ճարէ:—
ՄԵԿ անդամ էլ Տիղրանը խնդրեց նորան, որ իրան օգնէ
ծաղկելները ջրելու: «Ես քո հօր մշակը չեմ, ասաց բար-
կութեամբ Տրդատը, որ քո ծաղկելները ջրեմ, գնա քեղ
համար մշակ վարձէ:»

Անցաւ մի քանի օր, Տիգրանն ուսումնարանումը
տեսաւ, որ Տրդատը մոռացել է իւր զրիչները տանն,
ու արտում նըստած՝ այլոց զրիչներին է նայում և չէ
վստահանում ուղելու։ Տիգրանն այս որ նշմարեց՝ իսկոյն
ասաց նորան քաղցրութեամբ. ասիրելի եղայր, ընչե՞ես
այդպիս տխուր նստել, ահա քեզ իմ զրիչներս, ընտրէ և
վեր առ, որը կամենում ես. երեխ քո զրիչներդ տանն ես
մոռացել։

ԱԿ կիրակի օր էլ Տրդատը տեսաւ, որ Տիգրանը
մի փունջ ծաղեկ էր քաղել իւրեանց պարտէզեցն ու
տանում էր տուն իւր մօր համար: Տիսուր տիսուր մօ-
տեցաւ ու ասաց նորան հառաչելով. «Ես, ի՞նչ լաւ
կլինէր, որ ես էլ մեր պարտէզումը ծաղեկներ ունենայի
ու մօրս համար քաղեկի տանէիս: «Եթէ կամենում ես»,
ասաց իսկոյն Տիգրանը, «արի գնանք մեր պարտէզը ու
որքան և կամիս քաղէ իմ ծաղեկներիցս ու տար մօրդ
համար: Ինձ համար մեծ ուրախութիւն է քո ցանկու-
թիւնը կատարել ու քեզ օգտակար լինիլ»:

Տրդատը՝ տեսնելով Տիգրանի բարեսրտութիւնը,
խիստ ամաչեցաւ ու նոյն օրից սկսեց թողուլ իւր վատ
քնաւորութիւնը, և ջանալ Տիգրանի նման բարի ու
կամարար երեխայ լինիլ:—

Ի՞նչպէս էր կարծում, սիրում էին Տրդատին իւր բնկերները,
թէ ոչ: Ի՞նչ պատճառա: Կրկնեցէր այս պատմութիւնն ու զրեցէր:
Ասացէր այս բառերի նշանակութիւնը—բնաւորութիւն, տար-
րեր, վարձել, նշարել, ընտրել, փունջ, ջանալ, վստահանալ:
Ասացէր ինչպէս են շինուել եւ ինչ կնշանակին այս բառերս—
կամարար, խովասէր, կամապաշտ:

Պ Ա Տ Բ Ա Ս Ա Կ Ա Մ Ե Խ Ա Յ

Երշամը քանի մի երեխայից հետ խաղում էր դաշտու-
մը: Մի անձանօթ ձանապարհորդ անցկենալիս հարց-
րեց նորան մերձակայ գիւղե ձանապարհը, ուր կամենում
էր նա գնալ:

Երշամն իսկոյն յառաջ եկաւ և ուրախ գէմքով ասաց.
«Ես կարող եմ ձեզ այն գիւղե ձանապարհը ցոյց տալ,
պարոն, որ չմոլորիք:» Յետ այնորիկ գնաց ու ցոյց տուաւ
օտարականին հեռուից գիւղը:

Դանապարհորդը քաղաքավարութեամբ շնորհակալու-
թիւն արեց ու կամենում էր փող բաշխել բարի երխային
իւր աշխատութեան համար, բայց Երշամն ոչինչ չտուաւ
ասելով. «Ինձ համար մեծ ուրախութիւն է պարոն, որ
կարողացայ ցոյց տալ ձեզ այս իմ չնչին ծառայութիւնս:
Մնաք բարեաւ ու գնացէք խաղաղութեամբ:»

Ով կը կամենայ Արշամին նմանիկ: Ուրեմն նա լաւ տղայ էր:
Պատմէ, տեսնեմ, նորա արած լաւութիւնը կամ բարի գործը:—
Այս պատմութիւնս ծեր խօսքերով գրեցէք:

Վ Տ Ա Խ Օ Ա Տ Դ Ա Յ

ԱԿ որկրամոլ տղայ իւր հօր սեղանի վերայ եփած
խնձոր գտնելով՝ առնում ուտում է: Հայրը գալիս է
տուն, տեսնում է խնձորը չկայ, հարցնում է տղային.
«Խնձորն ի՞նչ էլաւ, չլինի՞ թէ առած կերած լինիս
գու:»—«Ու, հայր, ես առած չեմ:»—«Կ ատ լաւ,
որդիս, շատ ուրախ եմ, որովհետեւ մէծը թոյն էի դրել
ես՝ մլները ջարգելու համար:» Եւս որ կլսէ տղայն,
երեսի զոյնը կերթայ, գլուխը կպտըտի ու քիչ կմնայ՝
որ վայր ընկնի: «Ի՞նչ է, որդիս, ի՞նչ պատահեցաւ
քեզ:»—«Ու, հայր, թունաւորուած եմ:»—«Ուրեմն
գո՞ւ ես առել կերել խնձորը. մի՛ վախենար, թունաւո-
րուած չես. կամենում էի միայն գողը բռնել վասն որոյ
և ասացի՝ թէ թոյն կար խնձորի մէջ:

Չեզ հետ էլ պատահում էն այսպիսի ստախօսութիւններ, թէ ոչ:
Ասացէր, ինչպէս է կազմուել եւ ինչ կնշանակէ որկրամոլ: բառը:

Ն Ա Խ Ա Զ Զ Ա Տ Ք Ո Յ Ր

Մեզնից շատ առաջ կար մի թագաւոր,
Հոգւով գեռ արի՝ գլխով ալեոր.

Ո՞եծ ծով էր պատել նորա աշխարհը,
Ոսկի ասացին զիտունք այն դարձ: յ ըլլաւ մայիսի
Ունէր նա երկու մատաղահաս աղջիկ,
Մինը խիստ տրգեղ, միւսը գեղեցիկ.
Մի օր տրգեղը ասաց միւսին,
«Երթանք ծովի ափ, քուրիկ միասին»:
Սիլունը դընաց առաջեց տրտում,
Տրգեղը ետնից՝ ուս պահած սրտում.
Հաղիւ թէ ծովի ափին էր հասած,
Խւր սիրուն քըրոջ գըլորեց նա ցած:
Կանչեց կիսամեռ սիրունը ջըրից.
«Քուրիկ իմ, քուրիկ, փրկէ ինձ մահից.
Ես ունիմ տանը գեղեցիկ մանեակ,
«Ե՛ս, էն քե՛զ լինի, պարգևէ ինձ կեանք»....
— Լին առանց քեզ էլ կարող եմ ստանալ,
Խնձնից փրկութիւն դու բնաւ մի' յուսալ:—
«Քուրիկ, թէ այդ էլ քեզ չէ բաւական,
Կտամ քեզ ոսկի պըսակ պատուական».
Լին առանց քեզ էլ կարող եմ ստանալ,
Խնձնից փրկութիւն դու բնաւ մի' յուսալ:—
«Քուրիկ, մի' թողուլ դու ինձ անտէրունչ,
Քեզ սիրուն փեսաս կրտամ անտրտունջ»:
Տրգեղի սիրու դարձել էր ժեռ քար,
Քըրոջ խնդիրքը թողուց անկատար:
Զկնորսը ծովը ձրգեց մեծ ուռկան,
Խըռնեց մարմինը սիրուն աղջկան.
Քըրիցը հանեց, դրեց ափի մօտ,
Շատ ծաղիկ ցանեց վլրան ու շատ խոտ:
Մի աշուղ անցաւ, տեսաւ աղջկան,
Լացեց ու առաւ, դըրեց ուսի վրան.
Տարաւ իրա տուն այդ անգին գիւտը,

Չորացուց նորա մարմնց դիփ հիւթը:
Գեղեցիկ տաւիղ շինեց ոսկերից,
Քաղցրաձայն լարեր հիւսեց մաղերից.
Երբ որ ամեն բան պատրաստեց կարգին,
Գընաց արքունիք տաւիղը ձեռքին.
Երբ մըտաւ դահլիճ շըքեղ զարդարած,
Տեսաւ տրգեղին փեսի մօտ կանգնած.
Բացեց բերանը, լարերին խըփեց,
Հիւրերի առջեւ քաղցրաձայն երգեց.
«Հընչէ, իմ տաւիղ հնչէ համարձակ,
Հարազատ քըրը խըլեց իմ պըսակ.
«Լըսէ, իմ ծընօղ, լըսէ սիրական,
Հարազատ քըրը խըլեց իմ փեսան.
«Լսէ, ժողովուրդ, լըսէ անխըռով,
Հարազատ քըրը գըլորեց ինձ ծով:
Միւս օր գահիճքը խարոյկ շինեցին,
Մահապարա քըրոջ մէջը զլորեցին.
Հուրը պըլպըլաց, աղջեկը կանչեց.
«Իմ մեղաց համար Աստուած ինձ պատժեցա:

Պատմեցէր այս երդի միտքը մեր բառերով ու դրեցէր:
Ասացէր այս բառերի նշանակութիւնը—մատաղահաս, զիւտ,
հիւթ, տախի, լար, հիւսել, շնեղ, հարազատ, դահին, խարոյկ, դլորել:
Ի՞նչպէս են շինուած այս բառերս—կիսամեռ, մատաղահաս,
տղեղ, անտէրունչ, անտրտունջ, մնկատար: Ի՞նչ կնշանակէ «կատար»: (Ծայր, վերջ): Կարելի է առել «կատար լերին»: Ուրեմն
ի՞նչ կնշանակէ «կատարել, կատարած»: իսկ «անկատար»: Ի՞նչ
կնշանակէ «կատարեցաւ նա առ Աստուած»:
Ի՞նչ են նշանակում ու երբ են զործ ածւում այս բառերս—
քուրիկ, մայրիկ կամ մարիկ, հայրիկ, մանկիկ, զառնիկ, հոգեակ,
աղաւնեակ, թոշակ, եւ այլն:

ՃՐՁԱԳԱՑՈՒԹԻՒՆ ՄՅՐ ԻՒՐ ՓՈՔՔԻԿ ԴՍՏԵՐ ՀԵՏ:

Մայրն: Կնչպէս քաղցր ու ախորժելի է երեւմ մա-
յիս ամիսն այն սաստիկ ձմեռէն յետոյ: Այս կաղնու-

տակին՝ կանաչ խոտի վերայ մի փոքր կնատիմ ես ու
կհանգստանամ, իսկ դու, աղջեկս, որովհետև ծաղեկ շատ
ես սիրում, գնա քաղե ինչքան կամենաս:

Դրաստին: Ո՞չ, այս ինչ գեղեցիկ՝ գոյնդգոյն ծաղեկ-
ներ են. երկու մեծ փունջ կշնեմ, մայր իմ, մէկը քեզ
համար, իսկ միւսն ինձ:

Մայր: Տե՛ս, ահա այս վայրի վարդենու տակին ի՞նչ
սիրուն մանուշակներ կան: «Եոցա անոյշ հոտը մինչև
այստեղ է դալիս:

Դրաստին: Այո՛, ինչպէս անոյշ հոտ ունին, ես կար-
ծում էի՞ որ դոքա միայն պարտէղումն են դուրս գալիս:
Մայրիկ: այս մանուշակների միջի սպիտակ ծաղեկների
անունն ի՞նչ է. սոքա էլ լաւ հոտ ունին:

Մայր: Դոքա կոչում են գարնանածաղեկ:

Դրաստին: Իսկ սոքա՞:

Մայր: Յակինթ ու մարդարտածաղեկ:

Դրաստին: Ի՞նչպէս գեղեցիկ ծաղեկներ են. ոմանք
բոլորովին բացուել են, միւսները գեռ կիսաբաց: **Մայրիկ:**
ինչո՞ւ ծաղեկներն իւրեանց շուրջը մի կանաչ պատեան
ունին:

Մայր: Օաղեկը պաշտպանելու համար է այն պա-
տեանք, և կոչում է բաժակ: Խիստ քիչ ծաղեկ կայ,
որ բաժակ չունենայ, որդեակ:

Դրաստին: Ո՞չ, մայրիկ, խելքս գնում է այս ծաղեկ-
ների վերայ. տես ի՞նչ շատ տեսակ ծաղեկներ կան այս-
տեղ՝ սպիտակի, դեղին, կարմիր, կապոյտ, կանաչ մանու-
շակագոյն. ամէն գունի էլ կան, ոմանք մեծ են ու ոմանք
փոքր. ի՞նչպէս է սոցա անուններն մայրիկ:

Մայր: Ես ինքս էլ չգիտեմ, որդեակ. ամենիցն էլ
քաղե՞ր ու ցոյց տուր երեկոյին հօրդ, որ ասէ քեզ անուն-
ները. իսկ դու միտքդ պահէ, որ ինձ էլ սովորեցնես:

Դրաստին: Արդէն ես շատ ծաղկի անուն գիտեմ: զըր
օրինակ վարդ, մեխակ, յասմիկ, մարգարիտ, մանուշակ,
յակինթ, շուշան. . . և եթէ նոցա տեսնեմ՝ կճանաչեմ էլ:
Բայց այս անտառիս եղերքին գտնուած սպիտակ ծաղեկ-
ներն ի՞նչ են, մայրիկ: «Եոքա՝ ինչպէս տեսնում ես,
մարգարտի են նման, միայն թէ աւելի խոժոռ են:

Մայր: Այդ մի՛ քաղեր, ելակենւոյ ծաղեկներ են
գոքա, որք ամառը պիտի ելակ (մորի) գառնան, որ դու
շատ սիրում ես:

Դրաստին: Ի՞նչ ես ասում, մայր, ուրեմն այն փայլուն
ու կարմիր ելակները յառաջ այսպէս սպիտակ ծաղեկի են
լինում:

Մայր: Այո՛, զաւակս, ինչպէս որ կանայքն էլ յառաջ
փոքրիկ աղջկունք են լինում: Ինձ որ այժմ այսպէս մեծ
ես տեսնում, ժամանակով ես էլ քեզ պէս փոքրիկ աղջեկ
էի, մօրս հետ ման էի դալիս, նորան սիրում էի ու
խօսքիցն երեկք չէի դուրս գալիս:

Դրաստին: Դաշտի միւս ծաղեկներն էլ պէտք է ելակի
պէս պտուղ տան, թէ ոչ:

Մայր: Ոչ նոքա պտուղ չեն տալ:

Դրաստին: Ուրեմն ոչինչ բանի օգտակար չե՞ն նոքա:

Մայր: «Եոցա միջին ոչ մի անօդուտը չկայ, որդեակ
իմ, մեղուներն նոցա մեջիցն են ծծում ու հաւաքում
իւրեանց քաղցրահամ մեղը:

Դրաստին: Իսկ ծաղկանց տերեւներն ընչե են պէտք,
մայրիկ, կարծեմ ոչ մի բանի պիտանի չեն նոքա:

Մայր: Ի՞նչպէս պիտանի չեն. նայէ՝ տես թէ որպիսի՛
ախորժակով են ուտում նոցա այն կովերն ու նոցանից էլ
կաթը շինում: իսկ մենք այն կաթը խմում ենք, այն
կաթնիցը սեր, մածուն, իւղ, պանիր, կաթնապուր և
ուրիշ շատ համեղ կերակուրներ ենք շինում՝ ուտում:

Դաւագին: Ես չեմ իմանում, որ կաթը բոյսերով ու
մեղքը բոյսերի ծաղիկներով են շինուում:

Մայր: Բոյսերն ու տունկերն ուրիշ շատ օգուտներ
էլ ունին. մեղուները նոցանից միայն մեղք չեն շինում,
այլ և մոմ, որ խակապէս մեղքամոմ է կոչուում. ոչխարները՝
նոցանով կերակրուելով, մեզ կաթն ու բուրդ են տալիս.
իսկ հաւերը նոցա հունտերն ուտելով՝ ձու են ածում:

Դաւագին: Բայց բոյսերն ու տունկերը ո՞վ է շինել
մայր իմ:

Մայր: Աստուած, աղջեկս:

Դաւագին: Այս դաշտում նոքա ի՞նչպէս են դուրս
գալիս ու մեծանում, երբ նոցա այստեղ ցանող ու ջրող
չկայ, նոցա վերայ նայող ու հոգացող չկայ, ինչպէս որ
մեր պարտիզել ծաղիկների վերայ նայում ու հոգացողու-
թիւն է անում պարտիզանը:

Մայր: Երեւ նոցա տաքացնում է, որդեակ իմ, անձ-
րեւ ջրում: իսկ քամին նոցա սերմերն այս կողմն ու այն
կողմը ցրուելով՝ կրկն նոցա սերմանում է, որ միւս
տարին էլ դուրս գան:

Դաւագին: Ո՞չ, ինչպէս ձարտար ու իմաստուն է
Աստուած:

Մայր: Այսո՛, սիրելի զաւակս, «Ես է ստեղծել արեւ,
քամին, անձրեւ ու բոյսը. «Ես է ստեղծել այն մեղուն,
որ ծաղիկներից մեղք է շինում ու մեղքամոմ: այն կովը,
որ խոտից կաթն է շինում, և բոլոր մարդիկը, որ այս
ամէն բարիքը վայելում են, ու շատ անգամ ապերախտ
գտնուում իւրեանց ստեղծողի դէմ, փոխանտէկ որ նորա
սուրբ անունը օրհնեն ու պատուիրանքը միշտ պահէն:

Դաւագին: Ո՞չ, ինչպէս բարի է Աստուած, որ ոչ
միայն մարդկանց, այլ և անասուններին ու բոյսերին ևս
խնամում է. բայց թէ որ Աստուած չլինէ՞ր, մայրիկ:

Մայր: Այս ժամանակն ոչ տունկ, ոչ բոյս, ոչ ծա-
ղիկ, ոչ պտուղ ոչ մեղու, ոչ հաւ, ոչ ոչխար, ոչ կով,
ոչ փոքրիկ աղջկունք, ոչ հայր, ոչ մայր չեր լինիլ. որով-
չետեւ Աստուած է նոցա ստեղծել:

Դաւագին: Ո՞չ, ինչպէս կուզէի Աստուածոյն տեսնել ու
ձանաչել, մայրիկ:

Մայր: Ծառ որ ուզում ես մի օր նորան տեսնել, նո-
րա օրինակին հետեւէ ու բարեգործ եղիր:

Դաւագին: Բարեգործութեան համար տարիքս դեռ
փոքր են:

Մայր: Որդեակ իմ, այդ քո փոքր տարիքովդ կարող
ես բարեգործութիւն անել եթէ կամենաս: Ո՞վ քեզ
կարգելէ աղքատներին ողորմութիւն տալ, մերկերին՝ հին
կամ աւելորդ շորերդ, քաղցելոց՝ հաց կամ կերակուր: Ո՞վ քեզ
կարգելէ, որ Աստուածաէր, ժամանակ, եղա-
բարակաէր ու ընկերասէր լինիս: Բայց ժամանակ է, անոյշ
զաւակս, որ վերադառնանք տուն. որովհետեւ մթնում է,
հայրդ էլ յոգնած կայ տուն, ու մեզ տանը չգտնելով՝
միայնակ կմնայ, գուցէ անհանդիստ էլ կլինի:

Որպիսի ծաղիկների անուն պիտէք: Ո՞վ է խնամում եւ պահպա-
նում ծաղիկներին ու բոյսերին դաշտում: Ի՞նչ են շինում ծաղիկ-
ներից ու բոյսերից մեղուն, կովը, ոչխարն ու հաւը: Խակ սոքա
ամէնը, թէ բոյսերն ու թէ կենդանիին ում օգտի համար են ստեղ-
ծուած: Եւ մեր այսափ բարեաց փոխարէնը ինչ պիտի հատու-
ցաններ մեր Ստեղծողին: Փորր տղայն էլ կարող են Աստուածոյ
զոհութիւն մատուցանել, նորա սուրբ պատուիրանքը պահել ու
բարեգործութիւն անել: Ի՞նչ բարեգործութիւն կարող են նորա
անել:—Կրկնեցէք երկուսով այս (մօր եւ զստեր) խօսակցութիւնը,
մէկդ մօր տեղակ, միւսդ զատեր:

Ասացէք ինչպէս են շինուել այս բառերը—բարեգործութիւն,
շրջադայութիւն, զոյնգգոյն, կաթնապուր, մեղրամոմ, ապերախտ:

Ի՞նչ զանագանութիւն ունին «ծաղիկ եւ բոյս, ծառ եւ կաղնի,
մարդ եւ կենդանի» բառերը: «Ծառ, բոյս եւ կաղնի» բառերիցն
որն է ցուցանում հասարակ սեռը, եւ նրն նորա տեսակը:

Ու ե չ Ա ն մ ա ն ա կ ա ւ մ ա մ ա ն ա կ ա ւ
 Դ ա շ տ ո ւ մ բ ո ւ ս ա ծ ու բ ա ց ո ւ ա ծ,
 Խ ե ղ ձ ը յ ա ն կ ա ր ծ թ օ շ ն ե ց ա ւ,
 Ու ժ ն ու շ ն ո ր հ ք ը դ լ ն ա ց .
 Ծ ո լ ո ւ ց գ ր լ ո ւ խ ը մ է ջ ք ի ն ,
 Չ ո ր ա ն ա լ ո ւ ն կ ր ս պ ա ս է ր ,
 Մ է կ կ ո ղ մ ա ն է կ ե փ ի ւ ո խ ն
 Գ ա ն դ ա տ ե լ ո վ ա յ ս կ ա ս է ր :
 « Ե ՞ հ , ի ն չ կ լ ե ն է ր ի մ բ ա ղ դ է ս
 Շ ո ւ տ ո վ ծ ա դ է ր ա ր ե ր ,
 Դ ա շ տ ե ր ն ո ր ի ն բ ա ղ զ ը ՚ ի տ ե ս
 Օ ա ր դ ա ր ո ւ է ի ն լ ո ւ տ ո վ ը .
 Գ ո ւ ց է ն ա ի ն ձ է լ բ ա ժ ի ն
 Հ ա ն է ր կ ա ր մ ի ր լ ո ւ ս ի կ է ն ,
 Ի ն ձ է լ տ ա ր ն ա ա յ ն հ ո գ ի ն ,
 Կ ե ն դ ա ն ա ն ա յ ի ն ո ր է ն ո :
 Բ ը զ է լ մ ի կ ա ր ն ո յ ն տ ե զ ը
 Ի ր ա ն գ ո ր ծ ի ն ը զ բ ա ղ ա ծ ,—
 Ծ ա ղ կ ի ն ս ի ր տ ա լ ո ւ ն տ ե ղ ը ,
 « Ե ա յ է խ ե ղ ձ ի ն ի ն չ ա ս ա ց .
 « Շ ա տ մ ի ա մ ի տ ե ս ե ղ է ր
 Դ ո ւ ն է լ , Ո և հ ա ն գ ր ա ց ի ս ,
 Ա ր ե դ ա կ ի ն խ ի ս տ հ ո դ ն է ր ,
 Ո ր դ ու ծ ա ղ կ ի ս կ ա մ թ օ շ ն ի ս .
 Խ ո ս ք ի ս դ ու լ ա ւ ն ը շ ա ն գ ի լ ,
 Ա ր ե դ ա կ ը ա յ դ բ ա ն ի ն
 Զ լ ի ն ի ր ե ր բ է ք ու շ ա դ ի ր .
 Մ է ղ ք է լ է ի ւ ր ա տ ե ն ի ն :
 Թ է դ ու ի ն ձ պ է ս թ ը ռ չ է ի ր

Մ է կ ա շ խ ա ր հ ի ց մ է կ ա լ ը ,
 Ը չ ք ո վ դ կ ը տ ե ս ն է ի ր ,
 Թ է ա յ ն մ ե ծ ի ն ք ն ա կ ա լ ը
 Ո ր ք ա ն լ ե ո ն ե ր ու դ ա շ տ ե ր ,
 Ծ ա ո ւ ց ծ ա ղ կ ա ն ց մ ո ղ ո վ ը
 Կ ը դ ա ր մ ա ն է կ ե ն ս ա ր ե ր ,
 Ի ւ ր պ ա տ ո ւ ա կ ա ն շ ո ղ ո վ ը :
 « Ե ո ր ա տ ա ք ծ ա ո ւ ա դ ա յ թ է ն
 Մ է ծ մ ե ծ ն ո ծ ե ր կ ա ղ ն ի ն ե ր ,
 Կ ո ւ ո ծ ա ն ա ն և ո յ ժ կ ա ո ն ե ն ,
 Կ ա ր ձ ա կ ի ն ճ ի ւ ղ ե ր ո ս ա ե ր .
 Ի ՞ ն չ ա ն ո յ շ հ ո տ ո վ ծ ա ղ կ ո ւ ն ք
 Ա ր ե ի ց հ ի ւ թ կ ր ձ ը ե ն ,
 Ի բ ր ւ գ ո յ ն ր զ զ ո յ ն ա կ ո ւ ն ք
 Պ ա ր տ է զ ն ե ր կ ը զ ա ր դ ա ր ե ն ,
 Բ ա յ ց խ ե ղ ձ ո ւ կ Ո և հ ա ն ը ո ւ ր ,
 Ե ւ ա յ ն ծ ա ղ կ ա ն ց բ ա ն ը ո ւ ր :
 Ի ՞ ն չ պ է ս ա մ ե մ , բ ա ր ե կ ա մ ,
 « Ե ո ց ա յ ա ր դ ն ա յ ն ք ա ն մ ե ծ է ,
 Ո ր ժ ա մ ա ն ա կ ը ն ա ն դ ա մ
 Զ ո ւ ղ ե ն ա լ ո վ կ ը հ ը ն ձ է .
 Ի ս կ դ ո ւ ն ո չ տ ե ս ք մ ի ո ւ ն ի ս ,
 Ե ւ ո չ հ ո տ մ ի կ ա ր դ է դ ո ւ ր ս .
 Ո ւ ս տ ի լ ա ւ է , ո ր դ ա ղ ր ի ս ,
 Ա ր ե ն է լ հ ա ն դ ի ս տ թ ո ղ ո ւ ս :
 Դ ո ւ ն մ ի յ ո ւ ս ա ր , ո ր վ ը ր ա դ
 « Ե ա մ է կ ն ը շ ց լ մ ի ձ ր դ է .
 Ի ն ձ մ է գ ո ւ ք ե ղ ա ն ի ս ի ր ա տ ,
 Զ ա յ ն ը դ ք ա շ է ու թ ո ո ւ մ է :
 Բ ա յ ց ա ր ե կ ի կ ը ն է լ ա ւ բ ա ց ո ւ ե ց ա ւ ,
 Ծ ա ղ կ ա ն ց դ ա ր ա ս ա ր լ ո ւ ս ո վ լ լ ո ւ ե ց ա ւ

Եւ խեղճ Ուհանն էլ, որ յոյժ թօշներ էր,
“Սորա երկնային աչքէն ողջացաւ:

Ո՞վ մեծամեծք և իշխանք,
Որոց Բարձրեալըն Աստուած
Բարձր աստիճան է տըւած,
Խմ արևէս առէք գուք ձեզ օրինակ.
“Սայեցէք արեգակին.—
Ո՛ւր որ հասնի արեւիլը,
Յօէ ձընծաղկին՝ թէ նոճին,
Հաւասար կանէ բարիքը.
“Սովաւ ամէն արարած
Կուրախանայ կը ցընծայ,
Ամէն բան զըւարթացած
Յիրաւի կերջանկանայ:
Ուստի նորա սիրովը
Ալ վառին սիրտք ամենայն,
Ինչպէս փայլուն լուսովը
Շիւրեղներն արևելեան,
Եւ ամէնքը մէ՛կ բերան
“Սորա օրհնենքը կըտան:

Մ Ե Ծ Ս Ե Ղ Ա Ն

Ծէկ վարժապետ, հնձի ժամանակն, ասաց իւր աշաւ-
կերտներին. «Ես այսօր մտաղիր եմ ձեզ մի մեծ սեղան
ցոյց տալ, որոյ վերայ ամբողջ տարին ուժում են ու կշա-
նում ոչ միայն քանի մի քաղցած մարդիկ, այլ նաև
հազարաւոր ժողովուրդ ու կենդանիք»: Այս որ ասաց,
առաւ տարաւ աշակերտներին մի բարձր լերան գլուխ,

ուստի երեսում էր մէկ ընդարձակ կանաչազարդ ու պտղա-
լից դաշտ, ուրանօր ցորենի՝ հաճարի և միւս արմտեաց
անթիւ արտերն ոսկեգոյն փայլում էին, այդիների՝ պար-
տէկների և անտառների ծառերը կարմրափայլ պտուղ-
ներով ծանրաբեռնած էին, և Աստուծոյ ամենառատ
ձեռն սփռել էր անխնայ իւր ամենայն բարութիւնը:

«Տեսէ՛ք, սիրելի աշակերտք, ասաց նոցա վարժապետը՝
ցուցանելով դաշտը. այս է աշա՛ այն մեծ սեղանը, որ
ամէն օր ամէն արարածոց համար պատրաստում է մեր
ամենողորմ հայրն, որ երկնքումն է, և առատապէս
լրնում է նորան կերակուրներով: Մենք ամէնքս նորա
հիւրերն ենք. նա իւր անհուն ողորմութեամբը կշտա-
ցնում է ոչ միայն մեղ մարդկանց, այլ նաև անթիւ
անհամար թռչուններին, զեռուններին, սողուններին ու
գաղաններին: Ուստի պարտական ենք միշտ խորին շնորհա-
կալութեամբ դարձնել մեր աչքը դէպի այն բազմախնամ
ու անտեսանելի բարերարն մեր:»

Վարժապետի խօսքերը աղայոց սրտի մէջ շատ խոր
տպաւորուեցան, և երբ սարիցն իջանում էին՝ աշակերտ-
ներից մէկն ասաց. «Այժմ լաւ հասկացայ այն աղօթքի
միտքը, որ ասում է. Աչք ամենեցուն՝ ի քեզ Տէր յուսան,
և դու տաս նոցա կերակուր՝ ի ժամու, բանաս զամենառատ
ձեռն քո և կերակրես զամենեսին աստուածային կամօք
քովք: «Քանի՛ քանիցս անգամ այս խօսքերս դուրս են
եկել իմ բերանիցս, բայց ես նոցա միտքը չեմ հասկացել:»

Այն մեծ սեղանիցը դուք էլ վայերնում էք թէ ոչ: Խոկ նորա
պատրաստողին էլ յիշնամ էր արդեօք:—Կրկնեցէք այս պատմու-
թիւնս ու գրեցէք:—Ասացէք այս բառերի միտքը—զեռուն, սո-
ղուն, սփռել:

Ի՞նչպէս են շինուած բառերս—մտաղիր, պտղալից, կարմրա-
փայլ, ծանրաբեռնած, ամենառատ, անխնայ, բազմախնամ:
Ի՞նչ զանազանութիւն կայ հնագար եւ հազարաւոր, հարիւր եւ
հարիւրաւոր, բիւր եւ բիւրաւոր բառերի մէջ:

ԱՍՏՈՒՆՈՅ ՄԵԽՈՒԹԻՒՆԸ ԻՒԹ ԳՈՐԾՔԵՐԻՑՆ Է ԵԲԵԿՈՒՄ:

Ինչո՞ւ այնչափ շքեղ ու փառաւոր են Աստուծոյ գործքերը: Ինչո՞ւ մեր շքակայ անթիւ անհամար առարկայքը մէկը միւսից գեղեցիկ են ու զարմանալի: Անշուշտ նորա համար է, որ չգաղարինք երբէք հիանալ ու պաշտել այն մէծ լակը, որ բիւր անգամ աւելի գեղեցկագոյն՝ շքեղագոյն՝ փառաւորագոյն ու վսեմագոյն է մեր տեսած բոլոր առարկայիցը, որ կարողանանք միշտ մեզ ասել: «Եթէ գործքերը այնպէս փառաւոր ու կատարեալ են, ապա ի՞նչ կլինի նոցա գործողն ու ստեղծողը: Եթէ արարածներն այսպէս գեղեցիկ ու հիասքանչ են, ապա ի՞նչ կլինի Արարչի գեղեցկութիւնն:

Եթէ արեի լոյսն այնպէս պայծառ ու սաստիկ է, որ նայել անգամ չենք կարողանում վրէն, ապա ո՞րչափ և ո՞րպիսի անմերձնաւլի և անիմանաւլի լոյս պիտի լինի նորա ստեղծողն ու լոյս պարզեռն: Պիտի զարմանա՞նք ուրեմն, թէ ինչու մինչև ցայսօր ոչ ոք 'ի մարդկանէ Աստուծոյ երեսը չէ տեսել ու երբէք էլ չի կարող տեսանել: Մի թէ Ստեղծողն իւր ստեղծեալներիցն առաւել սքանչելի պիտի չլինի: Թաէ որ կարողանայինք հասկանալ նորա անհուն մեծութիւնը, էլ նա Աստուծ չէր լինիլ և մենք էլ մարդիկ, այլ մէկ մէկ Աստուծ կլինէինք:

Ուրեմն՝ այսուհետեւ աշխարհիս կամ բնութեան գեղեցկութեան վերայ զարմանալիս, նոցա Արարիչը միտներդ բերէք, նորա սուրբ անունն օրհնեցէք ու նորան միշտ գոհութիւն մատուցէք, զի մեր Արարիչն ևս նա է, որոյ անհուն ողորմութեամբն ապրում ենք ու անչափ բարութիւնը վայելում:

Կրկնեցէք մեր խօսքերով այս պատմութեանս միտքը: Ասացէք այս բառերի նշանակութիւնը—շքեղ, հիասքանչ, անմերձնալի, սրանցիլ, վայելել, կատարեալ, շրջակայ, անշուշտ, վսեմ, հիանալ, էակ:

Ա. Մ. Ա. Ռ. Ա. Յ. Շ. Պ. Գ.

Ամառուան շոգ օրերից մէկն էր: Աաթինիկն քրտինքը սրբելով սկսաւ տրանջալ ու գանգատիլ մօրը, թէ շոգիցը շատ է նեղանում, ու դժուարանում է մինչև անգամ շոնչ առնեուլ: — Այժմեան շոգի պատճառը, պատասխանեց նորան մայրը, ես քեզ քանի մի շաբաթից յետոյ կասեմ: այժմ այսքանս միայն կարող եմ ասել քեզ որ այդ Աստուծոյ կամքն է, իսկ Աստուծ չի անիլ և ոչ մի բան մեզ վնասակար:

Աաթինիկը լուռ կացաւ՝ հաւատալով մօր խօսքերին, որոյ բերանիցը միշտ ձշմարտութիւններ էր լսում: Ամէն կերպ ջանք արաւ, որ անտրտունջ համբերութեամբ տանի ամառուան շողը, որ դեռ բաւական ժամանակ պիտի շարունակուեր:

Օգոստոս ամիսն Անցաւ ու շոգն էլ վերջացաւ: Աշնան հով ու գեղեցիկ օրերը կարծես թէ հրաւիրում էին Աաթինիկն գնալ այդին, ուր հասած՝ կարմիր պտուղները փայլում էին ծառոց տերեւների մէջ, ու խաղողի էլ քաղելու ժամանակն էր: Աաթինիկի ուրախութիւնն անպատմելի էր, երբոր կարմիր խնձորներն՝ խաղողի սե ու սպիտակ ողկոյզները՝ հասած գեղձն ու տանձը տեսաւ:

«Ոհ, մայր իմ, ի՞նչ սքանչելի պտուղներ է պարզեել մեզ Աստուծ, կանչեց Աաթինիկը հիացած: — Այո, աղջիկս, պատասխանեց մայրը. բայց մի միաքադ բեր, որ դու մէկ ժամանակ տրտնջում էիր Աստուծոյ վերայ, որ քեզ կամենում էր այս պտուղներս պարզեել: Պիտացիր, ուրեմն, որ այս պտուղներիս գեղեցիկ գոյն ու քաղցր համ տուողն այն շոգն էր, որոյ վերայ մի քանի շաբաթ յառաջ գու գանգատում էիր ու չէիր կամենում համբերութեամբ տանիլ:

Կրկնեցէք այս պատմութիւնը մեր խօսքերով ու գրեցէք: Ի՞նչ կնշանակէ տղկոյզ»: Ասացէք, ինչ պտուղներ զիտէք, որք պարտէզներումն ու այդիներումն են դուրս գալիս:

ՈՐԴԵԿՈՐՈՅՑ ՇՆՈՂ

Ըստղիկ ունէի ես իմ երկնքում,
Փայլում էր լուսով իւր շըջապատում:
Երբ գալով գիշերը՝ ծածկում էր խաւար,
Սիրուն գեղեցիկ էր այն իմ գոհար:
Թռչնիկ ունէի իմ մոռթ անտառում,
Ոչ մինը չկար այնպէս կարկաջուն.
Օառելի տակին՝ հոլիկ ստուերում,
Սիրում էր նա միշտ երգել իւր գարուն:
Օաղիկ ունէի իմ անապատում,
Խնդութիւն կեանքիս տխուր ու տրտում:
Նորա քաղզը ժպտման՝ զուարթ երեսին
Վ'նախանձէր վարդըն Եղեմայ զրախային:
Հայց խաւարեցաւ աստղիկս երկնային,
Սիսակս թռաւ իւր բունը մթին,
Խլեց իմ վարդը սառն հիւսիսային,
Խոր խոցոտելով ծնողիս հողին:

ԱՐԵԽՆ ՈՒ ԱՆԶՐԵԽ

«Ո՛չ, երանի՛ թէ միշտ պայծառ արև լինէր», ասում
էին Վարդուհին ու Շողակաթը մէկ անձրեսյին ու
տիրագին օր: «Եոցա ցանկութիւնը շուտով կատարուե-
ցաւ. երկու ամիս շարունակ երկնքի երեսին ամել չերեաց:»
Ի հարկէ այն երկարատեւ չորութիւնը շատ վնաս տուեց
արտերին ու պարտէգներին. ամէն տեղ ծաղիկներն ու
դալարիքը թառամեցան, դաշտերի արօտը, ցորեանը,
գարին, հաճարն ու միւս ցանքը չորացան, առուներն ու
աղքիւրները ցամաքեցան՝ կտրուեցան: Բոլոր ժողովուրդը
մէծ նեղութեան ու յուսահատութեան մէջ էր:

«Տեսնո՞ւմ էք այժմ, ասաց մայրն իւր աղջկանցը, որ
անձրեն եւս արեի պէս շատ հարկաւոր ու օգտակար է
իւր ժամանակին:»

Ի՞նչ էին ասում Վարդուհին ու Շողակաթը մէկ անձրեւային
օր: Կատարուեցան նոցա խնդիրը: Ցետոյ մայրն ի՞նչ ասաց նո-
ցա:— Բոլոր պատմութիւնը կրկնեցէր ու դրեցէր:

Ի՞նչ կնշանակեն ու ինչպէս են չինուած բառերս—տիրագին
երկարատեւ, յուսահատութիւն: Ասացէր, աղջկանց ի՞նչ անուններ
դոտէր: (Վարդուհի, Տիրուհի, Խագուհի, Հայկանոց, Շողակաթ,
Անթառամ, Վարդիթեր): Ի՞նչպէս են շինուել այդ անուններդ:

ԻՆՉՊԷՍ Է ԳՈՅԱՆՈՒՄ ՍՆՁԲԵՒԸ

Բաղրատն ու Լեռնը կէսօրին ուսումնարանից եկան
տուն: «Եյսօր ի՞նչ սովորեցաք», հարցրեց նոցա հայրը:

— «Կատ բան, հայր», ասաց Բաղրատը. «միայն մի
բան ես չկարողացայ պարզ հասկանալ: Վարժապետը
մեզ պատմեց թէ ի՞նչպէս է դոյանում անձրեւ, երկու՝
երեք անդամ կրկնեց, բայց ոչ ես, և ոչ թէ Լեռնը
կարողացանք պարզ հասկանալ:»

— Երեկի լաւ չէք լսել պատմելու ժամանակը, կամ
թէ վարժապետը ձեզ օրինակով չէ հասկացրել:

— «Մենք ուշադրութեամբ էինք լսում, հայր, բայց
դժուար հասկանալու բան էր ու վարժապետն էլ օրինակ
չսաաւ:»

— «Ուանց օրինակի դժուար է պարզ հասկանալ այդ
բանը, որդիք: Եյսօր մեր պարտէզումն օղի (արաղ) են
քաշում: զնանք այնտեղ ու ես պարզ կհասկացնեմ ձեզ:»
Եհա օղու պղինձը. բանամ, նայեցէք՝ տեսէք ի՞նչ կայ
մէջը: Աորա միջինը գինի է. բայց զիտէք, ի՞նչպէս են
զինուցն օղի քաշում:»

— «Այս գիտեմ, հայր, պատասխանեց Իշագրատը,
զգինին տաքացնում են կրակով, նորանից բարձրանում է
գոլորշեն, որ սառը ջրի միջով անց կենալով՝ օղի է
դառնում ու ջրի պէս վազում։»

— «Եսպէս է, որդիս, և անձրւն էլ այդպէս է գոյա-
նում, միայն թէ անձրւի պղինձը մեր օղու պղնձիցն
շատ ու շատ մեծ է։ Ենձրեփ պղինձն աշխարհս է. գի-
նին՝ որից մենք օղի ենք քաշում, ծովերի ջուրն է.
կրակն՝ արեգակն է, որ ծովերի ջուրը տաքացնելով՝
գոլորշեն է շինում ու ամպի նման երկինքը բարձրացնում։
սառը ջուրն՝ որով մենք պղինձի գոլորշեն սառցնելով՝
խտացնում (թանձրացնում) ենք ու ջրի պէս հեղուկ
օղի ենք շինում, երկնքի սառնամանիքն է, որ այնտեղ
ժողովուած գոլորշեն, որին ամպ ենք ասում, սառցնելով՝
խտացնում է ու մանր կաթիլներ դարձնում։ այդ մանր
կաթիլները դարձեալ միանում են ու խոժոռ կաթիլներ
դառնալով՝ թափիւում են երկնքիցն, ոչ թէ մեր քաշած
օղու պէս բարակ կաթկաթելով կամ ծորալով, այլ հե-
ղեղի պէս, որից դոյանում են ահազին գետեր։ Այժմ
հասկացաք, որդիք, թէ ինչպէս է գոյանում անձրւը։
— «Ես՛, հայր, շատ լաւ հասկացայ, ասաց Իշագ-
րատը։»

— «Ես էլ հասկացայ, ասաց Ակոնը. «Բայց ինչո՞ւ
անձրւի ջուրը ծովի ջրի պէս աղի չէ, եթէ նորանից է
բարձրանում։»

— «Ես՛ շատ պարզ բան է, որդիս, ինչպէս որ մեր
պղտոր ու կարմիր զինուցը պարզ ու սպիտակ օղի է
գոյանում, այնպէս էլ պղտոր ու աղի ծովի ջրիցը պարզ
ու համեզ անձրւի ջուրն է գոյանում, որովհետեւ թէ
զինու և թէ ջրի աղտը կամ աղը գոլորշեն չէ դառնում,
այլ մնում է տեղը։»

Պատմեցէք, տեսնեմ, ինչպէս է գոյանում անձրեւը։—Կրկնեցէք
այս պատմութիւնս ու դրեցէք։
Ասացէք այս բառերի նշանակութիւնը—օղի, դոլորշի, խտանալ,
սառնամանիք, ծորալ։

ԱՐԵԳԱԿՆ ՈՒ ԼՈՒՍԻՆ

Մէկ գեղեցիկ օր Եշոտն ու Պագիկն իւրեանց պար-
տէզումը ման էին գալիս ու արեգական վերայ գատողու-
թիւն անում։ Երկար դատողութիւնից յետոյ սկսեցին
վիճել ու կռուիլ։ Հայրն, որ փոքր ինչ նոցանից հեռի
էր, կռուի ձայնը լսելով՝ կանչեց ու հարցրեց պատ-
ճառը։— «Հայր իմ, պատասխանեց Եշոտը տաքացած։
«Ես ասում եմ թէ արեգակը մէկ կալի չափ է, բայց
Պագիկը չէ հաւատում, այլ ուզում է ինձ համոզել, թէ
մէկ ջրաղացի քարի չափ է։»— «Երկուսդ էլ սխալ եք,
որդիք», ասաց հայրը, «Ե՛ ՚ի զուր եք վիճում ու կռուում
իրար հետ։ Երեգակն ոչ թէ ջրաղացի քարի կամ կալի
չափ է, այլ մեր երկրիցն էլ շատ և շատ աւելի մեծ է։»
— «Հապա ինչո՞ւ արեգակն այնքան փոքր է երկումն,
հարցրեց Եշոտը։— «Որովհետեւ շատ է հեռի մեզանից»,
շարունակեց հայրը. «Եթէ թնդանօթի ոռումքն, իւր սաս-
տիկ արագութեամբ մեր այս երկրիցս թռչելով թռչէր
գէպի երկինքն, քսան տարումը հազիւ թէ զնար հաս-
նէր արեգական մօտ։» Եշոտն ու Պագիկը բերանա-
բաց ու զարմացմանը էին նայում իւրեանց հօր վերայ։
«Տեսնում էք, որդիք», ասաց այն ժամանակը հայրն,
«բանի էութիւնը զիթեք, բայց ՚ի զուր վիճում էք ու
կռուում իրար հետ։»— «Ուրեմն լուսինն որքան աւելի
մեծ պէտք է լինի, հայր իմ, ասաց Եշոտը։»— «Ինչցն ես
այդպէս կարծում, հարցրեց նորան հայրը։— «Որովհետեւ
աւելի մեծ է երկումն։»— «Ճշմարիտ ես ասում, աւելի

մեծ է երևում, պատասխանեց հայրը, «բայց իրօք արեւգակիցը շատ ու շատ փոքր է նա, փոքր է նաև՝ քանթէ երկիրս (երկրագունտս). միայն այն պատճառաւ է արեգակիցն աւելի մեծ երևում, որ նորա պէս երկրից շատ հեռի չէ»:

Կրկնեցէք այս պատմութիւնս ու գրեցէք:

ԼՈՒՍԻՆ ՊԱՏԿԵՐ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԵՆԱՅ

Լուսինը մէկ երեկոյ հանդարտաբար գնում էր կապուտակ երկնքի երեսին. որդիքը՝ ցոյց տալով իւրեանց հօրն, ասացին. «Տե՛ս, հայր, ի՞նչ գեղեցիկ, ինչ սիրուն ու պայծառ է. միշտ այդպէս չէ լինում» — «Ես շատ ժամանակ չէ որ ծնուել է, որդիք, պատասխանեց հայրն, այսուշետե քանի գնայ կաճի, նորա լոյսն օրէ ցօր կաւելանայ, մինչեւ որ լիովին բոլորակ կտեսնենք նորան: Ապատահի, երբեմն որ ամպերը կդան կծածկեն նորան, ու մէր աչքիցն աներեւոյթ կանեն: Մի փոքր ժամանակից յետոյ կսկսի կամաց կամաց նուազել, վերջապէս բոլորովին կանչետանայ, ու նորանով մարդկային կենաց կատարեալ պատկերը կձևացնէ»: — Ես չեմ հասկանում ասածդ, հայր իմ, կանչեց Խորէնը: — Իսկ ես իմացայ, ասաց Առորէնը, թէ ի՞նչ էք կամենում դորանով հասկացնել: Մարդս էլ նոյնօրինակ մեծանում է, իւր կատարեալ հասակը առնում, փոքր ինչ ժամանակ աշշեարհիս վերայ առոյդ կեանք անցկացնում, յետոյ ծերանում՝ մեռնում ու գերեզմանի մէջ մանում: — Այդպէս է, որդիս, ասաց հայրը. բայց լուսինը ծածկող ամպե՞րն ինչ են: — Դորա բացատրելը գեռ իմ կարողութիւնիցս վեր է, պատասխանեց Առորէնը: — Եմպերը պէսպէս դըմբաղութիւններ են, ասաց հայրը, որք մարդուս

կենաց մէջ պատահում են. մարդ չկայ, որ միշտ երջանիկ ու խաղաղ օրեր անց կացնէ. ամէն մարդ իւր ցաւերն ու նեղութիւններն ունի: Բայց առաքինի՝ համեստ ու մաքուր սիրտ ունեցող մարդոյ կենաց մէջ կանցանեն՝ կերթան նոքա առանց նորա սրտի խաղաղութիւնը պղտորելու: Երբ այնպիսի մարդը մեզ համար անհետանում է, ամենելին չէ ոչնչանում՝ կորչում նա, այլ մէկ լուսափայլ աշխարհում անմահութեան անթառամ պսակով փառաւորւում է:

Պատմեցէք, տեսնեմ, լուսինն ինչպէս է ծեւացնում մարդկային կենաց պատկերը: Գրեցէք ծեր պատմածը:

Ի՞նչ կնշանակեն այս բառերս — անթառամ, բացատրել, դրախտութիւն, առոյդ, նուազիլ:

ՎԱՅՐ ԸՆԿՈՂ ԱՍՏՂԵՐ

«**այրիկ**, ասաց դուստրն հօրը,
Կապոյտ երկնքի վերայ
Ո՞քան աստղեր փայլում են վառ,
Եսիս, համար՝ թիւ չը կայ.
Եսում են, որ ամենայն մարդ
Եստղեկ ունի երկնքում:
Ճշմարիտ է, ասա՛, հայրիկ,
Իմը ո՞ր տեղ է փայլում:
— **Այսո՛**, դստրիկ, այդ աստղերը
Ունին հաշիւ ու համար,
Եւ մեզանից իւրաքանչիւր
Մի աստղ ունի իւր համար:
Ճայրիկ, տե՛ս տե՛ս, աստղը թռաւ,
Յետքից պայծառ գիծ թողեց,
Եստղեկն ընկաւ երկնքիցը,
Միւս անդամ այլ չերեկց»:

—Ո՛վ իմ դստրիկ, հանգիստ կացիր,
Դա մեծատան մի աստղ էր,
Որ իւր օրում՝ իւր կեանքումը
Խիղճ ասածը չը գիտէր.
Ըղքատները նորա գոնից
Գիշեր՝ ցերեկ հալածուած,
Մի մարդ չը կար նորան ծանօթ,
Որ չը լինէր վշտացած:

«Հայրիկ, տե՛ս տե՛ս, աստղը թռաւ,
Յետքից պայծառ գիծ թողեց,
Սատղիկն ընկաւ երկնքիցը,
Միւս անգամ այլ չերեւց»:
—Ո՛վ իմ զաւակ, մի՛ վրդովուիր,
Դա պատանւոյ մի աստղ էր,
Որ իւր հօր ու մօր խօսքը
Իւր կեանքումը յարգած չէր.
Նա թողել էր իւրեանց տունը,
Ուշք չէր դարձնում տան վերայ,
Իւր ծնողքը լացացրել էր,
Խնչքը վատնել անխնայ:

«Հայրիկ, դարձեալ թռաւ մի աստղ,
Այսր ընկաւ նա երկնքից.
Հայրիկ, ո՞ւմ աստղն էր արդեօք,
Որ զրկուեցաւ իւր տեղից»:
—Ո՛հ դստրիկս, հանգիստ կացիր,
Վեղծաւորի դա աստղ էր,
Որ իւր օրում ուղեղ մի խօսք
Մարդոյ երբէք ասած չէր.
Փարիսական իւր ձեւերով
Խշարհք խարեց, զարմացուց,

Այդ պատճառով Աստուած նորա
Սատղի լոյսը խաւարեցուց:

«Հայրիկ, տե՛ս տե՛ս, աստղը թռաւ
Եւ գիծ անգամ չը թողեց,
Սատղիկն ընկաւ երկնքիցը,
Միւս անգամ այլ չերեւց»:
—Ո՛հ, սիրական խաղաղ մնա',
Բոնակալի դա աստղն էր,
Որ աշխարհը իւրեան գերի
Օնած օրից կարծել էր.
Հատ հալածանք՝ շատ նեղութիւն
Պատճառեց նա իւր կեանքումը,
Հատ տուն քանգեց՝ շատ մարդ զըկեց,
Գութ չունեցաւ իւր սրտումը:

«Ապա այն ի՞նչ աստղ է, հայրիկ,
Որ այնպէս պարզ վառվում է,
Նորա մաքուր պայծառ լոյսը
Չորս կողմը բակ բռնել է»:
—Ո՛հ, իմ դստրիկ, աղօթք արա,
Դա ծերունոյ մի աստղ է,
Որ իւր կեանքում ոչ մի մարդոյ
Ոչինչ մնաս տուած չէ.
Այն լուսաւոր բակն է նորա
Առաքինի գործքերը.
Աղօթք արա, որ երկարուին
Նորա կեանքի թելերը:

Հատ օր չանցաւ, երկնքիցը
Մի այլ վառ աստղ պակասեց.
Ում աստղիկն էր՝ որ ընկաւ,

Բան հարցանող չերեց:
 Մինչ գեռ լուսինն արծաթափայլ
 Լոյս էր տալիս զիշերին,
 Խորհրդաւոր մինչ տիրել էր
 Ծնվրդով խոր լռութիւն,
 Մի սրտաթափ՝ մազերն արձակ
 Ա աղեց աղջիկ սգաւոր
 Դէպ ի գեղի գերեզմանքը,
 Օսունկ չքեց մի շերմի մօտ:
 « Այրիկ, աստղիկ չէ փայլում;
 Դու յաւիտեան քնեցիր.
 Եռ ինձ քո մօտ՝ քո ծոց՝ քո զիրկ,
 Խնչու անտէր թողեցիր:
 Խմ աստղիկս ասա՛ նոյնպէս
 Որ չը փայլե, հերի՛ք է.
 Եմ աշխարհս ինձ առանց քեզ
 Մութն ու խաւար մի բանտ է»:
 Մի մարդ չը կար, որ նկատէր,
 Որ հետեւեալ զիշերին
 Պակասեցաւ երկնքիցը
 Մի պայծառ աստղ խնդագին:
 Երրորդ օրը շատ սգաւորք
 Փորեցին մի գերեզման,
 Ուր թաղուեցաւ իւր հօր մօտին
 Մարմինը խեղճ աղջըկան:
 « Այրիկ, տես տես, ասաղը թռաւ,
 Յետքից պայծառ դիմ թողեց,
 Աստղիկն ընկաւ երկնքիցը,
 Միւս անզամ այլ չերեց. . . »

ՆԵՐԿԱՅ ԵՒ ԱՊԱԳԱՅ
 « Որդեակի, ասաց մի անզամ ծերունի հայրն իւր
 զաւակին, ամարդուս կեանքը նմանում է ծաղկանց, որք
 առաւտեան բացւում են ու զուարթանում, իսկ երեկոյ-
 եան թառամում՝ ոտի տակ ընկնում ու փշանում: Արև-
 թաց գետի պէս վազելով՝ անց են կենում մարդկանց
 սերունդները. չկայ աշխարհիս վերայ այնպիսի մի բան,
 որ կարողանայ բռնել՝ կանգնացնել ժամանակի ընթացքը,
 որ քաշում անում է իւր հետ նաև անշարժ ու հաս-
 տատուն երևեցած բաները»:
 « Իու ևս, որդեակ, որ այժմ մի երջանիկ ու զուար-
 ծալից մանկութիւն ես վայելում, դու ևս գիտացիր, որ
 այդ զուարթագեղ հասակդ քնքուշ ծաղիկ մի է, որ բա-
 ցուած չքացուած պիտի թառամի՝ թարշամի ու չորա-
 նայ. ուստի անզգալի կերպիւ ինքդ քեզ փոխուած պիտի
 տեսնես. գեղատեսիլ շնորհքդ՝ քաղցր զուարծութիւն-
 ներդ՝ հեշտալի բերկրութիւններդ՝ ոյժդ՝ առողջութիւնդ՝
 ուրախութիւնդ երազի պէս պիտի ցնդին՝ անհետանան,
 ու միմիայն նոցա ամէնի տխուս յիշատակը պիտի մնայ
 քեզ մօտ: Հետանդու ծերութիւնը, որ թշնամի է ամե-
 նայն զուարծութեանց ու բերկրութեանց, պիտի գայ
 երեսդ կնճուելու՝ թառամեցնելու, մարմինդ ծռելու՝ կո-
 րացնելու, անդամներդ տկարացնելու, սրտիդ միջի ուրա-
 խութեան ու ինդութեան աղբիւրը ցամաքացնելու, և
 բաց ՚ի ցաւերիցն, ամէն բանի անզգայ անելու:

« Այդ ժամանակը կուցէ քեզ շատ հեռի է երևում:
 բայց աւաղ խարսում ես, որդեակ. ահա շտապում է՝
 վազում ու հասնում է նա. իսկ ներկայն՝ որ փախչում
 է, արդէն շատ հեռացաւ, որովհետեւ խօսած ժամանակ-
 նիս անհետանում է, էլ չէ կարող վերադառնալ ու մօ-

տենալ: Ուրեմն, որդեակ իմ, ներկայի վերայ ամենևին
յօս մի զներ ու մի վստահանար, այլ ապագային սպա-
սելով՝ առաքինութեան ծանր ու դժուարին ծանա-
պարհովը շարունակէ միշտ քո կեանքդ. ո՛րքան կարող
ես բարութիւն ու բարեգործութիւն արա, միշտ ապա-
գայ կեանքդ ունեցիր աչքիդ առաջեն, որպէս զել լաւ
վարքովդ՝ բարի գործերովդ ու արդարասիրութեամբդ
տեղ պատրաստես քեզ համար արքայութեան մէջ:

Նկարագրեցէր ձեր ներկայ եւ ապադայ կեանքը:

Ի Ն Զ Հ Ա Մ Ա Ր Զ Է

(Չինուորի երգ:)

Ինձ համար չէ՛ գարնան գալը,
Ինձ համար չէ՛ ծառի ծաղկիլը,
Ուրախութեան սրտի գրգիռը՝
Ո՛չ մի բերկրանք չեն ինձ համար:

Ինձ համար չէ՛ կենաց բաղը,
Ինձ համար չէ՛ երջանկութիւնը,
Եւ զաւակաց քաղցր սէրը,
Եւաղ բախտիս, չէ՛ ինձ համար:

Ինձ համար չէ՛ փայլուն լուսինը,
Ենտառ ու սար լուսաւորելը՝
Գարնան վարդի երդչի տաղերը՝
Սոխակ ու վարդ չեն ինձ համար:

Ինձ համար չէ՛ բարեկամաց
Մէկտեղ սիրով տօն կատարելը,
Օտարիկ օրուայ ուրախ ասելը
«Բրիստոս յարեաւ» չէ՛ ինձ համար:

Ինձ համար չէ՛ ծնողաց լացը,
Ինձ համար չէ՛ եղբարց տըսրիլը,
Գերեզմանիս վրայ արտասուիլը .
Իարեկամաց՝ չէ՛ ինձ համար:

Իայց ինձ համար կրդայ ժամը,
Կ'երթամ թըշնամեաց պատերազմը,
Եւ մահառիթ՝ սպանիչ զընդակը
Ենդ պատրաստած է ինձ համար:

Այս երդի եղանակը զիտէք թէ ոչ:

ՊԱՏԻՒ ՏՈՒՐ ԾՆՈՂԱՑԴ ԵՒ ՍԻՐԵ ՆՈՑԱ

«Սիրելի Տիգրան», ասաց մի անգամ մօրաքոյրն իւր
քեռորդուն. «Կախախնամութեան բարերարութիւններից
մէկն էլ այն է, որ որդեսէր ու բարեսիրտ ծնողք է պար-
գևել քեզ: Ո՞ի՛ մոռանար, որ մայրդ ինն ամիս արգանդի
մէջ պահեց քեզ ու ցաւերով ծնաւ. ծնողքդ զիշեր ցե-
րեկ կըռների վրայ խտրտած են պահել ու շատ անգամ
զիշերները օրօրոցիդ մօտ անքուն լուսացրել: Եւ այս
հոգսն ու խընամբը ոչ թէ օրէ ցօր պակասեցրին, այլ
որքան տարիքով մեծանում էիր՝ այնչափ էլ նոքա քեզ
վերայ աւելի հոգս ու խնամածութիւն ունէին: Ո՞ի՛ տքդ
քեր, որ երկու ամիս յառաջ երբ հիւանդ էիր, թէ ի՞նչ-
պէս էին մտիկ անում քեզ մայրդ ոչ զիշերը քուն
ունէր՝ ոչ ցերեկը հանգիստ, անկողնիցդ համարեա չէր
հեռանում, մինչեւ որ ինքն էլ հիւանդացաւ. նմանապէս
էլ հայրդ մօտդ էր լինում, որչափ որ նորա գործքերը
ներում էին. ուրիշներին ընհաւատալով՝ ոչ ոքի հոգա-
բարձութեան տակ չէին թողում քեզ: Ո՞իշտ մտա-

Ճում էին, որ դու լաւ կրթութիւն ստանաս, հիմնաւոր ուսումն առնուս և օրինաւոր պահպանես քո առողջութիւնդ, չննայելով քեզանից ոչ իւրեանց աշխատութիւնն և ոչ թէ ծախսը: Աստ մտածիր, թէ այժմ ևս ի՞նչ կը լինէիր՝ եթէ ծնողքդ ձեռք վեր առնէին քեզանից: Ուրեմն փառք տուր Աստուծոյ, որ քեզ այդպիսի բարի ծնողք է տուել. բայց մի՛ մոռանար քո պարտքդ, որ նոցա պիտի սիրես, հնազանդ լինիս ու միշտ շնորհակալ. բարերարութիւնը շնորհակալութեամբ կը վճարուի, իսկ սէրը՝ սիրով: Ինութիւնն իսկ այս է ուսուցանում, և օրէնքը սոյն իսկ պարտաւորութիւնն է գնում քեզ վերայ: «Օճնողաց ըստիրող որդին ոչ այլ ինչ է, եթէ ոչ հրէշ իսկ սակաւ սիրողն՝ ապերախտ: Ապա ուրեմն պատիւ տուր ծնողացդ, որ բարի լինի քեզ, ու երկայնակեաց լինիս երկրիս վրայ:»

Պատմէ, տեսնեմ, ի նչ ասաց մօրաքոյրն իւր քեռորդի Տիգրանին:

ՍԻՐԵ ՔՈ ՀԱՅՐԵՆԵՐԴ ԵՒ ՔՈ ԱԶԳԴ

«Սիրելի՛ Արամ», ասում էր միշտ հայրն իւր որդուն, «ծնողքիցդ յետոյ քեզ ամենից մերձաւոր և ամենից սիրելի քո ազգդ է: Այս պատճառաւ որքան պարտական ես քո ծնողքդ սիրել՝ մեծարել ու նոցա ծառայել նոյնքան էլ պարտական ես քո ազգդ ու քո հայրենակիցներդ սիրել, և քո չափուդ ու կարողութեանդ համեմատ նոցա օդնել: Այս պարտականութիւնը քեզ սովորեցնում է հայրենասիրութիւնն, որ կարծես թէ նոյն իսկ բնութեան մէջ տնկուած է. որովհետեւ վայրենի ազգաց ու մինչեւ անգամ անբան անասնոյ մէջն էլ է գտնւում: Այժմ լաւ մտածիր, սիրելիդ իմ, թէ ինչ մեծ ամօթ ու նախատինք կը լինէիր քեզ, եթէ այսպիսի մեծակշեռ-

բանի մէջ նոցանից պակաս գտնուէիր, կամ քո հայրենասիրութիւնդ նոցա հայրենասիրութիւնիցն աւելի մեծ ու աւելի ազնիւ չըլինէր: Հայրենասիրութիւնը կրթուած մարդոյ վերայ աւելի ծանր պարտքեր է դնում, քան թէ անկիրթ ու վայրենի մարդոյ վերայ, և այս պարտքերս օրէ ցօր աւելանում են. ուստի որչափ տարիքդ աւելանան, այնչափ էլ հայրենի ացդ համար կատարելու պարտքեր աւելի կունենաս: Աշխատի՛ր, որ ամէն զիտութիւնից առաջ բարոյական առաքինութիւններ սովորիս, առանց որոց չէ կարելի նոյն պարտքերը լաւապէս կատարել. զգոյշ կացիր և այն չար գործքերից, որք կարող են քեզ արգելք լինիլ նոյն իսկ պարտքերդ կատարելու:»

Բայց ամենից առաջ մտքումդ լաւ հաստատի՛ր թէ ազգասէր մարդոյ առաջին ու զինաւոր պարտքն այն է, որ միշտ բարի՝ առաքինի՝ կրթուած ու պատուաւոր լինի: Ինչպէս որ բարի զաւակը պատիւ է իւր ծնողաց, այնպէս էլ բարի մարդը փառք ու պարծանք է իւր ազգին: Եւ ինչպէս որ մէկ հայր իւր պատիւը նուազացնող ու իւրեան նախատինք բերող անսպիտան որդույց վերայ իրաւունք ունի տրտնջալ, այսպէս էլ ազգն ունի իրաւունք իւր անսպատութեանը պատճառ եղող անարդ անդամների վերայ տրտնջալ ու գանդատել: Ոհ, սիրելի՛ որդեակ, չլինի թէ քո ազգդ ու հայրենիքդ էլ նոյն տրտունջն ու գանդատն անէ քեզ վերայ: Ազգիդ պատիւ ու պարծանք լինիլու համար հետեի՛ր ուրեմն՝ միշտ առաքինութիւն գործել ու չարութիւնից հեռանալ:»

ԳԵՐԻ ՑՈՅՆ ԲԱՆՏՈՒՄԸ
(Երգ:)

Հայրենիք սրբազնն,
Կմ սիրուն աշխարհ,

«Թառչում եմ դէպի քեզ
Հոգւովս անդադար։

Իսյց աւաղը այս բանտում
Փակուած եմ անտես,
Պատերազմի դաշտում
Չեմ կռւում և ես։

Հանապաղ տանջուեցայ
Քո ճակատագրով,
Սրտումն շղթայից
Աէրքեր կրելով։

Թաղ այստեղ չարչարուիմ
Ընծանօթ՝ կապուած,
Միայն քեզ, հայրենիք,
Տեսնեմ ազատուած։»

ԽՏԱԼԱՑԻ ԱՂՋԱԾ ԵՐԳ 1859 ԹՈՒԱԿԱՆԻՑ

«Մեր հայրենիք թշուառ՝ անտէր,
Մեր թշնամուց ոտնակոխ,
Իւր որդւոցը արդ կանչում է
Հանել իւր վրէժ՝ քէն ու ոխ։

«Մեր հայրենիք շղթայներով
Այսքան տարի կապկապած,
Իւր քաջ որդւոց սուրբ արիւնով
Պիտի լինի ազատուած։»

«Ահա՛, եղբայր, քեզ մի դրօշ
Որ իմ ձեռքով գործեցի.
Գիշերները ես քուն չեղայ,
Արտասուքով լուացի։»

«Ասյի՛ր նորան, երեք գունով
Նուիրական մէր նշան,
Թաղ փողփողի թշնամու դէմ,
Թաղ կործանուի Աւարիան։»

«Ինչքան կին մարդ, մի թոյլ էակ,
Պատերազմի գործերում
Կարէ օդնել իւր եղբօրը,
Օանց չտրեց քո սիրուն։»

«Ահա՛ իմ գործ, ահա՛ դրօշ
Ըուտ ձի հեծի՛ր քաջի պէս,
Գնա՞ փրկել մեր հայրենիք,
Պատերազմի վառ հանդէս։»

«Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ' մեռնէ.
Իսյց երանի՛, որ իւր ազգի
Ազատութեան կը զոհուի։»

«Գնա՛, եղբայր, Աստուած քեզ յոյս՝
Ազգի սէրը քաջալեր,
Գնա՛, թէ և չեմ կարող գալ,
Իսյց իմ հոգին քեզ ընկերօ։»

«Գնա՛, մեռիր դու քաջի պէս,
Թաղ չտեսնէ թշնամին
Քո թիկունքը, թող նա չասէ,
Թէ վատ է Խտալացին։»

«Ասց՝ տուեց օրիորդը
Իւր եղբօրը մի դրօշ,
Անտաքսից եր՝ ազնիւ գործած,
Ուր երեք դոյն կար որոշ։»

Եղքայրն առաւ ու ողջունեց
Իւր սիրական քնքոյշ քոյր.
Ըստ զէնքը՝ սուր՝ հրացան,
Հեծաւ իւր ձին սևաթոյր:

«Քուրի'կ,» կանչեց քաջ պատանին,
«Մնա՛ս բարեաւ, սիրական,
Ըստ դրօշակին պիտի նայիր Արալ
Ըմբողջ բանակ իտալեան:»

«Եա սուրբ է ինձ, երբ մլրտուած
Ըրտասուքով ու կնքած,
Դու յանձնեցիր ինձ յիշատակ՝
Հայրենիքի նուիրուած:»

«Թէ մեռանիմ, դու մի՛ սգար,
Խմացի՛ր, որ ապարեցի
Դէպ ի մաշու արքայութիւն
Խմհետ քանի թշնամի:»

Ըստ՝ վագեց դէպ ի հանդէս
Ըւստրիացւոց յանդիման,
Իւր արիւնով զնել յաւէժ
Ըզատութիւն իտալեան:

Ո՛հ, իմ սիրտս կտրատւում է
Տեսանելով այսպէս սէր
Դէպ ի թշուառ մի հայրենիք,
Որ ոտնակոխ եղած էր:

Ո՛հ....արտասուք ինձ խեղդում են,
Ըզլ չեմ կարող բան խօսել.
Զէ....թշուառ չէ իտալեան,
Եթէ կանայք այսպէս են:

ՈՒՍԻՌ ԱՌԱՋ ՔՈ ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒԴ

Ըմէն ուսման հիմն ու ամէն տեսակ զիտութիւն
ստանալու միակ միջոցը լեզուագիտութիւնն է. եթէ ոք
կամենում է կարգաւ ու հեշտ ուսանիլ զանազան լե-
զուներ, առաջ պիտի սկսէ իւր մայրենի լեզուն սովորել:
Լեզուն ազգայնութեան առաջին ու գլխաւոր նշանն է,
ազգայնոց էլ իրարու հետ կապելու միակ գործիքն է.
վասնորոյ իւր մայրենի լեզուն չիմացողը, կարելի է ասել
իւր ազգայնութիւնից հրաժարած՝ իւր ազգից բնաւին
օտարացած է: Ըպա ուրեմն՝ բնական և պատշաճական
պարտաւորութիւն է, որ ամէն մարդ իւր ազգի լեզուն
անշուշտ սովորի: Վայրենի լեզուի գիտենալն, բացի օգ-
տակար լինելն, միանգամայն պարտք էլ է. ամէն մարդ
պարտաւոր է իւր հայրենեացն ու ազգին ծառայել,
նորա յառաջադիմութեանն օդնել բայց այս պարտքս չէ
կարող մարդ լաւապէս կատարել, եթէ իւր լեզուն հի-
մանար չիմանայ: Ըստ պատճառաւ էլ ուսեալ ու կրթեալ
ազգաց մէջ մեծ ամօթ ու նախատինք է իւր լեզուն
չիմանալը: Ուրեմն ամենայն մարդ՝ իւր ազգութեան
պարտքը վճարելու համար, պէտք է ուսանի իւր մայ-
րենի լեզուն, որով կարողանայ իւր ազգի հետ միանալ
պիտանի և օգտակար անդամ լինիլ ազգին ու հայրենեացն:

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ, ՄԱՅՐԵՆԻ ԲԱՐԲԱՐ.

Վայրենի՛ լեզու, մայրենի՛ բարբառ.
Ըստորդ՝ ընտանի իմ հոգու համար.
Ըռաջին դու խօսք՝ ականջիս հասած,
Դու սիրոյ քաղցրիկ առաջին յօդուած,
Վանկական լեզուիս թոթովանք տրկար
Հընչումես իմ մէջ դու միշտ անդադար:

Գեղեցիկ լեզու, հրաշալի՛ լեզու,
Ըստ ի՞նչպէս քաղցր հընչումես ինձ դու.

Վամիմ աւելի քաջ ծանօթանալ
Կիս ճոխ գանձերին, հոգւով հայանալ

Ասես թէ ահա կանչումեն ինձ
Պապերս ու հայրերս խոր գելեզմանից:

Հընչի՛ր դու, հընչի՛ր այժմ և յաւիտեան
Մայրենի լեզու, բարբառ սիրական.

Երի՛, բարձրացի՛ր հնութեան փոշուց,
Դու իմ հայ լեզու, մոռացած վաղուց.

Ըզգեցի՛ր նոր կեանք սուրբ դրուածներով
Որ ամենայն սիրտ վառուի քո սիրով:

Ա. Շ Խ Ա. Տ Ա Ս Ի Բ Ո Ւ Թ Ի Ւ

«Այրելի Գարեգին», ասում էր միշտ հայրն որդուն,
«պատուի՛ր աշխատասիրութիւնը, որ աղքատութիւնն ու
կարօտութիւնը քո դրանդ շեմքին ոտք չըդնեն»:

«Գնա՛, նայէ մըջիւնին, տե՛ս նորա ծանապարհներն
ու սովորի՛ր նորանից աշխատասիրութիւն. գնա՛, նայէ
նորան, որ թէ և հողագործութիւն չգիտէ, իշխան՝
հարկագիր կամ տիրող չ'ունի, բայց իւր կերակութը
ամսութանից է պատրաստում, նա իւր ապրուստը հնձի
ժամանակն է ժողովում: Գնա՛, նայէ մեղուին ու սովորի՛ր
աշխատասիրութիւն. տես թէ ի՞նչպէս աշխատա-
սէր է, իւր գործը որպիսի պարկեշտութեամբ է կատա-
րում նա, որոյ վաստակը թագաւորներն ու տնանկները
բժշկութեան համար են գործ գնում: Թակապէտ տիկար է
նա ուժով, բայց ցանկալի՝ մեծարելի ամենեցուն. վասն
զի պատուեց աշխատութիւնն ու իմաստութիւնը և ինքն
էլ պատուեցաւ:

«Որդեակ, մինչեւ ե՞րբ պիտի պառկիս, քնիցդ ե՞րբ պիտի
զարթնուս: Եթէ փոքր ինչ կըքնես, փոքր ինչ կընստես,
փոքր ինչ կընիրհես, փոքր ինչ կըհանդատանաս, այն ժա-
մանակին քո աղքատութիւնդ ծանապարհորդի պէս կըգայ՝
վրայ համանի, որպէս և կարօտութիւնդ՝ սպառազինեալ
մարդու պէս: Ի՞յց եթէ աշխատասէր կըլինիս, քո
ամառդ յորդ աղքիւրի նման կհոսի գէտի քեզ ու կարօ-
տութիւնդ էլ ինքնահաջած կըլինի չար մարդու նմանն»:

«Եց կացած օրերդ անդարձ են, ապագայ օրերդ էլ
չը լինի թէ քեզանից խլուին. հետեւիր, ուրեմն որդեակ,
դէպի բարին գործ զնել ժամանակդ, քանի որ ձեռքիդ
է. անցեալ կորուստիդ վերայ մի արտնջար, ապագայի
վերայ էլ մեծայոյս մի լինիր:»

«Բո ձեռքիդ է այս վայրկեանս, իսկ էդուցն ապա-
գայի արգանդի մէջն է. չես իմանում, թէ ինչ կըծնանի:
Ինչ որ մաքումդ դրիր՝ որ գործես, գործէ՛ շուտով, և
ինչ որ առաւօտեան կարող ես կատարել, յետ մի ձգիր
ուրեմն՝ մինչեւ արեգակի մտնելը:»

«Օսուլութեան ծնունդը խեղճութիւնն ու նեղու-
թիւններն են. իսկ աշխատանքն ուրախութիւն է բերում:»

«Աշխատասէր ձեռքը կարօտութիւնը կըբառնայ, և
գործունեայ մարդոյ վիճակը բարօրութիւն ու յաջողու-
թիւն է:»

«Աշխատասէրն առաւօտեան վաղ է վեր կենում, ու
գիշերն ուշ քնում: նա իւր միտքը խորհրդածութեամբ
ու մարմինն էլ աշխատանքով է կրթում:»

«Օսյլ մարդն իւր անձին բեռն է, նորա ժամերն ուշ
ու ծանր են անց կենում:»

«Ամպի շուաքի պէս են անց կենում նորա օրերն. որոց
յիշատակին անդամ չէ կարելի մտաբերել, որպէս և հետքն
անդամ չէ կարելի գտնել:»

ԵՐԳ ԶԱՐԹՈՒՑԱՆԵԼՈՅ

(Օրօրոցի երգ:)

Օարթի՛ր, սիրո՛ւն դու իմ մանկիկ,
Քանի՛ ննջես հեծելով,
Չքնաղ դէմքիդ լոյս Արեգին
Շաճանչել է խայտալով:

Կատ օրօրներ ես երգեցի
Տխուր աշացս արցունքով,
Իա՛ց քո պայծառ արտևանունք,
Հրեշտակի վեհ նայուածքով:

Օնած օրից քո ձակատիդ
Դրոշմեցի Փրկչին Խաչ,
Որ դու լինիս միշտ անվեհեր՝
Հոգւով ազատ՝ սրաով քաջ:

Թէ վատ բախտի թշուառութեան
Դերել են քեզ տեսիլներ,
Մի՛ սարսափիր գունատ դէմքով,
Շուտ սթափի՛ր՝ ել ի վեր:

Օրօրներով շատ ննջեցիր,
Ժա՛մ է արդէն զարթնելոյ.
Օարթի՛ր, զարթիր իմ քաջ զաւակ,
Ժամ է արդէն գործելոյ.

Զգի՛ր հեռու քեղնից դու նինջ,
Դիւցազնի պէս կաց յոտին.
Պարտքդ արա ու կատարէ,
Եպա հանդիր քաղցրազին:

Կարունակ նինջ վատ է մահից,
Վ'սիրէ կեանք արթնութիւն.
Օարթիր հապա՛, իմ քաջ հոգեակ,
Քանի՛ քնես զօրն ի բուն:

Թէ կախարդներ ցանեցին
Եքեղ փոշի թմբութեան,
Դրախտահոս գետոց սուրբ ջուր
Ալտայ քեզ կեանք արթնութեան:

Ով դու անմահ երկնից Արքայ,
Դմ որդեկիս տուր զարթնել,
Քո Խաչ և Սէր ազատ գրկած
Յառաջ՝ յառաջ միշտ դիմել:

ԺՈՒ ԺԿԱԼՈՒԹԻՒՆ

Առողջութիւնն՝ իմաստութիւնն ու հոգւոր-
րութիւնն այնպիսի մի երկնատուր պարգևներ են, որք
աւելի են մօտացնում մարդուս երանութեանն այս աշ-
խարհումն:

Եթէ սոցա ստացար և կամենում ես պահպանել քեզ
մինչև ծերութեանդ հասակն, հեռացուր քեղանից ուրեմն
հեշտութեան ու զուարձութեան սուտ հրաւերը, և նոցա
յորդորանքիցն ել վախիր:

Որովհետեւ փափկակեաց զուարձութիւններն զանազան
ցաւեր կըրերեն քեզ, և կեանքդ ել մաշելով դէպ ի մահը⁶
կըտանեն շուտով:

Մտիկ տուր բոլոր ՚ի շուրջդ և տե՛ս նորա կոչունքի
հրաւիրեալներին. Տե՛ս, թէ ինչպէս հաշուած՝ մաշուած
են մարմնով, ցաւագար կեանքով, վեհերոտ (վախկոտ)
սրտով ու ամէն բանիցն ել զզուած տանջւում են:

Կեղութեան դժուարատար օրերն ու տառապանաց ժամանակը գալիս է հեշտութեան վաղանցուկ հրճուանքիցն յետոյ. ուստի խանգարում՝ պակում է քաղցն ու կերակրոյ փափազը. անուշահամ կերակուրներն էլ չեն թուում այնուհետեւ նոցա համար ախորժելի:

Եւ որովհետեւ իւրեանք իւրեանց զգայազուրկ արին, իրաւամբք կժառանգեն ուրեմն պատիմքը, որ բարձրեալն Աստուած հաստատեց բնութեան պարգևների մէջ՝ նոցա խրատելու համար. որովհետեւ երկնատուր պարզեներն այն չարաշար են գործ ածումնոքա:

Իայց ո՞վ է դա, որ զուարթ դէմքով ու սիրուն ընթացքով ձեմում է դաշտի այն կողմը:

Պոյնզզոյն վարդերը փայլում են նորա դէմքի վերայ, բերկրութիւնն ու անմեղութիւնը փայլում է նորա աչքերի մէջ, նորա ուրախ սրտից երգերի քաղթրաձայնութիւն է հնչուում, ու հանդարտ ընթացքով է ման դալիս նա:

Ըսողջութիւն է նորա անունը, ժրութեան դուստր, որ ծնաւ չափաւորութիւնից. նորա որդիքն արի զաւակներ են, ժրազըւխ ու կայտառ, ամէն վայելչութիւնով ու առաքինութիւններով զարդարած՝ ինչպէս և նոցա քոյրերն:

ԳԹՈՒԹԻՒՆ ԵԽ ԱՂԱՐՄԱՆՈՒԹԻՒՆ

Ինչպէս գարունը սփուռմ՝ տարածում է երկրիս երեսին կանաչագեղ տունկեր ու նորաբոյս ծաղիկներ, ինչպէս որ բարերեր ամառուայ առատութիւնը պարարտացնում՝ առատացնում է հունձը, այսպէս էլ և գթութեան ձիրքը բարի պարզեներ է ցողում մարդկային ազգի վերայ:

Ով որ կարեկից է լինում նեղացածին, նա սիրելի կը լինի ամենեցուն. իսկ ով անկարեկիցն է, նա չէ կարող սիրելի ու հաճելի լինիլ և ոչ ոքի:

Մասգործը (ղասարը) չէ նայում գառան խոնչելուն, և ոչ էլ անգութ սիրտը ցաւում է ուրիշների նեղութեան վերայ:

Իայց գթոս մարդոյ արտասունքը պաղաբեր է ցողի հատիկներից, որք վարդերի ծայրերից կաթում են երկրիս վերայ:

Ականջդ մի' փակեր նեղացածի ու տնանկի լացի ձայնը լսելիս, և սիրտդ էլ մի' խստացուցաներ տեսնելով նոցա թշուառ վիճակը:

Երբ անտերունչ որբն աղերսանքով ձայն տալիս լինի քեզ, երբ քաղցած ու ցաւալից աղքատն օգնութիւն խնդրէ քեզանից, բաց արա քո սրտի գումը, օգնէ նոցա, և կապրի քո անձնդ:

Երանի նորան, որ իւր սրտի մէջ տնկեց գթասիրութեան սերմը. սէր ու ողորմութիւն կըգտնէ նա:

Արութեան գետեր կըբղիսեն նորա սրտի աղբեւրից, և առատ առատ կըվազեն վտակներ մարդկանց օգտի համար:

Ողորմած մարդը ձեռք է տալիս ու մահթարում նեղացածներին թշուառութեան ժամանակը. և ուրախանում է, երբ օգնում է նոցա:

Վյլոց անիրաւ արարմունքներին ներում է, ու նոցա երախտամուռութիւնը ջնջում իւր մտքիցն:

Արէժն ու սիսակալութիւնները նորա սրտի մէջ տեղի չունին: Եթէ նորա թշնամին քաղցած է, հաց է տալիս, եթէ ծարաւ՝ ջուր:

Փոխարէն չարին չար չէ հատուցանում, և մինչեւ անգամ իւր թշնամեացն էլ չէ ատում, այլ նոցա անիրաւութեանց դէմ սէր է ցոյց տալիս:

Ա. Դ. Ք. Ա. Տ

Յուրտը փշեց, ձմեռ սաստիկ,
Զիւնը ծածկեց գետինը,

Ամենայն մարդ մտաւ իւր տուն՝ զնորդում
 Պատսպարութիւն ցրտիցը:
 Ժամի դռնում դողդողալով
 Կանգնած է մի աղքատ ծեր,
 Նորա հանդերձը պատառ՝ պատառ,
 Չունի շապիկ՝ կօշիկներ.
 Ենհամարձակ նա իւր ձեռքը
 Մեկնում է անց կացողին—
 «Ողորմութիւն արէք, պարոն,
 Ենտուն՝ անտէր աղքատին»:

 Չեզ, սիրելիք, ասեմ ով էր
 Եյս խղճալի աղքատը,
 Եյն ցրտումը՝ ոտարորիկ
 Կանգնած ժամի դռնումը.
 Հատ ժամանակ դեռ չէ անցել,
 Երբ նա փառքով ու պատուով
 Ման էր գալիս փողոցներում
 Իւր սեպհական կառքերով.
 Եյժմ վախով նա իւր ձեռքը
 Մեկնում է անց կացողին—
 «Ողորմութիւն արէք, պարոն,
 Ենտուն՝ անտէր աղքատին»:

 Ամենայն օր նորա դռնում
 Կանգնած էին շատ կառքեր,
 Միշտ հացկերոյթ՝ ընթրիք՝ զինի,
 Կուտագարան ու տաղեր.
 Ամենայն ոք ցանկանում էր
 Լինիլ նորան բարեկամ,
 Ամենայն ժամ նորան բաց էր
 Շոայլ քսակը մեծատան.

Եյժմ զըկած ամեն բանից,
 Չունի անգամ հացի զին—
 «Ողորմութիւն արէք, պարոն,
 Ենտուն՝ անտէր աղքատին»:

 Ժամի դռնումնա կանգնած է,
 Եչքերը կոր՝ վեզը Ճուկ.
 Նորա նախկին բարեկամքը
 Զեն ասում նորան, «Խղճուկ,
 Եկ դու մեզ մօս, մեք կ'ամոքենք
 Քո վիճակի դառնութիւն,
 Կը թուլացնենք Ճակատագրիդ
 Խիստ հարուածի սաստկութիւն»:
 Կա տանում է տառապելով
 Եյս սոսկալի վշտերին—
 «Ողորմութիւն արէք, պարոն,
 Ենտուն՝ անտէր աղքատին»:

Ա. Դ. Օ Թ. Ք. Մ Ա. Ն Կ Ա. Ն Ց:

«Երկնաւոր Ճայր, Քո վերայ է իմ յօյսս, դէպ
 ՚ի Քեզ եմ բարձրացնում աչքերս: Քեզ մօտ եմ ուղար-
 կում իմ աղօթքս յանուն քո միածին Որդւց և իմ
 փրկչէ, որ շատ սիրում է մանկանց: Դու տեսնում ես
 իմ սիրաս, որ ես կամենում եմ լինիլ խելօք ու բարե-
 բարոյ, լուսաւորէ՝ ուրեմն իմ միտքս Ճմարիտ իմաստու-
 թիւնով վառէ իմ սիրաս բարի սիրով:
 Ուղարկէ՝ Քո պահապան հրեշտակդ, որ ինձ յամենայն
 չարեաց պահպանելով՝ տայ հաստատ միտք ու կամք:
 Ճաստատէ սրտիս մէջ այն միտքը, թէ ես ամենուրեք՝
 ուր և լինիմ, միշտ Քո առաջիդ եմ, և ո՛չ թէ իմ
 գործքերս միայն, այլ և ծածուկ մտքերս և իմ բոլոր

ցանկութիւններս յայտնի են Վեղ: Հաստատէ՛ մտքիս
մէջ և այն՝ թէ Դու այժմ իմ Հայրս ես, բայց մէկ
ժամանակ կը լինիս իմ դատաւորս, ու կըպահանջնես
ինձանից իմ գործքերիս հաշեւը: Վո սուրբ օրէնք-
ներդ հաստատուն կանոն թող լինին իմ կենացս մէջ
սորանից աւելի ուրախութիւն ու մեծ ցանկութիւն չկայ
ինձ համար: Երկնաւոր Հայր, առանց Վեղ մէկ տկար
արարած եմ, ես չեմ կարող ընդդիմանալ չարին ու չեմ
կարող կատարել ոչ մի բարի գործ: Բայց Վո գործակ-
ցութեամբդ ու հովանաւորութեամբդ կը կատարեմ իմ
ծնողացս ցանկութիւնը, բարի քրիստոնեայ կը լինիմ ու
օգտակար որդի հայրենեաց: Ալ սիրեմ իմ հայրենիքս
ու ազգս, որչափ կարողանամ: Միշտ հաւատարիմ կը-
մնամ հայրենեացս ու հաւատիս էլ հաստատ: Հաւատոյ
և առաջինութեան ճանապարհով կը հասնեմ յաւիտենա-
կան կենաց, որ իմ Փրկիչս պատրաստել է ինձ համար:

ԵՐԳ ՄԵՌԱՆՈՂ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԻ

Ազնիւ ընկեր, մեռանում եմ,
Բայց հանգիստ եմ ես հոգւով.
Իմ թշնամիքս ես օրհնում եմ,—
Օրհնում եմ քեզ Աստուծով:
Հեռանում եմ, անդին ընկեր,
Չգնահատուած ոչ ոքից.
Բայց հաւաստեաւ անձնանուէր
Ազգիս մշակ կ'հաշուիմ:
Ազնիւ ընկեր, չը մոռանաս,
Անդաւածն՝ ջերմ սիրով
Ես սիրել եմ իմ հայրենիք,—
Պնա և դու նոյն շաւղով:

Խեղծութիւնը Հայոց ազգի
Կարեկցաբար մտածիր,
Ոսկէ գրքոյկն Եղեշէի
Վաջ առաջնորդ քեզ Ընտրիր:
Այնտեղ սուրբ կրօն՝ ազգ միաբան
Ազատ կամքով ու խիղճով,
Այնտեղ Ապահան, անմահ Ապադան,
Խւր ինկելի Վաջերով:
Իմ մուերիմ, մահըս մօտ է,
Բայց հանգիստ եմ ես հոգւով.
Որովհետեւ խիղճն արդար է,
Ճշմարտութեան ջատագով:—

ՍՈՒՐԲ ԳԻՐԻՆ ՈՒ ԵԿԵՂԵՑԻ

«Ապահառանքով վեր առ ձեռքի Աստուածաշունչ
Սուրբ Գիրքը», ասում էր ծերունի պատն իւր թոռա-
նը, «վասն զի նա պարունակում է իւր մէջ Աստուծոյ
խօսքերը: Իմացի՛ր, որ Աստուածաշունչ Սուրբ Գիրքն է:
առաջնորդ՝ օգնական ու միսիթարիչ նոցա, որք չունին
առաջնորդ իւրեանց կենաց վտանգաւոր ճանապարհի
վերայ, նոցա՝ որք չունին միսիթարութիւն իւրեանց
հիւանդութեանց ու նեղութեանց ժամանակին, նոցա՝
որք չունին ամենելին օգնութիւն իւրեանց կենաց վեր-
ջին ժամումը: Իմացի՛ր որ Աստուածաշունչ Սուրբ Գիր-
քըն այնպիսի մի մայր է, որ մնուցանում՝ պահպանում է
իւր բոլոր հաւատացեալ զաւակներին մինչև որ նոքա
աճեն՝ զօրանան ու վերին աշխարհի քաղաքացի դառնանա
«Սուրբ է Եկեղեցին, սիրելի զաւակս, ու տեղի ջեր-
մեռանդութեան. զի ոչ թէ աշխարհական պաշտօնի հա-
մար է շինած ու մարդկան բնակարան, այլ Աստուծոյ և

Նորա պաշտօնին նուիրած: «Այս է աներևոյթ եկեղեցւոյ
կամ Կատոլիկոս արքայութեան պատկեր, Հոգեոր դպրոց
ժամանակի և մշանջենաւորութեան համար, Հոգւոյն
Արքոյ գործատուն, նեղացած Հոգւոց պատսպարան, Եր-
կոքի նախագաւիթ: Ոուրեմն՝ սիրէ Սուրբ Գիրքը,
սիրէ քո Սուրբ Եկեղեցիդ, որդեակ, որ բարի լինի քեզ
և կարողանաս գտանել երջանկութիւն թէ այս՝ և թէ
այն կեանքումը:»



ՑՈՒՑԱԿ ԽՈՒԹԵՆ ԳՐԱԿԱՐԻ (*)

Х Ушинский Азбука родного слова	6
— Родное слово безъ азбуки	30
Х — г. 1-й съ азбukoю	35
— г. 2-й II. кн. послѣ азбуки.	35
— г. 3 ІІ Грамматика	60
Дѣтскій міръ ч. 1-я и 2-я по.	60
Руководство къ Родному слову 2 части	70
Х Паулсонъ Букварь	5
— Первая учебная книга	25
— Вторая учебная книга	40
— Книга для чтения и рассказа.	50
Х Корфъ Малютка	40
Х — Нашъ другъ	55
Х Водовозовъ Азбука и первая кн. послѣ азбуки	35
— Книга для чтения.	50
Кандратенко черчень по кляткамъ	40
Лихачевъ Транснарвъ	5
Х Шаминъ Русскія прописы для воскрес. школъ	20
Х — Прописы по Американской методѣ	22
Х Гербачъ Прописы для народныхъ школъ	10
Х Глазовскій Русскія прописы	7
Евтушевскій Задачи ч. 1-я и 2-я по	35
— Руководство для учителей	85
— Методика арифметики	1 65
Малининъ Арифметика	85
— Задачи	55
Воленсь Арифметика	65
— Собраниі ариф. задачъ	45
Семеновъ Дарь слова	45
— Географія 3 части по	55
Кариель Начальная географія	1 40
Смирновъ Географія часть 1-я	40
— — — — — часть 2-я и 3-я по	60
Крашевъ Васимъ	55
Ильинъ Атласъ изъ 9 картъ	55
— — — изъ 17 картъ	1 10
— — — изъ 24 картъ	1 65
— — 5-ти частей свѣта	2 20
Шевельевъ Карта 5-ти частей свѣта наст., на хол.	8 50
Симашко Атласъ	3 90
Сидовъ Атласъ	3 90
Юрданъ Атласъ Географический	1 10
Говоровъ Элементарная грамматика 2 части по	55
Кирничниковъ Грамматика 2 части по	45
Востоковъ Сокращен. грамматика	15
Антоновъ Рус. грамматика	85

(*) Թէ: Անգլիա և Ֆէ: Հայկեն գրքերի բնագրածկ գործութ տան-
կացովները կարող են դիմել մեր գրառութ.

Գիրն է

Գումարով՝ առնողների համար 20 կոտ,
Հասով՝ առնողների համար 25 կոտ.

4394

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0061048

